

ԱՐԵՒՏՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՊԻՉԼԻՄԻ ԱՀԱՎԻՔԻ  
ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԹԻՒԾ  
ՄԵԾ ԵՂԵՌԻ ԱՄԻՕՐԵԱԿԻՆ

ՈՒԲԵՐՏ ԹԱԹՈՅՑԵԱՆ





## ՌՈԲԵՐՏ ԱՐԱՄՎՅԻՍԻ ԹԱԹՈՅԵԱՆ

Ծնուել է 1976-ին Երևանում:

1997-ին, գերազանցութեամբ աւարտել է Խ. Արովեանի անուան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմութեան և աշխարհագրութեան ֆակուլտետի պատմութեան բաժինը:

1997-2002-ին, ուսանել է ՀՀ ԳԱԱ Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-ինստիտուտի ասպիրանտորան, և միաժամանակ, 1999-2001 սովորել է ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիայում:

2013 թուականից աշխատում է Հայոց Ցեղասպանութեան-Թանգարան-ինստիտուտում որպէս առաջ գիտաշխատող:

2015-ին, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական աստենախօսութիւն «Արևմտահայութեան քուարանակի վերաբերեալ Օսմանիան կառավարութեան և Կ. Պոլսի հայոց պարզութարարակի վիճակագրական դրւեալները հայկական հարցի համարկելուն (1878-1914 թթ.)» թեմայով:

Հեղինակել է երեք տասնեակից առևի գիտահետազօտական յօդուածներ, որոնք նույրուել են Հայոց ցեղասպանութեան նախօրեակին Արեւմտեան Հայաստանի ժողովրդագրութեանը, կրօնական և մշակութային կենարքին, և Հայոց ցեղասպանութեան հետեւանքով արեւմտահայութեան կրած մարդկային ու նիւթական կորուստներին:

ԱՐԵՒՏԵԱՆ ՀԱՅԱՏԱՐԻ  
ՊԻՉԼԻՄԻ ՆԱՀԱԳԻ  
ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԹԻՒ  
ՄԵԾ ԵՂԵՐՆԻ ՆԱԽՈՐԵԱԿԻ

*Հրապարակութիւն*  
**Հ.Բ.Բ.Միութեան ՎԱՀՐԱՄ ԱՊՏԱԼԵԱՆ ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ**

Գնահատիչ Յանձնախումբ **Գերապայծառ Լեւոն Աբբ. Զերիեան**  
(պատույ Անդամ)

**Վիգեն Լեւոն Աղքարեան**

**Արծուի Թախչինեան**

**Յովիկ Էօրտէրեան**

**Դոկտ. Անդրանիկ Տագէսեան**

**Համալրող Ցոլակ Ապտալեան**

**Կողը և ենթախորագիրեր Համօ Ապտալեան**

Ներկայ աշխատասիրութիւնը կը վայելէ երաշխատրութիւնը Հայոց  
Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի Գիտական Խորհուրդին

**Robert Tatoyan**

**THE NUMBER OF ARMENIANS IN THE VILAYET OF BITLIS, WESTERN ARMENIA,  
ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE**

© 2022 Ռոբերտ Թաքոյեան  
Ամէն իրաւունք վերապահուած է հեղինակին

Ոչ մէկ մասնակի կամ ամբողջական իրատարակութիւն թոյլատրելի է առանց  
գրատր արտօնութեան:

ISBN: 978-9953-475-07-3

g(47.925)

78-15

h2

ՈՒՐԵՐՏ ՇԱՇՈՅԵԱՆ

6492

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՊԻՉԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ  
ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԹԻՒԾ  
ՄԵԾ ԵՂԵՐԵԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

2022

Նուիրում եմ մօրս՝ Անժելա Ղուշեանի յիշարակիա

*Ընորհակալութիւն եմ յայլուում պատմական զիւռութիւնների թեկնածու Տիգրան  
Մարտիրոսիանին՝ սոյն ուսումնասիրութեան բարեկամանն ուղղուած բազմաթիւ արժէքաւոր  
դիվողութիւնների եւ առաջարկութիւնների համար:*

*Երախրապարտ եմ ՀՀ ԳԱՍՏ Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի  
յուշագրութիւնների, վաւերագրերի եւ մամուլի ուսումնասիրութեան բաժնի վարիչ Միհրան  
Միհնասիանին՝ ուսումնասիրութեան մէջ արծարծուող հարցերի վերաբերեալ լրացուցիչ  
աղբիւրներ առաջարկելու, ինչպէս նաև ճեղազիր փաստաթղթերում գրուող  
գրելաձնները ճշգրիտ հարցում օգնելու համար:*

*Ընորհակալ եմ Փարիզի ՀԲՀՄ Նուպարեան Մարենադարանի վարիչ Բորիս Ամենանին՝  
թեմային վերաբերող առանցքային փաստաթղթերի՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913ի  
վիճակացույցի՝ Պիրլիսի նահանգի թեմերի հարցարքերի պատճենները գրամադրելու համար:*

*Ընորհակալ եմ «Յուշամարտեան» նախագծի համակարգող Վահէ Թաշճեանին՝ կարեւոր  
սկզբնաղբիրի՝ Մշոյ թեմի հայ բնակչութեան 1902ի հաշուածման գիրքակի պատճենը  
գրամադրելու, ինչպէս նաև աշխատանքը՝ դասական ուղղագրութեան  
փոխադրելու գործում օգնելու համար:*

*Յանկանում եմ նաև երախրագիւռութիւնն յայլնել Պէյրութի Հայկագեան Համալսարանի  
Հայկական Սփիտորի Ուսումնասիրութեան Կեղրոնի լուսորէն Անդրանիկ Տագէսեանին՝  
սոյն ուսումնասիրութեան խմբագրումը սպանձնելու համար:*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երախտագիտութեան խօսք	6
Ա. Աշխատանքի նպատակը եւ խնդիրները	9
Բ. 1878–1914՝ Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան քուի վերաբերեալ վիճակագրական աղբիւրների ընդհանուր բնութագիր	13
Գ. 1878–1914՝ Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան քուի վրայ ազդեցութիւն ունեցած գործօնները	21
Դ. Պիրլիսի նահանգի վարչատարածքային բաժանումը 1878–1914ին	49
Ե. Օսմանեան իշխանութիւնների վիճակագրական տուեալները Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան քուի վերաբերեալ (1878–1914)	53
Զ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի եւ այլ հայկական սկզբնաղբիւրների վիճակագրական տուեանները Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան քուի վերաբերեալ (1878–1914)	59
Է. Ռուս եւ արեւմտեան ուսումնասիրողների վիճակագրական տուեալները Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան քուի վերաբերեալ (1878–1914)	67
Ը. Մեծ Եղեռնի նախօրեակին Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան քուի՝ ժամանակակից ուսումնասիրողների հաշուարկներ	71
Թ. Պիրլիսի նահանգի այլազգի բնակչութեան քուի վերաբերեալ վիճակագրական տուեալները	73
Ժ. Մեծ Եղեռնի նախօրեակին Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան քուի հաշուարկի մեթոդաբանութիւնը	79
ԺԱ. Մեծ Եղեռնի նախօրեակին Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան քուի հաշուարկ	83
1. Պիրլիսի գաւառ	83
1.1. Պիրլիսի գաւառակ	83
1.2. Խլաքի գաւառակ	90
1.3. Մօտկանի գաւառակ	94
1.4. Խիզանի գաւառակ	102

2. Մուշի գալաք	111
2.1. Մուշի գալաքակ	111
2.2. Սասունի գալաքակ	116
2.3. Մամազկերտի գալաքակ	127
2.4. Պուլանըսի գալաքակ	132
2.5. Վարդոյի գալաքակ	136
3. Կէնճի գալաք	140
3.1. Կէնճի գալաքակ	140
3.2. Շապաղուրի գալաքակ	143
3.3. Խովփի գալաքակ	145
4. Սղերդի գալաք	152
4.1. Սղերդի գալաքակ	153
4.2. Շիրվանի գալաքակ	155
4.3. Խարզանի գալաքակ	157
4.4. Էրուիի գալաքակ	162
4.5. Պէրվարի գալաքակ	164
ԺԲ. Հաշուարկի ամփոփում եւ եզրակացութիւններ	167

Պիբլիսի նահանգի քարտեզ	169
Յաւելուած	171
Յանկ աղքիրների	181
Յանկ տեղանունների	191

## Ա. Աշխատանքի նպատակը և խնդիրները

Հայոց Ցեղասպանութեան նախօրեակին արեւմտահայութեան, նրա տարրեր հատուածների, այդ բում՝ Պիրլիսի (Բաղէշ) նահանգի<sup>1</sup> հայ բնակչութեան բուաքանակի, Արեւմտեան Հայաստանում իսլամադաւան ազգարնակչութեան նկատմամբ հայերի յարաբերակցութեան հարցերը շարունակում են մնալ Հայկական Հարցի և Հայոց Ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան առաւել կնճռոտ հարցերից մէկը:

1878ի Քեռվինի պայմանագրի 61րդ յօրուածով օսմանեան իշխանութիւնները պարտաւորուեցին «առանց յետագայ յապահման իրագործել հայարնակ մարզերում տեղական կարիքներից յարուցուած քարելաւումներն ու քարենրոգումները»<sup>2</sup>: Այս պարտաւորութիւնը ստանձնելու պահից սկսած՝ սուլթան Աբդուլ Համիդ Բ.Ռ. ապա նաեւ երիտրուքական կառավարութիւնը, ասպարէզ համելով նորանոր վիճակագրական տուեալներ, փորձում էին «համոզել» հայկական քարելարգումների իրականացման երաշխաւոր մեծ տէրութիւններին, որ Օսմանեան Կայսրութիւնում «հայարնակ մարզեր» գոյութիւն չունեն, հայերը երկրի «արեւելեան վիլայէթներ»ում չնշին փոքրամասնութիւն են կազմում: Իրենց հերթին, արեւմտահայութիւնը ներկայացնող հիմնական ազգային կառոյցը՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը, ինչպէս նաեւ Հայկական Հարցի լուծումը հետապնդող հայկական հասարակական-քաղաքական այլ կառոյցներն ու գործիշները հակադարձում էին օսմանեան իշխանութիւնների այդ պնդումներին՝ ասպարէզ հանելով արեւմտահայութեան բուաքանակի և Արեւմտեան Հայաստանի ազգարնակչութեան երիշկական կազմի սեփական հաշուարկներ:

<sup>1</sup> Ի. դարի սկզբներին Օսմանեան Կայսրութեան տարածքը տրոհուած էր վարչատարածքային հետեւեալ միաւորների (ըստ հերքականութեամբ՝ խոշորից մանր).- վիլայէթ (պատմագիտական գրականութեան մէջ հայերէն համարժէք եզրոյը՝ նահանգ), սանչակ (գաւառ), կազմ (գաւառակ), մահիէ (գիլախտում): Սոյն աշխատանքում հիմնականում օգտագործում են վերոնշեալ միաւորների հայերէն անուանումները:

Պիրլիսի նահանգի հայարնակ բնակավայրերի անունների ուղղագրութեան հարցում հետեւել ենք Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի մարդահամարների ցուցակներում, երբեմն այլ ցանկերում ընդունուած գրելածելին (տե՛ս նաեւաշխատանքի «Մեծ Եղեռնի նախօրեակին Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան բուի հաշուարկի մերողարանութիւնը» քամինը): Արեւմտեան Հայաստանի նահանգային կենտրոնների անունները օգտագործել ենք արեւմտահայ հնչինարանութեամբ (Պիրլիս, Տիարպէրի), օտար տեղանունները և յատուկ անունները՝ արեւելահայ հնչինարանութեամբ: Մի շարք եզրերի եւ անուանակոչումների դէպքում (սանչակ, եղիշ եւն.) պահպանել ենք ՀՀ գիտական գրականութեան մէջ օգտագործուղ ընդհանրացած տարրերակը:

<sup>2</sup> Քեռվինի պայմանագրի 61րդ յօրուածը մէջքերուում է ըստ Հայաստանը միջազգային դիամագիլութեան և սովորական արդարին քաղաքականութեան փաստարդերում (1828–1923), խմբ՝ Զ.Ս. Կիրակոսեան, «Հայաստան» հրատ., Երևան, 1972, էջ 128:

Արեւմտահայութեան թուաբանակի հարցի շորջ ընթացող այս «վիճակագրական առճակատում»ը դրսեւորում ներ է ունեցել 1878ից առ 1914՝ Հայկական Հարցի արծարծման բոլոր հանգրուաններում, ինչպէս նաև առաջին աշխարհամարտից յետոյ հաշտութեան պայմանագրի շորջ ընթացող բանակցութիւնների ընթացքում:

Հայկական Հարցի միջազգային դիանագիտական ասպարեզից իջնելուց յետոյ, Օսմանեան Կայսրութիւնում հայ բնակչութեան թուաբանակի հարցը ձեռք է բերել նոր որակ՝ շաղկապուելով Յեղասպանութեան զոհ գնացած հայերի թոփ շորջ ընթացող պատմագիտական եւ քաղաքական բանավէճին, որը պայմանաւորուած է ներկայիս Թուրքիայի իշխանութիւնների, ինչպէս նաև թուրքական պաշտօնական պատմագիտութեան որոշ ներկայացուցիչների՝ Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը նաև ժողովրդագրական «փաստարկներով» ժխտելուն ուղղուած կեցուածքով<sup>3</sup>:

Ներկայ աշխատանքի նպատակն է վիճակագրական աղբիւրների տուեալների համեմատական վերլուծութեան միջոցով եւ հիման վրայ կատարել Հայոց Յեղասպանութեան նախօրեակին Օսմանեան Կայսրութեան Պիրլիսի նահնգի հայ բնակչութեան թուաբանակի հաշուարկ:

Վերոնշեալ նպատակից բիւել են հետազօտական հետեւեալ հիմնական խնդիրները.-

1. Տալ Հայկական Հարցի 1878ին միջազգային դիանագիտութեան օրակարգ մտնելուց առ 1914 առաջին աշխարհամարտի սկիզբ ընկած ժամանակաշրջանում Պիրլիսի նահնագի հայ բնակչութեան թուաբանակի վերաբերեալ տուեալներ հաղորդող առկայ վիճակագրական հիմնական սկզբնաղբիւրների ընդհանուր բնութագիրը.
2. Ներկայացնել 1878–1914՝ նահնագի հայ բնակչութեան թուաբանակի վրայ ազդեցութիւն ունեցած գործօնները, անդրադառնալ Արեւմտեան Հայաստանում օսմանեան իշխանութիւնների կողմից իրականացուող վարչաժողովրդագրական քաղաքականութեանը, ներկայացնել, թէ ինչպէս է այն արտացոլուել Պիրլիսի նահնագի հայ բնակչութեան թուաբանակի վերաբերեալ առկայ վիճակագրական նիւթի մէջ.
3. Ներկայացնել 1878–1914՝ Պիրլիսի նահնագի վարչատարածքային բաժանումների պատմութիւնը.
4. Խնդրաւորուած կերպով ներկայացնել եւ վերլուծութեան ենթարկել Պիրլիսի նահնագի հայ բնակչութեան թրամանակի վերաբերեալ 1878–1914՝ օսմանեան, հայկական, ոուսական եւ արեւմտեան հիմնական սկզբնաղբիւրների տուեալները.
5. Անդրադառ կատարել Պիրլիսի նահնագի տարածքում բնակուող այլ ազգութիւնների թուաբանակի հարցին, այդ նպատակով ներկայացնել եւ վերլուծութեան ենթարկել այլ ազգութիւնների թուաբանակի վերաբերեալ հիմնական վիճակագրական սկզբնաղբիւրների կողմից հաղորդուող տուեալները.

<sup>3</sup> Ոռերտ Թարոյեան, «Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակին Օսմանեան Կայսրութիւնում հայ բնակչութեան թուաբանակի խնդիրը թուրքական պատմագրութեան մէջ», Հայոց Յեղասպանութեան պալմութեան եւ պալմագրութեան հարցեր, 2002:5, էջ 116–25:

6. Համադրել Պիթլիսի նահանգի հայաբնակ բնակավայրերի ցուցակներ պարունակող հիմնական վիճակագրական սկզբնադրիքների տուեալները ըստ նահանգի մանր վարչատարածքային միաւորների՝ գտառակների, այդ համադրման միջոցով եւ հիմնան վրայ կատարել Մեծ Եղեռնի նախօրեակին Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան բուաբանակի սեփական հաշուարկ:

Պիթիսի նահանգի հայ բնակչութեան թուաքանակի հարցի ուսումնասիրութիւնը կարեւորում է յատկապէս այն նկատառումով, որ այն՝ Վանի, Էրզրումի, Տիարպերիրի, Խարբերդի և Սերաստիայի նահանգների հետ միասին, Հայկական Հարցով նախատեսուղ քարեփոխումների ենթակայ Արեւմտեան Հայաստանի տարածքի՝ այսպէս կոչուած «Վեց նահանգներ»ից մէկն էր, իսկ նահանգի կազմի մեջ մտնող շրջաններից յատկապէս Մուշն ու Սասունը ԺԹ. դարի երկրող կէս-ի. դարի սկզբներին հայկական ազգային-ազատազրական պայքարի, արեւմտահայութեան ազգային, հասարակական-քաղաքական, կրթամշակութային եւ կրօնական կենացքի առանցքային կենտրոններից էին:

Ներկայ աշխատութեան մէջ քննութեան առնուած խսդիրներն իրենց ժամանակագրական ընդգրկմամբ եւ արձարծուող հարցերի ամբողջականութեամբ առաջին անգամ են զիտական ուսումնասիրութեան առարկայ դառնում: Աշխատանքի մէջ օգտագործուել է փաստաթղթերի լայն շրջանակ, առաջին անգամ զիտական շրջանառութեան մէջ են դրուել հարցին վերաբերող նոր սկզբանադիրների տուեալներ, այդ թում՝ նոր վիճակագրութիւններ:

## **Բ. 1878–1914՝ Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան քուի վերաբերեալ վիճակագրական աղբիրների ընդհանուր բնութագիր**

Ինչպէս Արեւմտեան Հայաստանի ու Օսմանեան Կայսրութեան այլ նահանգների, այնպէս էլ Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան քուարանակի վերաբերեալ վիճակագրական աղբիրներն ուսումնասիրելու ժամանակ, հետազոտողը բախտում է մի շարք խնդիրների, որոնք էապէս դժուարացնում են հարցի ուսումնասիրութիւնը։ Նշենք դրանցից հիմնականները։

### **1. Վիճակագրական նիւթի սակաւութիւնը, ոչ-շարունակական բնոյթը ու ցրուած լինելը**

Ուսումնասիրութեան առարկայ ժամանակաշրջանում արեւմտահայութեան տարրեր հաշուառումների, 1878–80ի, 1913–14ի Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի մարդահամարների<sup>1</sup> անցկացումը բացառապէս կամ մեծ չափով դրուած էր տեղերում հայկական եկեղեցական-թեմական կառոյցների, Պիրլիսի նահանգի պարագայում Բաղէշի, Մշոյ և Սղերդի առաջնորդարանների, ինչպէս նաև Աղքամարի կարողիկոսարանի<sup>2</sup> վրայ։ Անկասկած վերոնշեալ գործունեութեան արդինքում նշուած կառոյցների արխիմետում պէտք է պահուէր հարուստ վիճակագրական նիւթ, որը սակայն մեզ չի հասել՝ Հայոց Ցեղասպանութեան տարիներին առաջնորդարանների եւ ազգային այլ կառոյցների արխիմետի կողոպտումի եւ/կամ ոչնչացման հետեւանքով։ Ներկայ դրութեամբ մեզ հասել է միայն առաջնորդարաններից Կ. Պոլսի Հայոց պատրիարքարան ուղարկուած վիճակագրական նիւթը, այն էլ ոչ-ամբողջութեամբ՝ այն ծավորվ, որով պատրիարքարանից այդ նիւթը տրամադրուել է այլ կառոյցների ու անհատների եւ դրանով ի վերջոյ հանգրուանել տարրեր արխիմետում (ՀԲԸ Նուպարեան Մատենադարանի Հայ Ազգային Պատուիրակութեան Արխի (ՀԲԸ ՆՄԱ), Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի (ԳԱԹ) արխիտում Թորոս Ազատեանի ֆոնդ եւն։)։ Նշուած եւ այլ պահոցներից դեռեւ անտիպ վիճակագրական նիւթի հայրայրում՝ արեւմտահայութեան ժողովրդագրութեան հարցերով զրադուող ուսումնասիրողի առջեւ ծառացած զիսաւոր մարտահրաւերներից է։

<sup>1</sup> Օսմանեան կառավարութեան, այնպէս էլ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից կազմակերպուած մարդահամարները շնչ համապատասխանում ժամանակակից մարդահամարների պահանջներին։ Դրանք համբնիանուր եւ ընդգրկուն չէին, չէին ներառում առանց բացառութեան բոլոր շրջանները եւ դրանց բնակչութիւնը, բնակչութեան հաշուառումը չէր իրականացում միասնական նոյն մեթոդներով, ծրագրով եւ կանոններով, չէր ապահովում հաշուառման միաժամանակութեան սկզբունքը եւն։ (Մարդահամարների անցկացման ժամանակակից սկզբունքների մասին տե՛ս օրինակ՝ Հ. Լ. Անտոնովա, *Демография*, Издательство Уральского университета, Екатеринбург, 2014, էջ 21–22. նաև՝ Լ. Պ. Խարչենկո, *Демография*. Учебное пособие, Омега-Л, Москва, 2006, էջ 47–48)։

<sup>2</sup> Կառոյցի իրաւասութեան տակ էր Պիրլիսի նահանգի Պիրլիսի գաւառի կազմում ընդգրկուած Խիզանի գաւառակը։

եւ այն բազմապատկել տների ընդհանուր քուին: Արեւմտահայոթեան ժողովրդագրական հարցերով գրաղուող տարբեր ուսումնասիրողներ որպէս մէկ տանն ընկնող շնչերի միջին թիւ ընդունել են 6, 7 կամ 8: Կարծում ենք, որ Պիթլիսի նահանգի պարագայում վերջին թիւը առաւել մօտ է իրականութեանը՝ այն անգամ պէտք է ընդունել որպէս նուազագոյն թիւ: Դա մենք կարող ենք փաստել ելնելով հետեւեալ երկու հիմնական նկատառումից:-

1. Աղբիւրներում բազմաթիւ են վկայութիւնները Արեւմտեան Հայաստանի, յատկապէս Պիթլիսի, Սասունի և Մուշի շրջաններում բնակուող հայ ընտանիքների բազմանդամութեան վերաբերեալ<sup>4</sup>:
2. Այն դէպքում, երբ պատրիարքարանի կողմից իրականացուած մարդահամարի տուեալը պարունակում է ե՛ ծխերի, ե՛ շնչերի թիւը՝ մէկ տանն ընկնում է միջինը 8, 9, անգամ 10 շունչ (աւելի մանրամասն՝ աշխատանքի ըստ գաւառակների տուեալները պարունակող համապատասխան բաժիններում):

Տուեալ փարչական միաւորի համար մէկ տանն ընկնող շնչերի միջին թիւը որոշելու անհրաժեշտութեան դէպքում՝ ընտրել ենք տարբերակուած մօտեցում՝ հիմնուելով աղբիւրների կողմից հաղորդուող տեղեկութիւնների ուսումնասիրութեան վրայ:

#### **4. Վոկայ վիճակագրական նիւթի ոչ-համաշափ բաշխուածութիւնը եւ հակասականութիւնը**

Ինչպէս Արեւմտեան Հայաստանի այլ նահանգների, այնպէս էլ 1878–1914<sup>4</sup> Պիթլիսի վիլայեթի հայ բնակչութեան բուաքանակի ուսումնասիրութեամբ գրաղուող հետազօսողի առջեւ ծառացած խնդիրներից է առկայ վիճակագրական նիւթի ոչ-համաշափ բաշխուածութիւնը ըստ նահանգի առանձին փարչատարածքային միաւորների: Եթէ մի շարք փարչատարածքային միաւորների համար ունենք նշուած ժամանակաշրջանին վերաբերող միքանի գուգահեռ գիւղացուցակներ, ապա այլ շրջանների պարագայում տուեալները սակաւ եւ ոչ-ամբողջական են: Շատ դէպքերում տուեալ աղբիւրի հաշուառումից դուրս են քողնուած առանձին բնակավայրեր, անգամ՝ գիւղախմբեր, շրջաններ ու գաւառակներ. այլ դէպքերում աղբիւրի հեղինակը իր տրամադրութեան տակ չունենալով համապատասխան գիւղացուցակի տուեալ, ստիպուած է փարչական միաւորի բնակչութեան բուաքանակի եւ էթնիկական կազմի հաշուառկ կատարել՝ հիմնուելով այլ աղբիւր(ներ)ի տուեալների վրայ (մասնաւորապէս, Մաեսլին նման կերպ է փարում Սղերդի եւ Կէնճի գաւառների պարագայում օգտագործելով Քիննի տուեալները):

Հայկական, ոռուսական եւ արեւմտեան աղբիւրներում Պիթլիսի նահանգի՝ վիճակագրական առումով առաւել լիարժեք ներկայացուած շրջաններն են յատկապէս Խլարի գաւառակը (Պիթլիսի գաւառ), Մշոյ դաշտը (Մուշի գաւառի Մուշի գաւառակ), Մանազկերտի գաւառակը (Մուշի գաւառ), իսկ համեմատաբար կցկուուր եւ ոչ-ամբողջական՝

<sup>4</sup> Դիա մասին մանրամասն տե՛ս՝ Ռոբերտ Թարոյեան, Արեւմտահայոթեան բուաքանակի հարցը 1878–1914 բուականներին, ՀՅԹԻ հրատ., Երեւան, 2015, էջ 33–34:

Սասունը (բաժանուած էր տարրեր վարչական միաւորների միջև) եւ Սղերդի գաւառը:

Առանձին վարչական միաւորների պարագայում առկայ վիճակագրական նիւթը յաճախ հակասական եւ իրարամերժ է: Դա արտայայտուում է ինչպէս մէկ աղբիրի կողմից հաղորդուող բնակավայրի մասին մէկ այլ աղբիրուում յիշատակութեան բացակայութեան տեսքով (այսինքն զիտերի անոնները չեն երկրորդուում), այնպէս էլ մէկ բնակավայրի մասին երկու աղբիրների հաղորդած քուային տուեալների միջև մեծ տարրելութեամբ:

Յաճախ որեւէ վարչական միաւորի վերաբերեալ առկայ տուեալները այն աստիճանի են իրար հակասում, որ հարցով զբաղուող ուսումնասիրողները ներկայացնուում են երկու զիտացուցակի տուեալները գուահենարար, առանց որեւէ փորձի՝ դրանք մեկնարամնելու եւ հաշտեցնելու (օրինակ, հարցին բացատեղեակ Կարօ Սասունին իր Պարմութիւն Տարօնի աշխարհի ուսումնասիրութեան մէջ ներկայացնուում է Սօսկանի գաւառակի (Պիթլիսի նահանգի Պիթլիսի գաւառ) երկու զիտացուցակներ՝ ըստ Ա.-Դոյի եւ ըստ Վ. Պետոյեանի)<sup>5</sup>:

Նման խառնաշփոթը ունի ինչպէս առարկայական՝ պայմանաւորուած օսմաննեան կառավարութեան հայահալած քաղաքականութեան հետեւանքով յատկապէս Պիթլիսի նահանգում արագ ընթացող բացասական ժողովրդագրական գործընթացներով (դրա մասին աւելի մանրամասն՝ յաջորդ բաժնուում), այնպէս էլ ենթակայական պատճառներ (հայ բնակչութեան թիւր իրականից բարձր կամ ցածր ներկայացնելու ծգուում<sup>6</sup>, անտեղեակութիւն, խառը բնակավայրի տների կամ շնչերի ընդհանուր թիւր որպէս զուտ հայ բնակչութեան թիւ ներկայացնուում եւն.):

Պիթլիսի նահանգում վիճակագրական տուեալների հաւաքմանը խոշընդոտուում էին նաեւ դժուարամատչելի տեղանքը, հաղորդակցական ուղիների ծայրայեղ թերզարգացած վիճակը, քրդերի յարուցած արգելքները<sup>7</sup> եւն.:

Պիթլիսի նահանգին վերաբերող վիճակագրական նիւթում հանդիպող հակասութիւնների պատճառ կարող են

<sup>5</sup> Կարօ Սասունի, Պարմութիւն Տարօնի աշխարհի, Տարօն-Տուրութեան հայրենակց. միուր. կեդր. վարչ., տպ. Սեւան, Պէյրուք, 1956, էջ 345, 378:

<sup>6</sup> Ինչպէս արդէն նշել էինք, Բեռլինի պայմանագրի 61րդ յօդուածով «հայարնակ մարզեր»ում նախատեսուած բարեփոխումների իրականացնումից խուսափելու նկատառումով՝ օսմաննեան իշխանութիւնները շահագրուուած էին իրականից ցածր տարու Արևմտեան Հայաստանի նահանգների հայութեան թիւր: Նոյնպէս եւ հայերը՝ հարկերից (յատկապէս «քեղել-ի ասթերի» զինուրագրութեան տուրքից) խուսափելու նպատակով, հակուած էին բարցնել սեփական թիւր (մանրամասն տես' Թարոյեան, Արևմտահայութեան բուսաբանակի հարցը, էջ 64-70):

<sup>7</sup> Որոշ դէաքերում քրդերը խոշընդոտուում կամ էապէս դժուարացնուում էին օսմաննեան եւ հայ հաշուառողների մուտքը իրենց վերահսկողութեան տակ զտնուող շրջաններ եւ բնակավայրեր: Այսպէս, քրդերը խոշընդոտել էին Գարեգին Սրուանձտեանցի աշխատանքները, որը հայ բնակչութեան մարդահամար անցկացնելու նպատակով 1878ին ճանապարհորդել էր Արևմտեան Հայաստանի գաւառներով (Տիգրան Մարտիրոսեան, Պոլանքիսի բազա. ժողովրդագրութիւն, աղցան <http://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofbulanik/locale/kazaofbulanikdemography.html> (ոյտուած է 29.11.2017)):

լինել նաեւ 1878–1914<sup>8</sup> նահանգի կազմում ընդգրկուած վարչական միաւորների սահմանների վերաձեւումները: Նշուած ժամանակաշրջանում օսմանեան իշխանութիւնները փոփոխութիւնների էին ենթարկում Արեւմտեան Հայաստանի նահանգների - այդ թում նաեւ Պիրլիսի նահանգի - ներքին վարչական սահմանները՝ ելնելով նաեւ քաղաքական նկատառումներից: Սահմանների փոփոխութիւնները հիմնականում պայմանաւորուած էին հայաշատ շրջաններում խալամադաւանների նկատմամբ հայերի տեսակարար կշիռ նուազեցնելու միտումով, ինչպէս նաեւ տեղերում կառավարութեան վերահսկողութիւնը ուժեղացնելու նկատառումով<sup>9</sup>:

1895–99<sup>10</sup> Վանում ուսական փոխիթպատու Վլադիմիր Մանսկին, արձանագրելով օսմանեան պաշտօնական վիճակագրութեան թուերի մէջ փոփոխութիւնների փաստը, նշում է, որ դժուար է ասել՝ արդեօք դա բնակչութեան անտանելի վաստ հաշուառնա՞ն, թէ՝ նահանգների, գաւառների և անգամ գաւառակների սահմանների յաճախակի փոփոխութեան արդինը է<sup>11</sup>:

Հեղինակը ներկայացնում է տուեալների խառնաշփորի որոշ օրինակներ: Այսպէս, Մանազկերտի և Պուլանըխի գաւառակներին նուիրուած քաժնում, նա նշում է, որ տարրեր աղբիրներում (Ա. Կոլիբակին, Քինէ, օսմանեան տարեգրեր) գաւառակների բնակավայրերի թիր տարրեր է տրում, երբեմն աղբիրները իրարամերժ տուեալներ են հաղորդում: Այս իրողութիւնն ուսումնասիրող փորձում է բացատրել իրար հարեւան գաւառակների սահմանների յաճախակի փոփոխութիւններով, որի արդինքում Պուլանըխին պատկանող բնակավայրերն անցնում էին Մանազկերտին եւ հակառակը<sup>12</sup>:

Այս հանգամանքները հաշուի առնելով՝ Պիրլիսի նահանգում ուսական իհապատութեան քարտուղարը 1913ին նշում էր. «Եթէ Թուրքիայում ընդհանրապէս պէտք է զգուշութեամբ վերաբերուել վիճակագրական լուսականերին, ապա

<sup>8</sup> 1878–1914<sup>13</sup> օսմանեան կառավարութեան կողմից Արեւմտեան Հայաստանում իրականացուող վարչական քաղաքականութիւնը Հայկական Հարցի պատմութեան համեմատաբար լաւ լուսաբանուած թեմաներից է (Ե.Կ. Саркисян, «Административная и демографическая политика Османского правительства в Западной Армении», *Страны и народы Ближнего и Среднего Востока, т. V. Турция*, изд. АН Армянской ССР, Ереван, 1970, էջ 362–63. նաև՝ Vahagn N. Dadrian, *Warrant for Genocide. Key Elements of Turko-Armenian Conflict*, Transaction Publishers, New Brunswick, USA and London, U.K, 1999, էջ 139–44. նաև՝ Գ. Ս. Բաղդակեան, «Սուլթանական կառավարութեան վարչաժողովրդագրական քաղաքականութիւնը», *Հայոց պատմութիւն. հիր. III. Նոր ժամանակաշրջան*, զիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, «Զանգակ-97», Երեւան, 2015, էջ 448–50. նաև՝ Թարոյեան, Արևմտահայութեան քուարանակի հարցը, էջ 52–57):

<sup>9</sup> В.Т. Маевский, *Военно-Статистическое описание Ванского и Битлусского вилаетовъ*, Типография Штаба Кавк. воен. окр., Тифлисъ, 1904, էջ 193:

<sup>10</sup> Տե՛ս՝ նոյն զրքի «Отдѣль приложений» քաժինը, էջ 118:

<sup>11</sup> Աման բացարիկ վայրենակ երկրուա, ինչպիսին Պիրլիսն է, այդ գործառութիւնը պէտք է դասնապարիկ աւել լինի»:

Վերնշեալը պարտադրում է ուսումնասիրողին Հայոց Յեղասպանութեան նախօրեակի դրութեամբ ինչպէս Պիթ-լիսի նահանգի, այնպէս էլ Արեւմտեան Հայաստանի այլ նահանգների հայ քնակչութեան բուաքանակի իրականութեանը մօս պատկեր ստանալու նպատակով մէկտեղել եւ համադրել սկզբնադրիդի նշանակութիւն ունեցող հնարաւորինս մեծաքի վիճակագրական տուեալներ՝ նահանգի ինչպէս խոշոր, այնպէս էլ մանր վարչատարածքային միաւորմների համար:

<sup>22</sup> «Битлісский вилайетъ. Записка секретаря Консульства въ Битлісъ тит. сов. Лойко», *Известія министерства иностранныхъ делъ, кн. II, СПб., 1913, тѣ 117:*

## Գ. 1878–1914՝ Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան բուաբանակի վրայ ազդեցութիւն ունեցած գործօնները

### 1. Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան ժողովրդագրութեան համար 1894–96ի զանգուածային ջարդերի և Արդու Համիլի վարչակարգի հակահայկական քաղաքականութեան հետեւանքները

1878ին Հայկական Հարցի միջազգային դիւանագիտութեան օրակարգում ընդունվելուց յետոյ, սուլթան Արդու Համիլը սկսեց հետեւողական քաղաքականութիւն իրականացնել՝ ուղղուած քարեփոխումների ներակայ Արեւմտեան Հայաստանի տարածքում հայկական ներկայութեան նուազեցմանը ոչ միայն թղթի վրայ վիճակագրութիւն խեղարփիւելով, այլ նաև իրականում:

Այս քաղաքականութեան իիմնական թիրախներից մեկը դարձաւ Պիրլիսի վիլայեթը, որտեղ, անգամ ըստ օսմանեան վիճակագրութեան, հայերի յարաբերակցութիւնը իսլամադաւան ազգաբնակչութեան նկատմամբ բաւականին բարձր էր (1890ին Մեծն Քրիտանիայի դիւանագէտներին օսմանեան կառավարութեան կողմից ներկայացուած օսմանեան պաշտօնական տուեալներով՝ ոչ-խլամադաւանները (որոնք Պիրլիսի նահանգում գրեթէ բացառապես հայերն էին), կազմում էին նահանգի ազգաբնակչութեան մօտ 41%ը)<sup>1</sup>:

Ինչպէս Արեւմտեան Հայաստանի այլ նահանգներում, Պիրլիսի նահանգում եւս օսմանեան իշխանութիւնների հակահայկական ժողովրդական քաղաքականութեան տարրերն էին բնակչութեան ուղղակի ջարդերը (յատկապէս 1894ին Սասունի ապստամբութեան ճնշմանն ուղեկցած կոտորածը և 1895–96ի զանգուածային կոտորածները), ջարդերին ուղեկցող հայերի իսլամացման ու բնակչութեան արտազարքի գործընթացները: Հակահայկական քաղաքականութեան արդինք էր, ինչպէս նաև տարրեր ընկերային-տնտեսական գործօններով էր պայմանաւորուած Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան ներքին (դէպի Կիլիկիա, Փոքր Ասիա և Կ. Պոլիս) ու արտաքին (հիմնականում դէպի ուսական Կովկաս) պանդխսութիւնն ու արտազարքը:

### ա. Սասունի ինքնապաշտպանութեան և 1895–96ի զանգուածային ջարդերի արդիւնքում Պիրլիսի նահանգում գոհուած հայերի թիւը

Բաւականին լուրջ բացասական հետեւանքներ ունեցան Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան բուաբանակի վրայ

<sup>1</sup> Turkey № 8 (1896). Further Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey, in Continuation of Turkey № 2, Presented to both Houses of Parliament by Command of Her Majesty. August 1896, Harrison and Sons, London, 1896, էջ 99. նաև՝ Առեւտ Թարոյեան, «Արեւմտահայութեան բուաբանակի և Արեւմտեան Հայաստանի բնակչութեան էքնիկական կազմի հարցերը XIX դարի 90-ական թթ. կէսերին Հայկական Հարցի սրման ժամանակաշրջանում», Ցեղասպանագիրսական հանդէս, 2016:4(2), Երեւան, էջ 17:

1890ականների կեսերին Հայկական Հարցի սրման ժամանակաշրջանում տեղի ունեցած զանգուածային ջարդերը (1894ին Սասունի ապստամբութեան ճնշում, 1895ի զանգուածային կոտորածներ):

1895 Հոկտեմբեր - Դեկտեմբեր ամիսներին կոտորածներ տեղի ունեցան Պիրլիսի նահանգի ամբողջ տարածքի գործ բոլոր վարչական միավորներում: Դրանց պատճառած աւերածութիւնների ծաւալի մասին կարելի է պատկերացում կազմել նահանգի եկեղեցական թեմերից ստացուած տեղեկագրերից, որոնցում անուն առ անուն նշում են ջարդերից տուժած նահանգի հայարնակ բնակավայրերը:

Այսպէս, Մշոյ թեմի առաջնորդական փոխանորդ Վարդան Վարդապետ Յակոբեանը 1895 Դեկտեմբերի 26 բուակիր տեղեկագրում հաղորդում է, որ ջարդերից տուժել են Պիրլիս քաղաքը և Պիրլիսի, Խլաթի, Սօտկանի գաւառակների 102 հայարնակ գիտեր: Գիտերից միքանիսում բնակչութիւնը կոտորուել է, միւսներում քալանի ենթարկուել: Մեծ բուով հայկական գիտերի հայ բնակչութիւնը իրենց քահանաների հետ բռնի մահմեդականացուել է, եկեղեցիները վերածուել են մզկիթների: Կողոպտուել են կոտորուել են նաեւ Խիզանի գաւառակի հայարնակ գիտերի մեծ մասը, 29 հայարնակ գիտերի հայ բնակչութիւնը բռնի մահմեդականացուել է (բնակավայրերի անունները բուարկում են):<sup>2</sup>

Սղերդ քաղաքում կոտորածը տեղի էր ունեցել 1895 Նոյեմբերի 3 (16)ին, Սղերդի գաւառի Էրուի գաւառակում՝ Հոկտեմբերի 13 (26)ին (աղբիւրներում բուարկում է ջարդի ենթարկուած գաւառակի 13 հայարնակ բնակավայրի անուն): Սղերդի գաւառի Շիրվանի գաւառակում բուարկում է կոտորածից տուժած քան հայարնակ բնակավայրի անուն: Դրանց բնակչութիւնը նոյնպէս բռնի իսլամացուել է: Զարդեր են տեղի ունեցել նաեւ Սղերդի գաւառի այլ վարչական միավորների հայկական գիտերում: Տեղեկագրերում բուարկում է Շապաղջուրի եկեղեցական թեմում (Կենճի եւ Շապաղջուրի գաւառակներ) կոտորածներից տուժած տասից աւել բնակավայրի անուն<sup>3</sup>:

Համիդեան կոտորածներին զոհ զնացած Պիրլիսի հայերի բուարքանակը դեռևս ճշտուած չէ: Հարցի վերաբերեալ որեւէ յատուկ ուսումնասիրութիւն ներկայ պահի դրութեամբ գոյութիւն չունի<sup>4</sup>: Հարցին առնչուող սկզբնաղբիւրներից

<sup>2</sup> Տե՛ս Մշոյ թեմի առաջնորդական փոխանորդ Վարդան Վարդապետ Յակոբեանի 1895 Դեկտեմբերի 26 բուակիր տեղեկագրիը (*Հայերի Ֆեղասպանութիւնը Օսմաննեան Կայսրութիւնում, փաստաթուրքերի և միւրերի ժողովածու, խմբ:* Մ.Գ. Ներսիսեան, «Հայաստան» հրատ., Երեւան, 1991, էջ 131–35): Զարդերի մասին տարբեր տեղեկագրերից քաղուած տուեալները տե՛ս՝ «Հայաստանեայց եկեղեցին Տաճկաստանում», *Արարար* (Ս. Էջմիածին), Իթ. տարի, Փետրուար 1896:2, էջ 89–90):

<sup>3</sup> Նոյն, էջ 90:

<sup>4</sup> Պիրլիսի գաւառում Համիդեան կոտորածների ընթացքին առանձին կերպով անդրադարձել է Ստեփան Պողոսեանն իր *Հայոց Ֆեղասպանութեան պատմութիւն* ուսումնասիրութեան «1895–96 թթ. զանգուածային կոտորածը» գլխի «կոտորածները Բաղէշում» ենթագլխում, որտեղ սակայն հեղինակը սահմանափակում է թեմային առնչուող միքանի փաստեր ներկայացնելով՝ առանց զոհերի բոլի հաշուարկի (Ստեփան Պողոսեան, *Պատմագիրական ուսումնասիրութիւններ*, Հայոց Ֆեղասպանութեան պատմութիւն, I, ԵՊՀ հրատ., Երեւան, 2008, էջ 606–9):

Պիրլիսի նահանգում հայ զոհերի թուի վերաբերեալ ամփոփ վիճակագրութիւն են հաղորդում ֆրանսիական *Դեղին գիրքը* (1897)ն Ֆրանսիայի արտգործնախարարութեան կողմից հրատարակուած դիւանագիտական փաստաթուրերի ժողովածու (եւ գերմանացի հասարակական գործիշ Եռհանճես Լեփսիուսը իր «Հայաստան եւ Երոպա» աշխատութիւնում):

Ըստ *Դեղին գիրքի* տուեալի՝ 1896 Փետրուարի վերջի դրութեամբ Պիրլիսի նահանգում սպանուել էր 1400 քրիստոնեայ, աւերուել եւ քաղանուել էին 6050 տուն ու 450 կրպակ (վիճակագրութեան բացուածքն ըստ մասն վարչական միավորների չի տրում): Լեփսիուսի հաշուարկի համաձայն՝ Պիրլիսի նահանգում սպանուած հայերի եւ այլ քրիստոնեաների թիւը 1600 է (Պիրլիս եւ շրջակայ բնակավայրեր 900, Մուշ 100, Խիզան 300, Սպարկերտ 300), աւերուած բնակավայրեր՝ 195, աւերուած ու քաղանուած տներ եւ խանութեր (միայն Սպարկերտում ու Խիզանում)՝ 1221<sup>5</sup>:

Լեփսիուսի տուեալների քննութիւնը ցոյց է տալիս, որ դրանք որոշ չափով ցածր են այլ՝ աւելի արժանահաւատ աղքատների կողմից հաղորդուող թուերից<sup>6</sup>: Գերմանացի գործիշ մօտ նաև բացակայում է Սղերդի եւ Կէնճի գաւառներում տեղի ունեցած ջարդերի արդինքում զրուած հայերի վիճակագրութիւնը (ինչպէս յայտնի է, նշուած վարչական միավորներում եւս հայերը մեծապէս տուժել էին կոտորածներից):

Բացի դրանից, ե՛ւ *Դեղին գիրքի*, ե՛ւ Լեփսիուսի տուեալներում չեն ներառուած 1894ի Սասունի ապստամբութեան ընթացքում եւ դրա ճնշմանը հետեւած ջարդի արդինքում զրուած հայերի թիւը, որի վերաբերեալ տուեալները տատանում են: Ըստ 1895 Յունուարի 21ին մեծ տեղութիւնների դեսպաններին ներկայացուած Կ. Պոլսի պատրիարքանի տեղեկագրի տուեալի՝ Սասունի դէպքերի արդինքում զրուել է շուրջ 5500–6000, վիրատրուել շուրջ 1000 հայ, ամրողովին կամ մասամբ աւերուել է 22 հայաբնակ բնակավայր (1088 տուն):<sup>7</sup>

Սասունի ջարդի զրուերի աւելի ցածր թիւ են տալիս դէպքերին ժամանակակից բրիտանացի դիւանագէտները, մասնաւորապէս՝ Սասունի դէպքերը հետաքննելու նպատակով ստեղծուած կառավարական յանձնաժողովում Մեծն Բրիտանիայի ներկայացուցիչ փոխիհիպատոս Համոնդ Սմիթ Շիփլին (Hammond Smith Shipley): 1895 Յուլիսի 20 թուակիր իր տեղեկագրում նա նախ նշում է ջարդի ընթացքում աւերուած Սասունի Տալորիկի, Վերին Գաւառի,

<sup>5</sup> France. Ministère des affaires étrangères. Affaires arméniennes: projets de réformes dans l'Empire ottoman: 1893–1897, Imprimerie nationale, Paris, 1897, էջ 238:

<sup>6</sup> Johannes Lepsius, *Armenia and Europe*, Hodder and Stoughton, London, 1897, էջ 322:

<sup>7</sup> Այսպէս, ըստ Աղքամարի Խաչատոր կարողիկոսի 1895 Դեկտեմբերի 19ի տեղեկագրի՝ Խիզանի գաւառակի Խիզանի շրջանի զիղերում կոտորածներին զոհ է զնացել 400, Սպարկերտի շրջանում՝ 298, Ստորին Կարկառում՝ 68 հայ («Աղքամարայ հանգուցեալ Խաչատոր կարողիկոսի վերջին թուրքն եւ տեղեկագիրը», Արարատ, Ս. Էջմիածին, Իժ տարի, Մայիս 1896:Ե, էջ 246):

<sup>8</sup> Տեղեկագիրը (ֆրանսերէն) տե՛ս՝ British Documents on Ottoman Armenians, vol. III, Türk Tarih kurumu, Ankara, 1989, էջ 555–63:

Գաւառի եւ Շատախի հայաբնակ բնակավայրերի թիւը՝ քանչորս, այդ թում՝ Տալտրիկի շրջանի բոլոր տասներեք գիտերը եւ որոշում դրանց բնակչութեան թիւը (Տալտրիկի շրջան՝ 455 տուն - 4500 շունչ, Վերին Գաւառի, Գաւառի եւ Շատախի տասնմէկ բնակավայրեր՝ 5000-6000 շունչ, ընդամենը 10,000 շունչ): Այնուհետեւ փոխիհիպատոս արձանագրում է, որ յուշագիրը գրելու պահին նշուած բնակչութիւնից 6000-7000ը վերադարձել է իրենց աւերուած բնակավայրեր: Նա աւելացնում է, որ հետաքննութեան ընթացքում կոտորածներից տուժած բնակավայրերի հայերի ստոյզ հարցաբննութիւնը ցոյց է տուել, որ իրաքանչիր տուժած բնակավայրում ջարդերի զոհ է գնացել քանից վարսուն մարդ, եւ, հաշուելով մէկ բնակավայրում զոհերի միջին թիւը քառասուն շունչ, զոհերի ընդհանուր թիւը կարելի է հաշուել 900<sup>9</sup>:

Ամերիկացի միսիոներ Ֆրեդերիկ Դեկիս Գրինը 1895ին հրատարակած իր գրքում Սասունի հայերի տուած կորուստների թիւը նշում է 10,000, մէկ այլ տեղ կորուստների առաւել իրատեսական թիւը տեղակայում է 3000-8000ի միջեւ<sup>10</sup>:

Հայ տսունամափրողներից Հայկազ Պողոսեանն իր Սասունի պալմութիւն աշխատութիւնում ներկայացնելով միքանի աղբիւրներից քաղուած զոհերի թուի տարրեր հաշուարկներ (800ից մինչեւ 10,000), վերջում դժուարանում է այս հարցում որեւէ եզրակացութեան յանգել՝ լոկ արձանագրելով «հազարաւոր զոհերի» փաստը<sup>11</sup>:

Ըստ հայկական պատմագրութեան մէջ ընդունուած կարծիքի՝ 1894ին Սասունի կոտորածների զոհերի թիւը մօս 10,000 է կամ 10,000ից աւելի<sup>12</sup>:

Մեր կարծիքով, Սասունի կոտորածների արդիւնքում հայկական կորուստների թիւը չի կարող լինել 10,000 կամ աւելի, քանի որ ըստ տարրեր վիճակագրական աղբիւրների նշուած ժամանակաշրջանում մօտաւորապէս այդքան էր ինքնապաշտպանութեան մասնակից եւ կոտորածներից տուժած Տալտրիկի տասներեք եւ Վերին Գաւառի, Գաւառի ու Շատախի շրջանների հայաբնակ բնակավայրերի ամբողջ հայ բնակչութեան թիւը: Ուստի 10,000 զոհերի պարագայում, այդ թիւը չէր կարող չարտացոլուել յետազայ տարիներին հաւարուած վիճակագրութեան մէջ բնակչութեան նուազման տեսքով: Մինչդեռ կոտորածներից առաջ եւ յետոյ կատարուած վիճակագրական տուեալներում

<sup>9</sup> Turkey № 1 (1895), Correspondence relating to the Asiatic Provinces of Turkey Events at Sassoone, and Commission of Inquiry at Moush - presented to both Houses of Parliament by Command of Her Majesty; September 1895, London, 1895, էջ 204:

<sup>10</sup> Frederick Davis Greene, The Armenian crisis in Turkey, G. P. Putnam's Sons, New York, 1895, էջ 14, 24:

<sup>11</sup>Հ.Ա. Պողոսեան, Սասունի պալմութիւն, «Հայաստան» հրատ., Երեւան, 1985, էջ 202-203:

<sup>12</sup> Սասնաւորապէս տես' Կ. Թառոյեան, Ժողովրդական շարժումները Սասունում, «Հայաստան» հրատ., Երեւան, 1996, էջ 98. նաև՝ Հայկական հարց, հանրազիւրարան, Հայկական հանրազիւտարանի գլխաւոր խմբագրութիւն, Երեւան, 1996, էջ 402. նաև՝ Արման Կիրակոսեան, «Թուրքական բռնատիրութեան դէմ արեւատահյութեան ընդվզումները 1890-ական թուական ների սկզբին», Հայոց պալմութիւն, հրք. III, Նոր Ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես - 1918 թ.), գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես - XIX դարի վերջ), ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երեւան, 2010, էջ 518:

Կտրուկ փոփոխութիւններ չենք նկատում (տե՛ս՝ սոյն աշխատանքի համապատասխան բաժնում): Վերոնշեալ նկատառումներից ելնելով մեզ համար առաւել ընդունելի է իրողութիւններին քաջատեղեակ ուսումնասիրող Սասունու գրում ներկայացուած տուեալը,թէ՝ 1894ի դէպքերի ժամանակ Սասունը տուել է 500 կրուտղների կորուստ, իսկ ժողովրդից սպանուել են 1200 հոգի, ընդհանուր թուով 1700 հայ<sup>13</sup>:

Հիմք ընդունելով վերոնշեալը՝ կարելի է եզրակացնել, որ 1894ի Սասունի ապստամբութեան եւ Պիթլիսի նահանգում Համիլեան կոտորածների ուղղակի զոհերի թիւը մոտ 5000 էր:

Սասունի հայութիւնը մեծապէս տուժեց նաև 1904ի գոյամարտի արդինքում: Հայկական պատմագրութեան մէջ ընդունուած է Սասունի 1904ի ապստամբութեան զոհերի թիւը հաշուել մոտ 8000 մարդ<sup>14</sup>, ինչը չի հաստատում այլ մեր կարծիքով աւելի արժանահաւատ սկզբնադրիւրների կողմից:

Այսպէս, ըստ ՀՅԴ-օրգան Դրօշակ թերթի Մուշից 1904 Մայիսի 15ին ստացած թղթակցութեան՝ կոտորածներին զոհ էր գնացել մոտ 2500 հոգի<sup>15</sup>:

Իրողութիւններին քաջատեղեակ Սասունին իր ուսումնասիրութիւնում նշում է, որ 1904ի Սասունի ապստամբութեան ամբողջ ընթացքին զոհ է գնացել շուրջ 1000 հայ<sup>16</sup>:

#### Բ. Պիթլիսի նահանգում հայերի կրօնափոխութեան (իսլամի ընդունման) երեսյթի դրսեւորումները 1878–1914ին

Ինչպէս Արեւմտեան Հայատանի այլ նահանգներում, այնպէս էլ Պիթլիսի նահանգում արեւմտահայութեան քուաքանակի վրայ բացասական ազդեցութիւն ունեցող իիմնական գործուներից էր հայերի կրօնափոխութեան՝ խլամի ընդունման, երեսյթը: Ուսումնասիրութեան առարկայ 1878–1914 ժամանակաշրջանում կարելի է առանձնացնել այս երեսյթի դրսեւորման երկու ձեւ: կամովին՝ երբ առանձին անհատներ կամ ընտանիքներ տարբեր (իիմնականում ընկերային-տնտեսական) պատճառներից ելնելով յայտարարում էին իսլամադաւան դառնալու մասին, եւ բռնի՝ երբ

<sup>13</sup> Սասունին մասնաւորապէս նշում է. «Սասուն 1894 ապրիլութիւն սասունցիները հազի 500 հոգի զոհ դրուած էին կոհիւներու ընթացքին: Բայց պարուրութենէն եկը քրդական խուժանը իւ կառավարական գօրքերը կուրորեցին բաւական թիւով սասունցիներ, որոնք չենք կու զային այս ու այն չորին մէջ: Քարոզական նապարակով, այդ քուականներուն յայրարարուցաւ թէ գուասր հազար (ընդգծումը հեղինակին է - Ո.Թ.) սասունցիներ կուրորուած էին: Այս թիւը թէ երուպական իւ թէ հայկական գործութիւններուն մէջ անփոփոխ մնաց. սակայն ճշգրիտը այն է որ սասունցիները հազար հօր հարիւր (ընդգծումը հեղինակին է - Ո.Թ.) հոգի զոհ դրուած էին» (Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 580):

<sup>14</sup> Պողոսեան, Սասունի պարուրիմ, էջ 265. նաև՝ Ազատ Ս. Համբարեան, «Սասունի 1904 քուականի գոյամարտը», Պատմաքանակական հանդէս, 1989:4, էջ 34. նաև՝ Հայկական հարց, համրազիրարան, էջ 403:

<sup>15</sup> «Սասունի դէպքերը», Դրօշակ, Յուլիս, 1904:7(148), էջ 92:

<sup>16</sup> Սասունի, Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 683:

կրօնափոխութիւնը զանգուածային բնոյք ուներ, իրականացուում էր հայերի մեծ խմբերի՝ հայարնակ բնակավայրերի, շրջանների նկատմամբ:

Եթէ կամովին կրօնափոխութիւնը դրսեւրուում էր ուսումնասիրութեան առարկայ ամբողջ ժամանակաշրջանում<sup>17</sup> ապա բռնի իսլամացման զործընթացը, որպէս կանոն, կոտորածներին եւ հալածանքերին, յատկապէս 1895–96ի համիլեան ջարդին ուղեկցող երեւոյք էր:

Համիլեան կոտորածների ժամանակ բռնի իսլամացման ենթարկուեցին Պիրլիսի նահանգի բազմարի հայկական բնակավայրեր: Այսպէս, Սղերդի գաւառի Էրուի գաւառակի տասներկու հայարնակ գիտերում եկեղեցիները վերածուեցին մզկիրների, մահից խուսափած հայերին ստիպեցին մահմեղականութիւն ընդունել եւ թվասուել: Քահանաներին պարտադրեցին մահմեղական զիսափարքոց կրել, նրանք բաժանուեցին սեփական կանանցից եւ կնութեան ստացան բուրդ կանանց՝ հայատափոխութիւնը «հասպասուն կապերով կապարեալ դարձնելու համար»<sup>18</sup>:

Մահուան սպառնալիքի տակ մահմեղականութիւն ընդունեցին Շիրվան գաւառակի մօտ քանի հայարնակ գիտերի հայերը: Եկեղեցիների մի մասն աւերուեց, միևն մասը վերածուեց մզկիրների: Գաւառակի Գորինան (Կուրենա) գիտի հայ ազգաբնակչութեան կէսը կոտորուեց, իսկ մնացած մասը բռնի մահմեղականացուեց<sup>19</sup>:

Ծապաղուրի եկեղեցական վիճակում (Կէնճի եւ Ծապաղուրի գաւառակներ) բռնի իսլամացուել էին մօտ տաս գիտի բնակիչներ (Չիրլիկ (Չըռըկ), Մատրակ, Սիմսոր, Գողեն (Բողի), Պետշիր (Փեշար), Ռիզ, Նորշէն, Մուրդարիկ,

<sup>17</sup> Այսպէս, 1893 Յունիսի 25 բուակիր բրիտանական դիանագիտական հաղորդագրութեան մեջ կարդում ենք. «Գնալով շարանում են դէպքերը, երբ հայերը ձնշող հարկերի իւ այլ դժուարութիւնների պարզառով, որոնց ենթակայ են, երես են թիրել իրենց հայրերի հաւայից եւ մահմեղական դարձել: Մի գիտում չորս ընտանիք, միասում վեց, ես մէկում այլ գուսանինց ընտանիք, մէրառեալ քահանան, վերջին յայրարարել են մահմեղականութիւն ընդունելու մասին: Քանի որ նման զործողութիւնը պարզեւագրուում է լրասնինց լրարով հարկերից պազրուելով, ապա շար հաւանական է, որ աւելի ու աւելի այս քշուար քրիստոնեաներից կը դրդուն նոյնակա վարուել» (*Turkey № 3 (1896). Correspondence relating to the Asiatic Provinces of Turkey: 1892–93*, Harrison and Sons, London, 1896, էջ 159):

Բացարձակապէս նիթրական նկատառումներով պայմանաւորուած՝ հայերի կողմից իսլամի ընդունման դէպքերի մասին հաղորդում է նաեւ յետագայ տարիների բրիտանական դիանագիտական հաղորդագրութիւններում: Դրա հետ մէկտեղ նշում է, որ տեղական իշխանութիւնները առանձին դէպքերում մերժում էին իսլամ ընդունելու հայերի դիմումները՝ ելնելով այն նկատառումից, որ դրանով կը նուազեն հարկային մուտքերը (տե՛ս՝ Էրգրումում Սեծն Բրիտանիայի հիւպատու Գրեգի 1895 Յունուարի 17ի նամակը դեսպան Ֆիլիպ Քարիին *Turkey № 6 (1896). Correspondence relating to the Asiatic Provinces of Turkey: 1894–1895*, Harrison and Sons, London, 1896, էջ 217):

<sup>18</sup> Տուեալները՝ ըստ Պիրլիսի նահանգի թեմերից ստացուած տարբեր տեղեկագրերի («Հայաստանեայց Եկեղեցին Տաճկաստանում», էջ 89):

<sup>19</sup> Նոյն:

Անորի (Հերքին), Մեզուկի (Մլլզակ)<sup>20</sup>:

Ըստ Աղքամարի կարողիկոսութեան տեղեկագրի՝ 1895ի վերջերին մահմեդականութիւն էր ընդունել Խիզանի գառասկի Խիզանի շրջանի շուրջ քառասուն և Մամուտանի շրջանի շուրջ քասն հայաբնակ գիտ<sup>21</sup>: Նշուած տուեալը նաև առաստում են եւ օսմանեան պաշտօնական աղբյուները. ըստ 1895–96ին Պիթլիսի վալի Օմեր փաշայի տուեալների, որոնք նա ստացել էր Խիզանի գաւառակի կայմակամից (կառաւարիչ), 1896 Յունուարի դրութեամբ, իբր, «իրենց սեփական կամքով» խալամադաւանութիւն ընդունելու մասին էին յայտարարել գաւառակի յիսունչորս հայաբնակ գիտեցած բնակուող 3211 հայ, այդ թում՝ 2206 տղամարդ եւ 1015 կին<sup>22</sup>:

Կոտորածների եւ հալածանքների շրջանի աւարտից յետոյ բռնի խալամացուած հայ բնակչութիւնը սկսեց աստիճանաբար վերադառնալ Հայ Առաքելական Եկեղեցու գիրկը: 1897ի ամռանը քրիտանացի հիւպատոս Մոնահանը (Monahan) հաղորդում էր, որ մոլլաները բռղել են Խիզանի գաւառակի հայաբնակ բնակավայրերը եւ դրանցում մրգավեցներ այլեւս գոյութիւն չունեն: Բնակիչները, սակայն, դեռեւս ի վիճակի չէին քրիստոնէութիւն դաւանել՝ քրդերից ունեցած իրենց վախի պատճառով: Ըստ բնակավայրի հայեր տեղափոխուել էին հարեւան շրջաններ, որտեղ նրանք նուրարութիւն ունեին բացայատօրէն վերադառնալ քրիստոնէութեանը<sup>23</sup>:

Ըստ քրիտանացի հիւպատոսի Յուշագրի տուեալների՝ 1897ի ամռանը քրիստոնէութեան էին վերադարձել նաև Աղյուղ քաղաքի մահմեդականութիւն ընդունած հայերը, սակայն այլ էր դրութիւնը Սղերդի գաւառի շրջաններում: Շատէ, Շիրվանի գաւառակի բռնի խալամացուած քազմարի հայեր եւ ասորիներ չէին համարձակում բացայատօրէն յայտարարել իրենց քրիստոնէադաւանութեան մասին, քանի որ շրջանում մեծամասնութիւն կազմող քրդերը նրանց շարունակական ահարեկման մէջ էին պահում պարտադրելով առերես մնալ խլամադաւան<sup>24</sup>:

Համեմատարար աւելի բարուօք էր վիճակը Խարզանի գաւառակում, որտեղ բռնի խալամացուած հայերի մեծ մասը մրգարձել էր քրիստոնէութեան: Էրուի գաւառակում դեռեւս խալամադաւան էր Տէհ գիտը եւ մէկ այլ բնակավայր, որի անունը չէր նշում<sup>25</sup>:

<sup>20</sup> Նոյն, էջ 90:

<sup>21</sup> «Աղքամարայ հանգուցեալ Խաչատուր կարողիկոսի վերջին բուլըն եւ տեղեկագիրը», էջ 246:

<sup>22</sup> Selim Deringil, “The Armenian Question is finally closed”: Mass conversions of Armenians in Anatolia during the Hamidian Massacres of 1895–1897,” *Comparative studies in society and history*, April 2009:51(2), էջ 359: Ըստ օսմանեան տուեալների՝ Խիզանի գաւառակում բնակում էր մոտ 6000 հայ, այսինքն դաւանափոխ էր եղել գաւառակի հայ բնակչութեան շուրջ կեսը (նոյն, էջ 358):

<sup>23</sup> *Turkey, №1 (1898), Further Correspondence Respecting the Asiatic Provinces of Turkey*, Harrison and Sons, London, 1898, էջ 175:

<sup>24</sup> Նոյն, էջ 175–76:

<sup>25</sup> Նոյն, էջ 176:

Օսմանեան իշխանութիւնները շատ դեպքերում հրաժարում էին ճանաչել բռնի կրօնափոխուած հայերի իսլամադաւանութիւնը: Սա անշուշտ ոչ այնքան իշխանութիւնների բարիկամեցողութեան, որքան՝ այդ ուղղութեամբ մեծ տէրութիւնների դիւանագէտների ճնշման արդինք էր, որոնք շարունակարար բարձրացնում էին ինչպէս սուլթանական կառավարութեան, այնպէս էլ տեղական իշխանութիւնների առաջ բռնի իսլամացուած հայերի հարցը: Իր դերն էին խաղում նաև Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ օսմանեան իշխանութիւնների առջեւ միջնորդութիւնները և տեղերում եկեղեցական-քեմական կառոյցների աշխատանքը:

Դրա հետ մէկտեղ, քանի որ իսլամից հրաժարուելը, քատ այդ կրօնի օրէնքների, համարում էր ծանր մեղք, որը պատժում է մահով, ապա բազմաթիւ հայեր շարունակում էին առերես իսլամ դաւանել երկիրելով, որ տեղացի մահմեղական ազգաբնակչութիւնը կարող է պատժել նրանց կրկնակի կրօնափոխութեան համար, ինչը շատ դեպքերում ել տեղի էր ունենում<sup>26</sup>:

Այս մասին վկայում է մէկ այլ բրիտանացի դիւանագէտի Տիարպերիում փոխհիւպատոս Ա. Թ: Վոյի (A.T. Waugh), 1897 Մարտի 16 բուակիր գեկուցագիրը, որտեղ փոխհիւպատոսն անդրադառնում էր Կէնճի եւ ճապաղջորի բռնի իսլամացուած հայ բնակչութեան հարցին: Մասնաւրապէս, փոխհիւպատոսը նշում էր, որ նրան դիմել էին նշուած գաւառակների մահմեղականութիւն ընդունած մօտ քառասունից յիսուն տուն հայ, որոնք ցանկանում էին վերադառնալ քրիստոնէութեան, սակայն երկիր են կրում տեղացի քրիերի հաւանական վրէժխնդրական գործողութիւններից: Այս հարցով դիւանագէտը խօսում է ճապաղջորի կայմակամի հետ, որը նրան հաւաստիացումներ է տալիս, որ նորից քրիստոնեա դարձած հայերը վախենալու պատճառ չունեն եւ իշխանութիւնները կը միջամտեն, եթէ նրանց նկատմամբ որեւէ ուննագութիւն կատարուի: Բրիտանացի դիւանագէտը նաև գրոյց է ունենում Կէնճի գիտերից մէկի բուրդ աղայի հետ, որը, կանչելով հայ տանուտերներին, հիւպատոսի առաջ յայտարարում է, որ եթէ հայերը ցանկանում են վերադառնալ քրիստոնէութեանը, ապա նրանք չեն հետապնդուի դրա համար. «Եթէ նրանք [բռնի իսլամացուած հայերը - Ա.Թ:] մնան մահմեղակամներ՝ մինք եղբայրներ ենք, եթէ դառնան քրիստոնեաներ՝ մինք հարեւաններ ենք»՝ յայտարարում է բուրդ աղան<sup>27</sup>:

Հիւպատոսն իրաւացիօրէն կասկած էր յայտնում կայմակամի եւ բուրդ աղայի հաւաստիացումների մեծ արժէք ունենալու վրայ՝ դրա հետ մէկտեղ նշելով, որ տեղացի հայերը ունեն իսլամադաւան մնալու բոլոր խթանները՝ սկսած դրացի քրիերի բարեհաճութիւնից, վերջացրած հարկերի հարցում որոշակի արտօնութիւններից:

Զգուելով ամրագրել հայերի իսլամացումը եւ դժուարացնել նրանց վերադարձը քրիստոնէութեան՝ Կէնճի զաւառակում օսմանեան իշխանութիւններն անգամ փորձեցին օգտագործել հայերի հարկուելուց խուսափելու նպատակով հաշուառումից խուսափելու փաստերը: Ինչպէս հաղորդում է Ա. Վօն իր 1897 Մարտի 16ի վերոյիշեալ գեկուցագրում՝

<sup>26</sup> Deringil, էջ 347:

<sup>27</sup> Turkey, № 1 (1898), էջ 118:

կամաց կրտսերի ընթացքում Կէնճի և ճապաղջորի կրօնափոխուած որոշ հայեր դժկամ էին քրիստոնէութեան մեջաւանալու հաշուի առնելով նաև այն, որ այդ դէպքում նորից ստիպուած են լինելու վճարել քանձութեան փոխարեն զանձուող «բեղէլ-ի ասքերիէ» տուրքը: «Խալամ ընդունելուց յեւոյ նրանք չեն վճարել ու նորից նույն կրում, որ եթէ նորից ճանաչուեն որպէս քրիստոնէայ, ապա սրիպուած են լինելու փակել կուտած պարզը: Եթէ հարցը մնայ առանց լուծման, ապա կ'ասարդուի նրանով, որ հայերի մեծ մասը կը գերազանց մասներական» եզրափակում էր փոխիհիպատոսը<sup>28</sup>:

Հայութ Կէնճի գաւառակ այցելած Մեծն Քրիտանիայի փոխիհիպատոս Ֆ. Է. Կրոուն (F. E. Craw) իր գեկուն մերկայացնում է գաւառակի դեռեւս բռնի խլամացումից շազատգրուած հայ ընտանիքների ցուցակը: Խալամացում Փեշարի գիւղախմբի Փեշարի՝ 10, Ծիզի՝ 50, Սուրդարիկի՝ 9, Եղմուկի՝ 3, Հերքինի՝ 1 ընտանիք, Զքրենի գիւղախմբի՝ 7, Հերեզինի՝ 7, Կոպարի՝ 5, Չմահենի՝ 6, Վալիրի՝ 8, Կոնոսի՝ 5, ընդամենը՝ 110 ընտանիք, շուրջ 900 նշում է, որ այդ ընտանիքները ցանկանում են վերադառնալ քրիստոնէութեանը, սակայն վախենում անուն ցուրտ բէկերի ու օսմանեան իշխանութիւնների կողմից հնարաւոր պատժի գործողութիւնների, ինչպէս նաև առքինների համար չգանձուած «բեղէլ-ի ասքերիէ» տուրքը վճարելու պարտաւորութեան պատճառով<sup>29</sup>:

Հայութ մասին որոշակի մանրամասնութիւններ է պարունակում մէկ այլ քրիտանացի փոխիհիպատոս Ֆ. Է. Քրոուն (F. E. Craw) 1897 թիվսի 14ի գեկուցազիրը: Համիդեան կոտորածների նախօրեակին Կէնճի գաւառակում բնակչութեան հաշուառութեան գաղտնաբառը մէկը խարեւութեան ճանապարհով (նա յայտարարեց, որ կառավարութիւնն իրը գրանցուած էր այս վկացի ներքութեան մէջ), կարողացաւ գրանցել գաւառակի բազուկարարի, որոնք մինչ այդ խուսափել էին հաշուառութեանը: Կոտորածների ժամանակ Կէնճի գաւառակի հայ բնակչութիւնը անհամար աճում էր եւ համապատասխանաբար նրանցից դադարեց զանձուել «բեղէլ-ի ասքերիէ» հարկը: 1897ի սկզբներին, առաջին առքինների ճնշման տակ սուլթանական կառավարութիւնը հրահանգ իշեցրեց նահանգներ, որով թոյլ էր տրում առաջին հայերին նորից քրիստոնէութիւն դաւանել, գաւառակի Վալէր գիւղի վեց հայ ընտանիք յայտարարեց, որ քրիստոնէութիւնը է վերադառնում: Կէնճի կառավարիչը, որան ի պատասխան, պահանջեց այդ ընտանիքների բոլոր արու անդամները պահպան «բեղէլ-ի ասքերիէ» հարկը ամրող ծաւալով՝ ներառեալ այն տարիները, որոնք ընթացքում նրանք խուսափել էին այս գործից եւ հարկութեանը: Բնակչները դիմեցին գիւղի միտիրին, որը յորդորեց նրանց մնալ մուտքման՝ ասելով, որ այդ պահպանած հարկը կը ներուի: Նոյնը յայտարարեց նաև գաւառակի կառավարիչը (ոչ-քառայի մեջքերում, նոյն, էջ 245): Շատ պահպանը եղել է Կէնճի գաւառակի կազմում 1889–96ին դրանից առաջ եւ յետոյ յիշատակում է Տիարպերիի աշխարհ Լաշ գաւառակի մէջ (Tahir Sezen, *Osmanli yer adlari*, Ankara, 2017, էջ 118):

Էջ 245: Կ. Պոլսում Մեծն Քրիտանիայի դեսպան Ֆիլիպ Քարրին (Philip Currie) պաշտօնական դիմում յիեց Կէնճի պահպանի բռնի խլամացուած հայերի հարցով օսմանեան կառավարութեանը, որն էլ հրահանգ իշեցրեց Պիրլիսի վալիին՝ յայտնութեան կամաց առաջնորդութեան գործութեան մէջ մէկտեղ յայտարարել, որ անկախ պահպանի հայերի քրիստոնէադաւան վերադառնալուն եւ դրա հետ մէկտեղ յայտարարել, որ անկախ պահպանի հայերի հարցութեան փաստից, հայերից զանձուելու է նախորդ տարիներին շճարուած «բեղէլ-ի ասքերիէ» տուրքը: Արդէն այս գործի որութեամբ օսմանեան պաշտօնական գրագրութեան մէջ նշում է, որ Կէնճի գաւառակի խնդրոյ առարկայ բռնի պահպանած 900 հայերը վերադարձել են քրիստոնէադաւանութեանը (Deringil, էջ 367):

Պիթլիսի նահանգում հայերի կրօնափոխութեան երեւյքը համիդեան կոտորածներից յետոյ շարունակուեց դրսեւորուել արդէն անհատական մակարդակով։ Այսպէս, պատրիարքարանի կողմից 1913–14ին ձեռնարկուած մարդահամարի հարցարերքերում առանձին սիմնակով պահանջում էր նշել իսլամացուած հայերի թիւր։ Ըստ հաւաքուած տուեալների՝ Մանազկերտի գաւառակում հաշուած էր 69, Սասունի գաւառակում 27, Բաղէջի գաւառակում 43, Պուլանըիսի գաւառակում 47, Կէնճի գաւառակում 10, Մուշի գաւառակում 151, Խիանք-Խուլփում 29 իսլամադաւան հայ<sup>31</sup>։

#### գ. 1878–1914՝ Պիթլիսի նահանգից հայերի պանդստութիւնն ու արտագաղը

1878–1914 ժամանակաշրջանը բնութագրում է ինչպէս Պիթլիսի նահանգի տարածքից, այնպէս էլ Արեւմտեան Հայաստանի այլ շրջաններից հայ բնակչութեան կայուն-շարունակական արտահոսքով։ Այդ երեւյքը դրսեւորուել է երկու կողմներով.- 1) հայ արական բնակչութեան որոշակի մասի արտազնայ աշխատանքի մեկնելը (պանդստութիւն, «ղարիբութիւն») և 2) անհատ հայերի ու հայ ընտանիքների տեղաշարժ-արտագաղը։

Պիթլիսի նահանգի տարածքից հայերի արտագաղըն ու պանդստութեան մեկնելը դարերից եկող երեւյքներ էին, սակայն 1877–78ի ոուս-թուրքական պատերազմից յետոյ դրանք նոր քափ ստացան հետզհետէ վատթարացող քաղաքական եւ տնտեսական պատճառներով։ Պանդստութեանն ու արտազարդին նպաստող քաղաքական գործօններն էին օսմանեան իշխանութիւնների եւ տեղի քրդական ցեղերի հալածանքներն ու հարստահարութիւնները (ջարդեր, սպանութիւններ, բռնութիւններ, հայերին պատկանող ունեցուածքի, անասունների կողոպուտ, գոյքի հրդեհում, երկակի՝ օրինական եւ ապօրէն հարկահանութիւն, հողագրկման եւ ունեցրկման գործընթացներ եւն.), եւ այս ամէնի արդիւնքում հայերի ընդհանուր անապահովութեան վիճակը։ Այս գործօնները մեծ դեր խաղացին յատկապէս Արդու Համիդի կառավարման տարիներին՝ հայերի նկատմամբ քրդերի շարունակական հարստահարութիւնների եւ հալածանքների նրա կողմից փաստացի քաջալերման հետեւանքով։

Պիթլիսի նահանգից արտագաղըի եւ պանդստութեան տնտեսական պատճառներն էին՝ երկրամասի տակաւ խորացող ընդհանուր ընկերային-տնտեսական թերզարգացուածութիւնը, դրանից բխող հողագործութեան ու անապահութեան ցածր եկամտաքերութիւնը։ Քաղաքական գործօններով էր յատկապէս պայմանաւորուած հայերի տեղաշարժ-արտագաղըի գործընթացը, տնտեսական գործօններով՝ յատկապէս պանդստութեան երեւյքը։

Դեպքերին ժամանակակից, ծնունդով մշեցի Սարգս Բդէեանը, ի մի քերելով Տարօնից եւ ընդհանրապէս Պիթլիսի նահանգից արտագաղըի եւ պանդստութեան պատճառները, արձանագրում է. «Ծալեր որիւէ պատճառով մը կը կորսնցնէին իրենց ունեցածը, կամ սալաֆի<sup>32</sup> պատճառով, կամ լոկոսով պարտի լուակ կ'իյնային, կամ երկրագոր-

<sup>31</sup> ՀԲԸՆ ՆՄԱ, APC/BNu, DOR 3/3, ff. 44–61:

<sup>32</sup> «Սալաֆ» հոդի գրաւադրում: «Սալաֆ»ի մասին մանրամասն տե՛ս՝ Գեղամ Տեր-Կարապետեան, Հողային հարցը հայութակ նահանգներու մէջ, հրատ.՝ Հ.Յ. Դաշնակցութեան, Կ. Պոլիս, 1911, էջ 28–29:

ժուրինէ անպակաս փորձանքներու կ'ենքարկուէին. ինչպէս մարախ, լրատարի ցաւ, երաշը, եւ այլն, եւ յուսահայք զիմակի մը մէջ կը սրիպուէին դիմելու պանդիպութեան: Իսկ 1890էն յեւոյ, զաղքականութիւնը ընդհանուր երևոյք դրձաւ, ամէնամեծ մասով երկրէն հեռանալու, փախչելու դիպաւորութեամբ, հարսկահարութիւնէ պատելու, իր կնանքը փրկելու համար»<sup>33</sup>:

1890ականներին Արեւմտեան Հայաստան այցելած անգլիացի ճանապարհորդ Հենրի Լինչը արձանագրում էր, որ Պիրլիսի նահանգից հայերի արտագաղթի քափը փոփոխական է իր ուժգութեամբ՝ կախուած այն քանից քերը լա՞ է, թէ՝ աղէտալի, իսկ քրդերը քաջալերուած են, թէ՝ զսպուած: Նա նշում էր, որ նահանգում իր գտնուելու ժամանակ քազմաթիւ շրջանների հայ գիտացիներ ջանքեր էին գործադրում իրենց պարտքերը մարելու եւ երկրից հեռանալու քյոլտութիւն ստանալու համար<sup>34</sup>:

Աշխարհագրական առումով կարելի է առանձնացնել Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան գաղթի չորս ուղղութիւններ.- ա) ներնահանգային, բ) դեպի հարեւան նահանգներ, ց) դեպի Օսմաննեան Կայսրութեան այլ շրջաններ եւ դ) դեպի արտերկիր: Հայ բնակչութեան զանգուածային ներնահանգային եւ դեպի հարեւան նահանգներ շարժ է նկատում յատկապէս Սասունի 1894ի և 1904ի ապստամբութիւնների եւ համիլեան կոտորածների ժամանակ, երբ սեփական կեանքը փրկելու նպատակով փախուստի էին դիմում եւ փախստական դառնում օսմաննեան քանակի պատժից գործողութիւնների թիրախ հայարնակ բնակավայրերի հայերը: Ներնահանգային շարժերը որպէս կանոն կարծածամկետ բնոյք ունեին. կոտորածների դադարից եւ յարաբերական անդրբի հաստատումից յետոյ բնակչութեան մեծ մասը վերադառնում էր լրուած բնակավայրեր<sup>35</sup>:

Աւելի տեսական էր քրդերի շարունակական հարստահարութիւնների հետեւանքով իրենց բնակավայրը քողած հայերի արտագաղթը: Քրդերից պաշտպանութիւն գտնելու նպատակով հայ բնակչութիւնը տեղափոխուում էր կամ տուեալ շրջանի կենտրոնական բնակավայր, կամ հարեւան աւելի խոշոր հայկական բնակավայրեր, կամ նահանգի սահմաններից դուրս դէպի երկրի հիւսիս եւ հիւսիս-արեւելեան շրջաններ Էրզրումի նահանգի Պիրլիսի նահանգին

<sup>33</sup> Սարգիս եւ Միսակ Բդեեան, Հարազար պատմութիւն *Saragossy*, խմբ. Աղան Տարօնեցի, տպ. «Սահակ-Մեսրոպ», Գահիրէ, 1962, էջ 29:

<sup>34</sup> H.F.B. Lynch, *Armenia: Travels and studies, Volume II: The Turkish provinces*, Longmans, Green, and Co., London, 1901, էջ 426:

<sup>35</sup> Այսպէս, քրիստոնական դիւնագիտական գեկուցագրերից մէկում նշում է, որ 1894ի Սասունի ապստամբութեան ժամանակ Տալտրիկի փախստական հայերը ապաստան էին գտել Փանճի հայկական գիտերում եւ անզամ Տիարպերի նահանգում եւ արդէն 1895ի զարմանը սկսել էին վերադառնալ իրենց հայրենի բնակավայրեր (*Turkey № I (1895), Correspondence relating to the Asiatic Provinces of Turkey events at Sassoon, and Commission of Inquiry at Moush - presented to both Houses of Parliament by Command of Her Majesty; September 1895*, Harrison and Sons, London, 1895, էջ 132). Ասել սոյն աշխատանքի Սասունի ապստամբութեան զոհերի բուհն վերաբերող քաժին:

սահմանակից (յատկապէս Խնուս) եւ/կամ Ռուսաստանին մօտ շրջաններ (Պայազէտի գաւառ), կամ արտերկիր՝ Ռուսաստան եւ ԱՄՆ<sup>36</sup>:

Քրդական հալածանքների հետեւաճրով 1880–90ականներին հայերի կողմից լրտեցին Պիրլիսի նահանգի տասնեակ բնակավայրեր: Այսպէս, 1902ին Կ.Պոլսոյ հայոց պատրիարք Մադարիա Օրմաննեանի կարգադրութեամբ Օսմաննեան Կայսրութեան, այդ բառով Պիրլիսի նահանգի հայկական թեմական իշխանութիւնների կողմից անցկացուած հայ բնակչութեան «վիճակագրութեան» տեսրակներում եւ տեղեկագրերում իրենց հայ բնակչութիւնից զուրկ էին նշուում Խոյքի հետեւեալ 14 բնակավայրերը:- Գործըվար, Պարզենք, Տափ, Սխուրս, Կոտորչկանք, Փիրիվանք, Ռարաք, Փարիզանք, Հաւաստիկ, Դառնճի, Խիւերք, Թաղվու (Թաղ), Խաչքաղ, Ակներ<sup>37</sup>: Կէնճի գաւառակում որպէս «այժմ քրդարնակ» էին նշուում հետեւեալ ութ բնակավայրերը:- Հովիտ, Շարկիր, Կինճ, Ջարուտ, Վերսը (Վէսմըրգ), Կարմիր վանք, Բոռքար, Աւերքերդ<sup>38</sup>: Սղերդի գաւառի Սղերդի գաւառակում որպէս նախկինում հայարնակ էր նշուում Փաթան զիւղը, Էրուիի գաւառակում՝ 17 բնակավայր (Սիլիանս, Փլվելա, Պեշի, Տեր-Սերէ, Կովիրա, Չարիսիա, Կուրճիտա, Ջերի, Տեր-Հուրա, Գավլէ Շուխա, Աւանս, Թերիան, Շերիքա, Հըլելա, Քիշշէ, Նիտ, Թելիոր): Շիրվանի գաւառակում 1895ի կոտորածների արդիներում հայարափուած եւ 1902ի դրութեամբ այլևս քրդարնակ էին նշուում 21 բնակավայր (Տարզըն, Շըմէլան, Պէյր-Հարուն, Տէր Ռապան, Սեմատար, Մուրատ, Պեմլա, Կունտօ, Ներպան, Հաւէլ, Ո-ընլաի, Յարոնք, Սոգ, Սեֆոր, Փուլ, Մզրէ, Ղարուտ, Սար, Ֆելունա, Ալենիզա): Խարզանի գաւառակում յիշատակուում է 28 հայարափուած բնակավայր (Հըլլար, Պէյր Համմ, Սալաս, Սուլան, Թափի, Կանըշըրք, Ղարֆաս, Տերքեսա (Դըրպէսան), Պաճըք, Մելքա, Տելան, Պաշտըրմ, Հաֆիք (Հաֆրգ), Ջանիզուլ, Զենկովիլ, Կոլամասի, Շըմզարկ (Շմսարիկ), Ալյու-Մեշտամ, Մերձէ, Մելիա, Կըրկուլզ, Տուվիր, Բգեզիկ, Բիրիհապիշ, Սըլեվանք, Սէր Խոշի, Գայնտար, Գոմըր)<sup>39</sup>:

Ինչպէս Արեւմտեան Հայաստանի այլ նահանգների, այնպէս էլ Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան մշտական արտագաղթի իիմնական ուղղութիւններն էին Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Ռուսական Կայսրութիւնը: Պիրլիսի նահանգից հայերի դէպի ԱՄՆ արտագաղթին նպաստեցին Ժ. դարի կէսերին Մուշ եւ Պիրլիս քաղաքներում

<sup>36</sup> Պիրլիսի նահանգից հայերի քրդական ճնշումներից փրկուելու նպատակով ուսասկան սահմանին մօտ տեղափոխուելու փաստն արձանագրում է Լինչը (Lynch, էջ 426):

<sup>37</sup> Տե՛ս՝ «Վիճակագիր Մշոյ Առաջնորդական բոլոր թեմին - վարժարանաց, եկեղեցեաց, վանօրէից, վկայարանաց, շէն եւ աւեր (ի դաշտ Մշոյ եւ շրջակայս) - Մատրանց, Նուիրական տեղեաց, բնակչութեան Աւանայ եւ Շինից եւ Եկեղեցական պաշտօնէից Հաւարեալ ըստ հրահանգի Ազգ. Պատրիարքարանի 1902 Յունվ. 5 եւ Յունիս 21 թիւ Շրջաբերական Գրութեանցն Գեր. Պատր. Փոխանորդ Տ. Խոսորով ծ. վրդ. Պէիրիկեան» (ՀՅԴ Բուստոնի Արխիվ, Անձնական գրութիւններ, Գեղամ Տեր-Կարապետեան (Տատրակ) ֆոնդ, պահ 16, դ. 1, էջ 153):

<sup>38</sup> Նոյն, էջ 180:

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ. 412, գ. 1, գ. 1856, թթ. 4, 5, 7, 8 («Վիճակագրութիւն Սղերդի եւ իր թեմերուն, 12 Մարտ, 1902»):

աւետարանական համայնքների հաստատումն<sup>40</sup> ու ամերիկեան բողոքական միսիոներների կրթական գործունեությանը<sup>41</sup>: Պիրլիսում հաստատուած ամերիկեան միսիոներներից մեկը 1887ին վերաբերուող իր գեկուցագրերից մէկում նշում էր, որ բողոքական ուսումնական հաստատութիւնների հայ ուսանողներից և ուսուցիչներից շատերը մեկնում են ԱՄՆ՝ Կալիֆորնիայում այդ ժամանակ նկատուող մեծ տնտեսական աշխուժացման պայմաններում փող վաստակելու ակնկալիքով. «Այսպիսի խեղճ, ծեծուած մարդկանց կարծիքով զնացողները մեծ կարողութեան տէր են քառուուն կամ աներեւակայիշ մեծ աշխարհավարձ են սրանում: Երեւակայութիւնը գոգոռող պալումուրիւնները քաջազրություն են երիտասարդների մէջ արտագաղթը, ինչին նպասպում է նաև նրանց կողմից անգլերէնի իմացութիւնը»<sup>42</sup>:

Արդու Համիդի վարչակարգը շատ դէպքերում ծգուում էր խոշընդոտել դէպի ԱՄՆ հայերի արտահոսքը՝ երկիւղ կրելով, որ նրանցից ոմանք ԱՄՆ քաղաքացիութիւն ձեռք բերելուց յետոյ կարող են վերադառնալ և յեղափոխական գործունեութիւն ծավալել՝ որպէս ԱՄՆ քաղաքացիներ օժտուած լինելով համապատասխան անձեռնմխելիութեամբ<sup>43</sup>: Պիրլիսի նահանգից հայերի արտագաղթը դէպի ԱՄՆ աճի միտումներ դրսեւորեց 1908ի երիտրուքական յեղափոխութիւնից յետոյ, երբ վերացուեցին երկրից մեկնելու արդուիհամիշեան վարչակարգի սահմանափակումները<sup>44</sup>:

Դէպի ԱՄՆ եւ Ռուսաստան հայերի արտագաղթը մեծ ծաւալներ ընդունեց համիդեան կոտորածների տարիներին: 1894–96՝ Այսրկովկասի տարածք ներգաղթեցին հազարաւոր արեւմտահահայեր: 1896ին միայն Կարսի մարզում գաղրականների ընդհանուր թիւը կազմում էր 12,334 շունչ՝ իմնականում Երզրումի եւ Վանի նահանգների՝ Ռուսական Կայսրութեամբ սահմանամերձ շրջաններից հայեր<sup>45</sup>: Գաղրական այս քազմութեան մէջ, անշուշտ, պատկառելի թիւ պէտք է կազմէին նաև Պիրլիսի նահանգի արեւելեան շրջաններից (Մանազկերտ, Պուլանըլի) հայ փախստականները:

Արդու Համիդի վարչակարգի կողմից իրականացուող հակահայկական քաղաքականութեան՝ Վանի եւ Պիրլիսի

<sup>40</sup> 1855ին Մուշում (Սասունի, *Պալումուրիս աշխարհի*, էջ 304), 1864ին Պիրլիսում (R. Mirak, *Torn between two lands, Armenians in America, 1890 to World War I*, Harvard University Press, Cambridge, Massachusetts, 1983, էջ 42):

<sup>41</sup> Նշուած տարիներին Պիրլիս քաղաքում գործում էին աւետարանական երկու գիշերօրիկ վարժարաններ՝ նախատեսուած անշատարար աղջիկների եւ տղաների համար, ինչպէս նաև ամերիկեան որրանց (կրթարանների ցանկը տե՛ս՝ Վեր. Կ. Պ. Առանալեան, *Յուշարչան հայ անկարասնականաց և անկարասնական եկեղեցոյ (քննական ծանօթութիւններով)*, Ֆրեզնօ, Քայլիքորնիա, 1952, էջ 472–74):

<sup>42</sup> Mirak, էջ 42:

<sup>43</sup> Նոյն, էջ 43: Մասնաւորապէս, այդ նպատակով 1892ին խստացում է դէպի Օսմանեան Թուրքիայի նախանգիստներ ներքին ճանապարհորդական քոյլտուութիւնների՝ թիւրքէների տրամադրման կարգը (նոյն, էջ 46):

<sup>44</sup> Բոլեւաններ, էջ 28:

<sup>45</sup> А. Амбарян, «Численность и национальный состав «временно-проживающих» в Закавказье и Восточной Армении в 1914 г.», *Երարքը հասարակական գիլուրիւնների*, 1979:8, էջ 38. նաև՝ Ս. Սալխասեան, *Կարսի մարզի բնակչութիւնը*, ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջ 32):

նահանագների հայ բնակչութեան համար ժողովրդագրական հետեւանքների ամփոփ պատկերն է տալիս դէպքերին ժամանակակից, 1895–99ին Վանում ուսական փոխիթապատոս Մաեսլին. «1894–1896 թթ. Վանի և Պիրլիսի վիլայէրների սահմաններում տեղի են ունեցել բասականին էական փոփոխութիւններ բնակչութեամ տեղաշարժի մէջ: Հազարաւոր հայեր զնացել են մասամբ Ռուսական, մասամբ Պարսկական, մասամբ վերաբնակուել են մի կազայից միւրը: Ինձ յայրին են ընդունիքներ, որոնք անզամ տեղափոխուել են Ամերիկա: Որոշ կազաներ գրեթէ ամրողութեամբ գրկուել են իրենց նախկին հայ բնակչութիւնից, որի փոխարէն մասամբ այլ կազաներից, մասամբ այլ վիլայէրներից են մասամբ անզամ Պարսկականից տեղափոխուած քրդեր են յայրնուել»<sup>46</sup>:

Պիթիսի նահանգից հայ արական բնակչութեան պանդխստութեան երեւոյթը պայմանաւորուած էր զիսաւորապէս տնտեսական գործօններով:

Նահանգի հայ բնակչութեան զիսաւոր զբաղմոնքը զիւղատնտեսութիւնն էր: Հողագործութեամբ եւ անասնապահութեամբ զբաղուող հայերի մեծ մասը զտնում էր ծանր պարտքերի տակ, ինկ պանդխստութիւնը դիտում էր դա քօթական միջոցներից մէկը: «Տարօնցի հայք ամէնն ալ գրեթէ պարսուց տակ ընկճուած են, սրակի տէր մարդ դժուարին է գրնել մէջերնին, իրենց պարտք ընդհանրապէս տաճիկներու և քրդերու է ծանր գրկուով» նշում է 1890ականներին վերաբերող մի վկայութեան մէջ<sup>47</sup>: Որպէս պարտքի կուտակման պատճառ առանձնացւում էին «երկրագործութեան անյաջողութիւնները եւ հարստահարութիւնները»<sup>48</sup>: Հայը դիմում էր պանդխստութեան՝ «պարսուէն ազարելու և ապրելու ճար մը գրնելու յուսով, ուր կամ ... կը մեռնի կամ քանի մը տարիէն կը վերադառնայ քիչ սրակով եւ կամ չեռնունայն, եւ պանդխստութիւնը, որում արդէն վարժուած կ'ըլլայ, երկրագործութիւնն լաւ համարելով նորէն շուրով կը վերադառնայ, մինչեւ որ պանդխստութեան զոհ ըլլայ»<sup>49</sup>:

Պանդխստութեան պատճառների մէջ իրենց դիրն էին խարում նաեւ ներակայական գործօններ, յատկապէս արագ եւ զիւղատնտեսութեան զբաղմոնքի համեմատ աւելի հեշտ եկամուտ ստանալու ձգտումը: «Գիւղացին ամրող տարին կաշխատէր եւ հազի կրնար հազուսիք մը զինը ճարել եւ իր ընկանիքի անդամներուն մերկութիւնը ծածկել միմաշնորհ տեսաւ, որ ուսանք Պոլիս կ'երթան, անկից Արենա, կամ ուրիշ տեղ մը եւ օրական 10–20 դրուշ կը շահին: ... Ան հաշի չ'ըներ թէ մարդք կրնայ զործ չըզգմել, կրնայ հիւանդանալ, կրնայ որեւէ դժուարութեան հանդիպիլ...» գրում է Սարգսի Բդէեանը<sup>50</sup>:

<sup>46</sup> Маевский, Всено-статистическое описание Ванского и Битлесского вилаетовъ. Статистический очеркъ, էջ 194:

<sup>47</sup> «Մշոյ աշխարհ», Լուսայ, գրական հանդէս, Տիֆլիս, 1899, № 1, էջ 122:

<sup>48</sup> Նոյն:

<sup>49</sup> Նոյն, էջ 123:

<sup>50</sup> Բդէեաններ, էջ 28:

Յայտնի գրող եւ հրապարակախոս Ռաֆֆին դեռեւ 1875ին հետեւեալ կերպ էր նկարագրում երեւոյք՝ «Գաղրականութեան հարցը ամէնազիշաւոր լրեն է բռնում Տաճկաւանի հայերի վիճակի մէջ։ Ամէն լրարի հազարաւոր երիտասարդներ Վանից, Սուչից, Բաղչից, Կարինից եւ այլ զաւառներից դիմում են դէպի Կ. Պոլիս իրենց ընդունակիքի համար ապրուար շահելու։ Այդ հոսանքը զնալով աւելի ընդարձակ քամակութիւն է սպանում, քանի նոյն երկրներուն ժողովրդի ապրուարի հնարները դժուարանում են»<sup>51</sup>։

Պիրլիսի նահանգից պանդստորեան իմնական ուղղութիւններն էին. ա) Կովկասը, որտեղ գնում էին նահանգի արեւելեան շրջաններից հայերը, բ) Պոլիսն ու Զմիւռնիան, որոնք նահանգի արեւմտեան շրջանների հայերի նախընտրելի ուղղութիւններն էին, գ) Կիլիկիան եւ Հալեպը (այս ուղղութեամբ մեծ էր Սասունի և Սասունից հարաւ ընկած այլ շրջանների հայութեան հոսքը)<sup>52</sup>։

Մշեցի եւ սասունցի պանդստորեան, չինելով որեւէ արիեստի տէր մարդիկ, որպէս ոչ-որակեալ աշխատուժ, իրենց պանդստորեան վայրերուն ներգրաւուած էին ամէնածանր աշխատանքների մէջ, իմնականում ծառայելով որպէս քեռնակիրներ (համալներ) մայրաքաղաքի եւ այլ ծովեզերեայ առեւտրային քաղաքների նաւահանգիստներուն, օրավարձով բանուորներ՝ փոերում եւ ջրաղացներում (Հալէայ), երկարգծերի շինարարութեան մէջ (Կիլիկիա) եւն։

Մուշի տարբեր բնակավայրերից պանդստորեան աշխարհագրութեան մասին պատկերացում է տալիս Սարգիս Բդեանի յուշերից հետեւեալ հասուածը. «Այդ շրջանին զանազան կենդրուններու մէջ, քեռնակրութեան որոշ դիրքեր մշեցից ձեռքը մնացած էին։ ... Պոլսոյ մաքսաւան քանուորներուն մէջ միծ թիւ մը կը կազմէին մշեցի ջրհանկիրները և անուն համած էին իրենց կոռուզանութեամբ։ ... Ծայր մը վաճառապուններու պահապաններն էին մշեցինները։ Իզմիրի մէջ, կարգ մը հայ վաճառականներու քոյ նորէն մշեցիններ լրեղաւորուած էին իրրեւ քեռնակիր և պահապան։ Սպարթալիի, Սիլվրիսարիանի, Պարքրնանի, եւ այլն, խանիրուն մէջ քաւական թիւով խասգիղցիններ, արաղցիններ կաշխաւուին։ Էպիրնէ, քանի մը շոգեշարժ ջրաղացներու մէջ կ'աշխաւուին արտօնցիցիններ, խարսիցիններ, վարդենիշցիններ։ Տեղէաղաճ, իրրեւ նաւահանգիստ, քաւական թիւով գիւղացիններ կ'աշխաւուին։ Հոս աւելի յարմար գելքին մը գրան ընդունակութ հասցաւուելու համար։ ... Ծայրերը ցրուած են Պուլկարիոյ զանազան քաղաքները եւ կայսերանները, որ որ կրցած են զործ գրման։ ... Նոյնպէս միծ թիւով մշեցիններ կը գրմուէին Ռուսանիոյ Կալաց, Խորայիլ և ճորճուա քաղաքներուն մէջ»<sup>53</sup>։

<sup>51</sup> Մէլիքզայէ, «Արտաքին տեսութիւն. Թուրքիա», *Մշակ*, Թիֆլիս, 16 Յունուարի 1875, № 2, էջ 3։

<sup>52</sup> Դէպի Հալէայ սասունցինների պանդստորեան մասին մանրամասն տե՛ս՝ Վարդի Ջէշիշեան, «Սասուն-Հալէայ պատմական առնչութիւններ. սասունցիններ Հալէայի մէջ», *Հայկագիւղական հանդէս*, 2004: Ի՞ւ., էջ 93–138. նաև՝ Vahram L. Shemassian, “The Sasun Pandukhts in nineteenth-century Aleppo”, *Armenian Baghesh/Bitlis and Taron/Mush*, R. Hovannisian (ed.), Mazda Publishers, Inc., Costa Mesa (Calif.), 2001, էջ 175–89։

<sup>53</sup> Բդեաններ, էջ 27–28։

Պանդուխտները որպէս կանոն իրենց կեանքն անցկացնում էին ծայրայեղ թշուառութեան մէջ՝ կենցաղային տարրական պայմաններից զուրկ նկուղային կացարաններում, յաճախ իրենց տալով զինեմոլութեան, ծխամոլութեան ու խաղամոլութեան։ Նման ապրելակերպ անշուշտ յանգեցնում էր պանդուխտների բարձր տոկոսի մահացութեան։ Այսպէս, 1900ականների սկզբներին Հալէպում սասունցի պանդուխտների կեանքը նկարագրող մի վկայութիւնում կարդում ենք. «Սասունցիք փուտերու վարառողջ մընուրութին տակ կեղուուր ու անխնամ կեանք մը վարող դժբախտ արարածներէ կազմուած են, որոնք հակառակ իրենց զօրաւոր հսկայ կազմին, հերզինքէ կը ծիրին... եւ անհամար զոհեր կու տան, իսկ նիւթապէս ալ իրարու դէմ մրցելով իրարու կը վճասին եւ շահածնին եւս վաշխառուներու քաակը կը լիցնին... այս խնդերը իրենց դգիպութեան հետ խաղամու ծխամու ու զինեմու ալ են»<sup>54</sup>:

Հալէպ պանդուխտութեան մեկնած սասունցիները «զերմափոր նկուղմներու տամուկ ամկիմները կեանք վարելով պարաժամ կը զառամին ու կը կորսնցնեն իրենց առողջութինը»։ Որպէս հետեւանք պանդուխտ սասունցիների մահաման միջին տարիքը 27ից չէր անցնում<sup>55</sup>:

Պանդուխտութիւնը բազմաթիւ դժուարութիւններով ուղեկցուող զբաղմունք էր։ Պանդուխտի վաղուայ օրուայ անորոշութեանն ու մտահոգութեանը զումարուում էր անվտանգութեան խապար բացակայութիւնը։ Նրանցից շատերը ճանապարհին յարձակման էին ենթարկուում, ծերբակալուում, վիրաւորուում, նոյնիսկ սպանուում։ Մանաւանդ վտանգաւոր էր ոուս-քուրքական սահմանն անցնելը, ինչը շատերին չէր յաջողուում, եւ ամիսներ շարունակ նրանք մուրացկանի վիճակում թափառում էին սահմանամերձ շրջաններում։ Պանդուխտութիւնից վերադարձողներին սպանուում էր ճանապարհին ոչ միայն կողոպսուելու, իրենց վաստակած փողից, այլ յաճախ նաև կեանքից զրկուելու վտանգը։ Բագմարի պանդուխտներ այդպէս էլ չէին կարողանում կամ չէին ուզում վերադառնալ՝ համալրելով նահանգից ընդմիշտ հեռացած հայերի թիւը<sup>56</sup>։

Պիրլիսի նահանգից հազարաւոր հայերի համար պանդուխտեան իիմնական ուղղութիւններից էր Կ.Պոլիսը։ Հրաշեայ Աճառեանի տուեալներով՝ Սկիւտարի թաղամասի հայ բնակչութիւնն ի սկզբանէ կազմուած էր Մուշից զարքած հայերից<sup>57</sup>։

1890ականներին Պոլսի մէջ կար 60,000 հայ պանդուխտ, որոնք, ըստ իրենց նախսկին բնակութեան վայրերի, մաս-

<sup>54</sup> Ա.Ս. Սեւեան (Խսկէնտէր Գարանեան), «Հալէպի հայ զաղութին անցեալն ու ներկան», *Արևիկեան մամուլ*, Զմիւնիա, 14 Յունի 1906, թի 25, էջ 614։ Մէջքերուում է ըստ Քէշիշեան, էջ 128։

<sup>55</sup> Սկրտիչ թիւն. Մուրատեան, «Սասունցիները Հալէպի մէջ», *Տաճար*, Կ. Պոլիս, 1910, թի 28, էջ 644։ Մէջքերուում է ըստ Քէշիշեան, էջ 128։

<sup>56</sup> Պողոսեան, *Պատրիազիպական ուսումնասիրութիւններ*, Հայոց Ցեղասպանութեան պալմութիւն, էջ 315–16։

<sup>57</sup> Հրաշեայ Աճառեան, Հայ զարքականութեան պալմութիւն, «Զանգակ-97», Երեւան, 2002, էջ 631։

նազիտացած էին առանձին գրադմունքների մեջ: Այսպէս, ակնեցի հայերի հիմնական գրադմունքն էր սեղանագործութիւնը, վանեցիների՝ բեռնակրութիւնն ու խոհարարութիւնը, մշեցիների՝ բեռնակրութիւնը, կեսարացիների՝ որմնադրութիւնը և ներկարարութիւնը, սերաստացիների՝ բաղնեպանութիւնը, եղանկացիների՝ սուրճի վաճառքը<sup>58</sup>:

Պոլիս մեկնած պանդուստներից շատերը ծայրայեղ թշուառ կեանք էին վարում, սովի, զրկուածութեան եւ հիւանդութիւնների զոհ էին դառնում մայրաքաղաքի քարաւանսարաների, բաղնիքների եւ սրճարանների նկուղների «մուրել զաղ պարերի մէջ»<sup>59</sup>:

Հայ համալները որպէս Կ. Պոլսի հայ բնակչութեան առաւել անպաշտապան եւ խոցելի խումբ, Բանկ Օսոմանի գրաւման գործողութիւնից յետոյ 1896 Օգոստոսի 26–29ին մայրաքաղաքում տեղի ունեցած ջարդերի հիմնական բիրախններից էին՝ տալով մեծ բուռվ զոհեր: Դեպքերին ժամանակակից գերմանացի լրագրող Մագդա Նէյմանը գրում է. «համալները Պիրլիսի, Վանի, Խարբերդի վիլայէթների հողագործ բնակչութեան քարմ ուժերն էին, որոնք քրդերի մնջումների եւ բուրդ պաշտօնեաների կեղեցման հերթանքով կյրուել են իրենց սանդ հողից: Ամէն դարի հազարներով նրաք չզգիել են Կոստանդնուպոլիս, Զմիւնիա եւ Կորուպական ու ասիական Թուրքիայի այլ ծովեզրեայ քաղաքներ՝ ծանր ֆիզիկական աշխատանքով վարժադրուելու նպատակով.... 1896 թ., Կոստանդնուպոլսում համալների կուրորածից յեպոյ, թուրքերը սպիալուած էին նրանց [առժամանակ] փոխարիմել քրդերով»<sup>60</sup>:

Պիրլիսի նահանգի տարածքից մեկնած պանդուստները երկար ժամանակ՝ երբեմն վեց-եօթ եւ աւելի տարիներ, չեն վերադառնում հայրենի բնակավայրեր, յաճախ չեն տեղեկացնում իրենց մասին անգամ սեփական ընտանիքներին: Տեղական հայ եկեղեցական կառոյցները քայլեր էին ձեռնարկում խնդրին լուծում տալու համար: Այսպէս, 1899ին Մշոյ վիճակի առաջնորդական տեղապահ Բարգէն ծայրագոյն վարդապետ Կիլէսէրեանը շրջաբերական նամակով յատուկ դիմում է զաւառից երկար ժամանակով բացակայ հայ պանդուստներին՝ նրանց յորդորելով սեփական որպիսութեան մասին լուր ուղարկել իրենց կանանց: Շրջաբերականում ասում էր, որ եթէ երեք ամսուայ ընթացքում պանդուստները նման նամակներ չուղարկեն, ապա տեղապահն իրեն իրաւունք է վերապահելու անգամ արտօնել նրանց կանանց վերստին ամուսնանալու<sup>61</sup>:

<sup>58</sup> Նոյն. նաեւ՝ Բդէեաններ, էջ 27:

<sup>59</sup> Հայ զաղքաշխարհի պարմութիւն (միջնադարից մինչև 1920 թ.), հիդ. 2, Ասիայի եւ Աֆրիկայի հայկական զաղութեան, խմբ.՝ Վ. Միքայելեան, «Գիտութիւն» հրատ., Երևան, 2003, էջ 117:

<sup>60</sup> Մագда Հեյման, Արմառե, Լոյս, Երևան, 1991, էջ 107–8 (մէջբերում է ըստ Հայ զաղքաշխարհի պարմութիւն (միջնադարից մինչև 1920 թ.), էջ 116):

<sup>61</sup> «Ընկեցիկ անայր կիներ», Արեւելիան մամուլ, Զմիւնիա, 15 Նոյեմբեր 1899, № 22, էջ 938–939): Արձագանգելով խնդրին, 1900ի սկզբին «Մշեցի պանդուստներու լրեալ կիները» յօդուածով հանդէս է զայխ նաեւ ծնունդով մշեցի Գեղամ Տէր-Կարապետեանը (Գեղամ, «Մշեցի պանդուստներու լրեալ կիները» Ծաղիկ, օրարկեր, Կ. Պոլիս, 1900, № 112, էջ 1, № 113, էջ 1):

Պիթլիսի նահանգից հայերի պանդխտութեան եւ արտագաղթի ամբողջական վիճակագրութիւն գոյութիւն չունի: Կան տուեալներ առանձին բնակավայրերից, լաւագոյն դէպքում առանձին գաւառակների հայարնակ գիտերից պանդուխտների բոլի վերաբերեալ: Այսպէս, 1883ին Արևմտեան Հայաստանի նահանգներով ճանապարհորդած Մանուկ Միրախորեանը նշում է, որ Մշոյ դաշտի խոշոր հայկական բնակավայրերից մէկից՝ Խասգիտից, Կ. Պոլիս էր պանդխտել մոտ 400 մարդ (զիտում նա հաշտում է 300 տուն հայ), իսկ ըստ 1913–14ի Հայոց պատրիարքարանի մարդահամարի տուեալների Խասգիտից պանդուխտների թիվը 380 էր (բնակավայրում հաշուառուել էր 340 տուն հայ բնակչութիւն):<sup>62</sup> Մէկ այլ տեղեկութեան համաձայն 1880ականների վերջերին միայն Յունաստանի Կորնքոսի պարանոցի ջրանցքի կառուցման աշխատանքներում ներգրաւուած էր 2000–3000 մշեցի պանդուխտ<sup>63</sup>:

Մեծ Եղեննի նախօրեակին Պիթլիսի նահանգից պանդխտութեան ծաւալների մասին պատկերացում են տալիս Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913–14ին կազմակերպած մարդահամարի տուեալները: Մարդահամարի հարցարերի հարցերից մէկը վերաբերում է պանդուխտների թուին: Նոյն հարցարերին «ընդհանուր ծանօթութիւն» սինակում առաջարկում էր նաև նշել, թէ յատկապէս ո՞ր երկրներում են գտնում տուեալ շրջանից պանդուխտները: Ըստ հաւաքուած տուեալների՝ Մուշի գաւառի Սասունի գաւառակում հաշուառուել էր 706 պանդուխտ, իսկ որպէս պանդխտութեան վայր գրեթէ բացառապէս նշուել էր Հալէպը<sup>64</sup>:

Պիթլիսի գաւառի Պիթլիսի եւ Խլարի գաւառակներում հաշուառուել էր 4449 պանդուխտ (համեմատութեան համար նոյն տարածքում մարդահամարի ընթացքում հաշուառուած ընդհանուր բնակչութեան թիվը 35,776 էր, այսինքն պանդխտութեան էր մեկնել Պիթլիսի եւ Խլարի գաւառակների հայ ընդհանուր բնակչութեան շուրջ 10%ը եւ, համապատասխանաբար, քանի որ պանդխտութեան էին դիմում գրեթէ բացառապէս տղամարդիկ, հայ արական բնակչութեան շուրջ 20%ը): Նշուած տարածքի համար որպէս պանդխտութեան երկրներ նշուում էին Ռուսաստանը եւ ԱՄՆը<sup>65</sup>:

<sup>62</sup> Մանուկ Միրախորեան, Նկարագրական ուղենորութիւն ի հայարնակ գաւառու Արհելիան Տաճկապանի, մասն Ա., Տըպագրութիւն Մ.Կ. Սարբեան, Կ. Պոլիս, 1884, էջ 45–46. նաև՝ ՀԲԸ ՆՄԱ, APC/BNu, DOR 3/3, f. 58: 1913ին հայկական մամուլու շրջանառուող մէկ այլ տուեալով՝ Խասգիտից պանդուխտների թիվը շուրջ 600 էր, 400 տուն հայ բնակչութեան պայմաններում (Հ. Առաքելեան, «Թիւրքահայ ժողովրդի վիճակագրութիւնը», Արօր, միամսնայ հանդէս, ընդհանուր գրական, գիրական-ժողովրդական և խաղաղասիրական, IV տարի, Դեկտեմբեր 1913, էջ 77):

<sup>63</sup> Քդէեաններ, էջ 27:

<sup>64</sup> Տես ՀԲԸ ՆՄԱ, APC/BNu, DOR 3/3, ff. 45–48: Համեմատութեան համար՝ 1880ին հայոց պատրիարքարանի յանձնարութեամբ կատարուած մարդահամարի տուեալներով Հալէպում կար 303 սասունցի պանդուխտ (Քէշիշեան, էջ 114): Ծնունդով սասունցի Մկրտիչ քահանայ Մուրադեանը 1910ին գրած «Սասունցիները Հալէպի մէջ» յօդուածում մոտ 4000 սասունցի պանդուխտ է հաշտում Հալէպում և շրջակայրում (նոյն, էջ 127):

<sup>65</sup> ՀԲԸ ՆՄԱ, APC/BNu, DOR 3/3, ff. 48–52:

քականութեան որոշ տարրեր վերացնելու, հասարակական-քաղաքական կեանքն ազատականացնելու ուղղութեամբ։ Արեւմտահայութեան օգտին անցկացւում են որոշ քարելաւումներ. վերացւում է Արեւմտեան Հայաստանում հաստատուած արտակարգ դրութիւնը, որը սահմանափակում էր հայերի զաւաշից զաւառ, զիւղից քաղաք տեղափոխուելու, արտերկիր մեկնելու իրաւունքը, բոյլատրուում է կոտորածների ու հալածների հետեւանքով երկրից փախած հայերին վերադառնալ, բանտերից եւ աքսորավայրերից ազատ են արձակուում քազմաքի հայ կալանաւորներ, դադարեցւում է հայրուկների հետապնդումը, ինչի շնորհի շատերը դուրս են զալիս քաքանացներից ու վերադառնում իրենց տները, մեծացւում են հայերի ներկայութիւնն եւ կշիռ տեղական կառավարման մարմիններում են».<sup>70</sup>

Ծագումով մշեցի, դէպքերին ականատես Միսաք Բդէեանը, անշուշտ որոշակի չափազանցութեամբ, հետեւեալ կերպ է նկարագրում 1908ի սահմանադրութեան հոչակումից յետոյ առաջ եկած նոր իրականութիւնը. «Մշոյ զաւառի ամբողջ հայութիւնը լայն շուաշ մը առաւ այլևս չկային նախկին հարսկահարութիւնները, դրուքերու ապօրինի զանձումները, ժանդարմներու վար արարուները, միւլքազմներու կողմէ զիւղերու քաղանումը, իսաֆիրութեամ՝ լուրդը... Հայութիւնը, որ իր հոգեւարքի վերջին օրերը կ'ապրէր, նորէն սկսաւ վերակենդանանալ իր աշխարումակութեամբ, դուկունութեամբ եւ ջանափրութեամբ, դեռ մէկ երկու տարի շանցած, ամէն քանի դէր դարձաւ»<sup>71</sup>:

Արդու Համիդի իշխանութեան տարիներին քրոնի միջոցով հայերին զայելու քաղաքականութիւնը քուրդ ցեղապետերին փաստացի արտօնում էր անպատիծ գործել հայերի նկատմամբ ցանկացած ապօրինութիւն: Դրա արդիւնքում քրոնի յաջողուել էր տիրանալ հայերին պատկանող քազմաքի վարելահողերի, քրդացնել քազմաքի հայկական բնակավայրեր, դրամի շորքման ուժիմ հաստատել Պիրիսի նահանգի առանձին շրջանների հայկական զիւղերի նկատմամբ: Երիտրուրքական յեղափոխութիւնից յետոյ քուրդ ցեղապետերը, որպէս Արդու Համիդի «յետադիմական» ուժիմի յենարան-ուժ, որոշ չափով կորցրին իրենց նախկին արտօնեալ կարգավիճակը: Զգալիօրէն թերեւացաւ նահանգի հայերի նկատմամբ նրանց լուծը:

Վերոնշեալ գործընթացների հետեւանքով Արեւմտեան Հայաստան սկսեցին վերադառնալ նախկին ժամանա-

<sup>70</sup> Ազատ Ս. Համբարեան, Երիտրուրքի ազգային ու հողային քաղաքականութիւնն եւ ազարագրական շարժումներն Արևմտահայաստանում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1979, էջ 20–21. նաև՝ Վահան Բայրութեան, Օամաննեան Կայսրութեան պատմութիւն, ԵՊՀ հրատ., Երեւան, 2011, էջ 608:

<sup>71</sup> Խաֆիրը կամ խաֆիրութիւնն առաջացել է արաբերէն խաֆիր կամ դաֆիր բառից, որ նշանակում է պահապան: Դրա եռորինն այս էր, որ նի դէպքում զիւղացիներն էին դիմում աղաներին կամ քուրդ ցեղապետերին՝ խնդրելով կողմնակի յարձակումներից պաշտպանութիւն եւ պարտաւորութելով, որ կը վճարեն դրա համար, մի այլ դէպքում աղաներն իրենց էին իրենց յայտարարում զիւղացիներին պաշտպանողներ եւ այդ պաշտպանութեան համար ստիպում էին նրանց վճարել զանցան տուրքեր (Ա. Ս. Համբարեան, «Սոցիալական տերմիններն Արեւմտեան Հայաստանում (XIX դար–XX դարի սկիզբ)», Պատմաբանասիրական հանդէս, 1992:2–3, էջ 137–38):

<sup>72</sup> Բդէեաններ, էջ 269:

կաշրջանում Բալկանեան Երկրներում եւ Կովկասում հանգրուանած տարագիրներից շատերը: Ըստ Պիրլիսում ռասական հիւպատոս Վ. Շիրկովի 1909 Սեպտեմբերի զեկուցագրի արդէն 1909ի սկզբներին Տարօն էր վերադարձել մոտ 5000 մարդ: Հիւպատոսը նաև նշում էր, որ Օուսաստանից Թուրքիա վերադարձող հայերի քանակը գնալով մեծանում է<sup>73</sup>: Ըստ մամուլում հրապարակուած տուեալների՝ 1909 Սեպտեմբերի դրութեամբ Արեւմտեան Հայաստան էր վերադարձել մոտ 20,000–25,000 վանեցի եւ մշեցի հայ<sup>74</sup>:

Սկսեցին Պիրլիսի նահանգ աստիճանաբար վերադարձնալ նաև քրդերի ճնշումների հետեւանքով ներքին տեղահանուած՝ հարեւան նահանգներում ապաստան գտած որոշ հայեր: Մասնաւրապէս, այդ երեսոյի մասին իր նորերում արձանագրում է 1910 Սեպտեմբերին Խոյք-Բոնաշէնի գիւղերով ճանապարհորդած Արշակ Սաֆրաստեանը, որն այդ ժամանակ զրադեցնում էր Տիարպերիրում բրիտանական փոխհիւպատոսի պաշտօնը<sup>75</sup>: Այսպէս, նա նշում է, որ Խոյք-Բոնաշէնի շրջանի Գեղոնք (Գելոնք) բնակավայրում 1907ին գրեթէ հայ չէր մնացել, սակայն 1910ին իր այցելութեան ժամանակ գիւղը համեմատաբար շէն էր եւ բարգաւած: Գիւղի հայ մեծանուրի խօսքերով, մօտակայ ժամանակներում բնակավայր պէտք է վերադարձնային նախկինում Խնուս փախած չորս ընտանիք<sup>76</sup>:

Իր բնակչութիւնը սկսել էր վերականգնել նաև նոյն շրջանի Լորտնձոր (Լոդրձոր) բնակավայրը: Եթէ Սաֆրաստեանի 1907ի այցելութեան ժամանակ այնտեղ կար ընդամենը 7 տուն հայ, ապա 1910ին գիւղի հայ տների թիւը հասել էր 23ի: «Այժմ սահմանադրութիւնն յիշոյ վերադարձած էին փախարականներ եւ դեռ պիտի զայրա որիշներ» հաղորդում է հեղինակը<sup>77</sup>:

Դրա հետ մէկտեղ սակայն, 1912 Հոկտեմբերին Տարօնի թեմի հոգեւոր առաջնորդ Ներսէս Եայսկոպոս Խարախանեանը Տարօնի հայութեան վիճակին նուիրուած իր զեկուցագրերից մէկում արձանագրում էր. «Օսմանիան սահմանադրութեան հոչակումը որքան որ մեծ խանդավառութեամբ ընդունուեցաւ բոլոր հայերու կողմանէ սակայն անոր

<sup>73</sup> Համբարեան, Երիտրուրիքի ազգային ու հողային քաղաքականութիւնը, էջ 20–21:

<sup>74</sup> «Վարանը ծեզ կանչում է», Հորիզոն (Թիֆլիս), 4 Սեպտեմբերի 1909, № 28, էջ 1:

<sup>75</sup> Ա. Սաֆրաստեան, «Խոյք-Բոնաշէն զաւաները. ուղեւորական տեղեկագրութիւններ», Հանդէս ամսօրիայ, Վիեննա, 1933, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, էջ 612 («Սահմանադրութիւնն ի վեր զգալապէս թիրեւած էր Ծէկօցի հւ Խոյքոցի աշխրէքների լուծը այս (Խոյք-Բոնաշէնի Թաղվածոր հայաբնակ բնակավայր - Օ. Թ.): հւ շրջակայ հայ գիւղերի վրայէն, եւ ցիրուցան զաւանացիները դական կը վերադառնային իրենց հողերի վրայ»): Դրա հետ մէկտեղ պէտք է նշել, որ քրդերի կողմից հայկական գիւղերի ասպատակումները եւ հարստահարութիւնները չեն վերացել, Սաֆրաստեան իր նորերում նշում է նման միքանի օրինակներ:

<sup>76</sup> Նոյն, էջ 613 (Գեղոնք գիւղի հայ բնակչութեան բուարանակի վերաբերեալ վիճակագրական տուեալները տե՛ս ստորեւ՝ Խոյք-Բոնաշէնի շրջանին վերաբերող բաժնում):

<sup>77</sup> Նոյն, էջ 615: Հայերի տունդարձի երեսոյի մասին հեղինակն արձանագրում է նաև Խոյք-Բոնաշէնի Թաղավանը եւ Շամէանը բնակավայրերին մասին խօսելիս (Սաֆրաստեան, «Խոյք-Բոնաշէն զաւաները», Հանդէս ամսօրիայ, 1934, Մայիս-Յուլիս, էջ 308):

արդիմքը չեղաւ այն, ինչ որ կ'ակնկալէր ճնշուած ժողովուրդը. իրաւ է, մէկ երկու տարի մասնակի խաղաղութիւն մը եւ ապահովութիւն տիրեց ու երթևելուրդիւնները դիւրացան, բայց իմնական բարենորդուս մը եւ բարեկարգութիւն մը երեք շգրծադրուեցաւ եւ միու թիմի մութ անկինները, ինչպէս են Սասուն, Խոյք, Բոնաշէն, Սօվոկան եւ այլն, այն իսկ ենթարկուած մնացին հնէն ի վեր տիրող բռնութեանց ներքիւ եւ որ աստիճան մը աւելի ծանրացաւ. որովհետիւ ի լուր սահամադրութեան ճնշուածները շարժում մըրին անոնց լուծը բօթափելու, սպանութիւններ, առեւանզութիւններ եւ ասարառութիւններ ու գողութիւնները շարունակուեցան եւ շարագործները մնացին անպարհի<sup>78</sup>:

Պիթլիսի նահանջ վերադարձող հայերը բախուեցին մի շարք խնդիրների, որոնցից ամենակարեւորն ու սուրբ հոդայինն էր՝ արդուիհամիղեան բռնածնշումների տարիներին քուրդ եւ քուրդ խոշոր հողատէրերի կողմից տարբեր ճանապարհներով հայերից խորած հողակտորները ես ստանալու հարցը: «Հայերը բռնութեան շրջանին ոչ միայն կողոպարուած էին, ոչ միայն հազարաւոր պարուական կենաքեր զոհուած էին, այլ Համիլդի հայացինց քաղաքականութեան քաջազերուած քուրդ ու քիւրդ պէյնը ու աղաներ հայերու կաղուածներ յափշտակած էին. զիս չկայ, որ այդ զրկանքին ենթարկուած չըլլար: ... Այս մասին մանաւանդ անկունանի է այն հայերու վիճակը, որոնք ժամանակին սուրէ եւ հուրէ փախչելով գաղրած էին ասդ մեծ մասը ուստական հողի վրայ ապասրանած ու սահմանադրութեան լուրը առնելով վերադարձած էին հայրենիք. ասոնք մինչեւ այսօր էլ չկրցան չեոք չգել իրենց կաղուածները ու կը մնան երեսի վրայ դոնէ դուռ բափառական, ոչ վարելահող ունին եւ ոչ գուն-բնակարան, ոչ ոք կը գրայ անոնց արդասութերուն» զբում էր Ներսէս Եպիսկոպոս Խարախաննեանը<sup>79</sup>:

Թէպէտ Օսմանեան Կայսրութեան հայերի առջեւ ծառացած քազմաքի խնդիրներ մնում էին չլուծուած՝ այդուհանդերձ, հալածանքների բուլացման փաստը դրական ազդեցութիւն ունեցաւ այդ թում նաեւ տունդարձի միջոցով Պիթլիսի նահանջի հայ բնակչութեան բուաքանակի աճի վրայ:

Մուշի գաւառի Մուշի, Մանազկերտի եւ Պոլանըիսի գաւառակների հայաբնակ բնակավայրերի հայ բնակչութեան բուաքանակի համար մենք բացառիկ հնարաւորութիւն ունենք համեմատելու մէկ աղրիքի՝ Մշոյ թեմի առաջնորդարանի քարտուղար Նազարեթ Մարտիրոսեանի կողմից կազմած երկու վիճակագրական ցուցակ, որոնցից մէկը վերաբերում է 1908ի վերջ-1909ի սկզբի, միւսը 1914ի վերջ-1915ի սկզբի դրութեանը: Ինչպէս կարող ենք տեսնել Աղիսակ 1ում, եթէ 1909ի տունալներով երկու ցուցակում համընկնող Մշոյ դաշտի 89 հայաբնակ բնակավայրերում կար 7591 տուն հայ, ապա 1914ին արդէն հաշուառուել էր 9511 տուն - 82,276 շունչ հայ: Այսպիսով, ըստ Մարտիրոսեանի

<sup>78</sup> «Հողային խնդիրը Տարօնում (քաղուածք մի գեկուցագրից)», *Արարար*, 1913:Ա, էջ 90. նաեւ՝ Պօղոսեան, *Սասունի պալութիւն*, էջ 288:

<sup>79</sup> «Հողային խնդիրը Տարօնում», էջ 90-91: Երիտրուրքական յեղափոխութիւնից յետոյ արեւմտահայութեան կողմից սուած քաշած հողային խնդիրի մասին մանրամասն տե՛ս՝ Տէր-Կարապետեան, *Հողային հարցը (Պիթլիսի նահանջում հողի գրաման օրինակները էջ 8-28)*. նաեւ՝ Պօղոսեան, *Սասունի պալութիւն*, էջ 283-90. նաեւ՝ Համբարեան, *Երիտրուրքերի ազգային ու հողային քաղաքականութիւնը*, էջ 48-105:

տուեալների՝ Մշոյ դաշտի հայաբնակ գիղերի հայ բնակչութեան աճը վեց տարուայ ընթացքում կազմել է շուրջ 25% կամ տարեկան միջինը 4%ից աւելի (եթէ տարածենք 1914ի վերաբերող տուեալի մէկ տասն ընկնող շնչերի միջին թիւ 8,6ը 1909ի տների թուի վրայ, ապա Մշոյ դաշտի նոյն 89 բնակավայրերի համար շնչերի թիւը 1909ին 65,735 էր)<sup>80</sup>:

Նոյնպէս, ըստ Մարտիրոսեանի տուեալների՝ Մանազկերտի գաւառակի երկու ցուցակներում համընկնող 34 անուն բնակավայրերում 1909ին կար 1082 տուն հայ, 1914ին՝ 1305 տուն հայ 10,808 շունչ բնակչութեամբ (տների թուի աճը 20.6% կամ տարեկան 3.4% (տե՛ս՝ Աղիսակ 2)<sup>81</sup>: Պուլանըխի գաւառակի պարագայում հայ տների թիւը երկու ցուցակներում համընկնող 24 բնակավայրերում 2393ից (1909) բարձրացել էր 3324ի (1914)՝ 38.9%-ով կամ տարեկան շուրջ 6.5%-ով (Աղիսակ 3)<sup>82</sup>: Անշուշտ, բնակչութեան նման բարձր աճի բափերը պայմանաւորուած էին ոչ միայն բնական աճով, այլ նաև տունդարձով<sup>83</sup>:

1914ի Փետրուարի 8ին ստորագրուեց ոուս-քուրքական համաձայնագիրը, որով նախատեսում էին բարենորոգում-մեր իրականացնել կայսրութեան արեւելեան հայաբնակ նահանգներում<sup>84</sup>: Այդ համաձայնագրի դրոյքների կեանքի կոչելը, անշուշտ, բարելաւելու էր հայութեան կացութիւնը և դրանով նպաստելու էր դէպի Պիթլիսի նահանգ հայերի տունդարձի միտումների ամրապնդմանը: Սակայն յայտարարուած բարեփոխումներն այդպէս էլ մնացին թրի վրայ. երիտրուրքական կառավարութիւնն առաջին աշխարհամարտի բռնկումից անմիջապէս յետոյ չնետալ յայտարեց բարենորոգումների համաձայնագիրը՝ մեկնարկ տալով Օսմանեան Կայսրութիւնում հայ բնակչութեան բնաջնջման միջոցով Հայկական Հարցի վերջնական լուծման իր ծրագրին:

<sup>80</sup> Մշոյ գաւառակի համար Մարտիրոսեանի 1909ի տուեալները տե՛ս՝ Ա.-Դօ, Վանի, Պիթլիսի և Էրզրումի վիլայէթները. ուսումնասիրութեան մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրասական և գնդրիսական դրութեան, տպարան «Կուտուրա», Երեւան, 1912, էջ 104–7, իսկ 1914ի տուեալները՝ Նազարեթ Մարտիրոսեան, «Համաեւրոպական պատերազմի ընթացքում ամայացած Արեւելեան Հայաստանի գաւառների վիճակագրութիւնը», Վան-Տուս, հասարակական, քաղաքական, գրական շարարարէր, 1916, Փետրուարի 14, № 12, էջ 8–9:

<sup>81</sup> Մանազկերտի գաւառակի համար Մարտիրոսեանի 1909ի տուեալները տե՛ս՝ Ա.-Դօ, Վանի, Պիթլիսի և Էրզրումի վիլայէթները, էջ 149–150, իսկ 1914ի տուեալները՝ Մարտիրոսեան, «Համաեւրոպական պատերազմի ընթացքում ամայացած Արեւելեան Հայաստանի գաւառների վիճակագրութիւնը», Վան-Տուս, 1916, Փետրուարի 28, № 14, էջ 7:

<sup>82</sup> Պուլանըխի գաւառակի համար Մարտիրոսեանի՝ 1909ի տուեալները տե՛ս՝ Ա.-Դօ, Վանի, Պիթլիսի և Էրզրումի վիլայէթները, էջ 146, իսկ 1914ի տուեալները՝ Մարտիրոսեան, «Համաեւրոպական պատերազմի ընթացքում ամայացած Արեւելեան Հայաստանի գաւառների վիճակագրութիւնը», Վան-Տուս, 1916, № 14, էջ 7:

<sup>83</sup> Աղուիանդերձ, չենք կարող նաև բացառել Մարտիրոսեանի կողմից 1909ին հայերի թիւը որոշ չափով թերհաշուառելու և այդ թերհաշուառումն իր 1914ի վիճակագրութեան մէջ վերացնելու հաւանականութիւնը:

<sup>84</sup> 1914 Փետրուարի 8ի ոուս-քուրքական համաձայնագրի մասին տե՛ս՝ «Հայկական հարց» հանրագիտարան, էջ 392–393, համաձայնագրի բնագրի հայերէն բարգմանութիւնը տե՛ս՝ Լ.օ, Հայոց Հարցի վաւերագրէրը, տպարան Ն. Աղանեանցի, Թիֆլիս, 1915, էջ 332–340:

**Աղյուսակ 1.** Մշոյ գալառակի հայ բնակչութեան քուաքանակն ըստ Նազարէք Մարտիրոսեանի 1909ի և 1914ի տուեալների

№	Բնակավայր	1909			1914		
		Տուն	Տուն	Ըունչ	Տուն	Տուն	Ըունչ
1	Մուշ ք.	1200	1376	12,450			
2	Ալատին	8	25	253			
3	Ալիզլըն	80	65	560			
4	Ալիզնան	30	40	318			
5	Ալիջան	80	130	1420			
6	Ալուառինջ	160	165	1380			
7	Ալրենիս	80	3	27			
8	Աղջան	120	220	1860			
9	Ապրլպուհար	20	32	278			
10	Առաղ	70	103	797			
11	Առինջ	150	135	1185			
12	Առինջվանք	60	68	540			
13	Առնիստ	70	70	600			
14	Արագ	30	30	200			
15	Արգավանք	80	110	860			
16	Արտխօնք	40	75	560			
17	Արտօնք	120	147	1105			
18	Աւազադիր (Խանողիսի)	40	42	336			
19	Աւազադիր (Չուխուրի)	100	97	672			
20	Աւզուտ	60	77	621			
21	Աւորգաղի-քոշք	10	13	145			
22	Աւան	170	320	2870			
23	Բազու	40	40	290			
24	Բզից	50	74	520			
25	Բերդակ	100	145	1170			

№	Բնակավայր	1909			1914		
		Տուն	Տուն	Ըունչ	Տուն	Տուն	Ըունչ
26	Բլել	20	22	154			
27	Բնատխներ	8	16	143			
28	Բոստաքէնտ	80	112	977			
29	Գառնի	140	125	1190			
30	Գլաղաճ	100	135	1450			
31	Գոմեր	80	110	910			
32	Գոմս	-	70	120	944		
33	Գուարս	50	75	640			
34	Դրմերտ	100	90	872			
35	Դւնիկ	30	60	410			
36	Երիշտէր	70	95	1160			
37	Զիարէք	160	275	2480			
38	Թիլ	50	65	545			
39	Իրիզակ	50	70	724			
40	Խաշխալտաղ	60	90	763			
41	Խասգիլ	350	423	3776			
42	Խարդոս	30	45	320			
43	Խարձ	80	155	1150			
44	Խեյպեան	100	122	1070			
45	Խոբեր	30	37	340			
46	Խորոնք	50	33	236			
47	Խւներ	20	44	352			
48	Ծղակ	20	50	356			
49	Ծոգեստ	12	30	210			
50	Կուրափի	90	140	1260			

№	Բնակավայր	1909		1914	
		Տուն	Տուն	Ըունչ	Տուն
51	Հասանօտա	30	45	425	
52	Հաւատորիկ	65	165	1420	
53	Հացիկ	30	35	271	
54	Հերկերտ	20	45	340	
55	Զափնա	40	55	396	
56	Զիսահի	45	75	630	
57	Մառնիկ	15	35	281	
58	Մեղսի	25	42	385	
59	Մշոագոմ	80	78	780	
60	Մողոնք	50	79	577	
61	Յարդերք	80	105	865	
62	Յողոնք	90	120	980	
63	Յունան	83	145	1320	
64	Յուշտամ	10	40	310	
65	Նորակն	15	20	135	
66	Նորշէն	300	400	3318	
67	Շեխլան	80	64	510	
68	Շեխուսով	40	65	550	
69	Շեյխապիմ	30	30	250	
70	Շմլակ	40	42	295	

№	Բնակավայր	1909		1914	
		Տուն	Տուն	Ըունչ	Տուն
71	Պաղլու	40	45	415	
72	Ջրիկ	120	85	680	
73	Սմձնուտ	40	35	290	
74	Սոխզոմ	120	104	832	
75	Սորտար	60	68	630	
76	Սովուս	120	133	1120	
77	Վարդենիս	200	189	1712	
78	Վարդիսաղ	25	25	200	
79	Տերբեւանք	60	90	660	
80	Տերըք	40	4	350	
81	Տոմ	40	45	432	
82	Ցրօնք	300	275	2560	
83	Ուրուդ	100	135	1350	
84	Փեթար	30	52	365	
85	Փողեկով	40	75	560	
86	Քարձոր	40	65	490	
87	Քիւրտմէյտան	50	64	510	
88	Քրդագոմ	150	161	1388	
89	Քօլոսիկ	30	35	245	
<b>Ընդամենք</b>		<b>7591</b>	<b>9511</b>	<b>82,276</b>	

**Աղյուսակ 2.** Մանագլերտի զաւառակի հայ բնակչութեան թուաքանակն ըստ Նազարէք Մարտիրոսեանի 1909 ի և 1914ի տուեալների

№	Բնակավայր	1909		1914	
		Տուն	Տուն	Ըունչ	Ըունչ
1	Ակներ	35	48	351	
2	Այնախօծան	25	40	380	
3	Բազրան	15	15	126	
4	Բանզուէ	25	26	237	
5	Գարաքայա	50	78	725	
6	Գերանլղ	9	8	72	
7	Եարամիշ	7	8	57	
8	Էրմալ	15	17	160	
9	Թոնտրակ	35	35	215	
10	Էնտրիս գիլ	10	8	61	
11	Խանօղի Վերին				
12	Խանօղի Ստորին	15	28	234	
13	Խասմիկ	44	75	643	
14	Խարապա-Խասմիկ	47	31	234	
15	Խարալի	6	6	43	
16	Խոշաջի	5	3	27	
17	Խօրանլի	65	45	400	
18	Կանիկոր	15	5	56	

№	Բնակավայր	1909		1914	
		Տուն	Տուն	Ըունչ	Ըունչ
19	Կուշտիան	15	6	54	
20	Հասան փաշա	7	6	59	
21	Հասէ	8	12	72	
22	Մանագլերտի բերդ	80	126	945	
23	Մարմուս	25	37	300	
24	Մօլլա Մստաֆա	30	28	217	
25	Մօլլարադ	10	20	145	
26	Նորատին	90	161	1742	
27	Շեյքանաւա	3	11	91	
28	Ռստամկէտիկ	136	210	1411	
29	Սարտառտ	5	5	37	
30	Սուլբանլու	40	15	116	
31	Տերքք	60	95	722	
32	Տիւկնուկ	80	45	438	
33	Տորախան	30	12	108	
34	Տօլաղպաշ	40	40	330	
<b>Ընդամենը</b>		<b>1082</b>	<b>1305</b>	<b>10,808</b>	

Եղիսակ 3. Պուլանըխի գաւառակի հայ բնակչութեան քուաքանակն ըստ Նազարեթ Մարտիրոսեանի 1909ի և 1914ի տվյալների

№	Բնակավայր	1909		1914	
		Տուն	Տուն	Ըունչ	Տուն
<b>Վերին Պուլանըխ</b>					
1	Բլոր	60	27	175	
2	Գարա-դըլ	85	186	1372	
3	Եօնմէլի	250	225	1650	
4	Թէղուտ	70	180	1186	
5	Լարար	80	100	675	
6	Խարապաշէր	30	77	606	
7	Կոփ	450	543	4513	
8	Համզա-շէյխ	150	179	1264	
9	Մէջիթու	125	135	950	
10	Միրպար	30	50	472	
11	Շէյխ Եազոր	120	185	1200	
12	Շիրուան-շէյխ	150	168	1141	
13	Ոտնչոր	90	170	1044	
14	Փիրան	20	45	341	
15	Ջէրէղու	100	215	1506	
<b>Ընդամենը Վերին Պուլանըխ</b>		<b>1810</b>	<b>2485</b>	<b>18,095</b>	

№	Բնակավայր	1909		1914	
		Տուն	Տուն	Ըունչ	Տուն
<b>Ներքին Պուլանըխ</b>					
16	Ազրակ	45	40	283	
17	Ասրի	30	45	278	
18	Բրգաշէն	50	80	593	
19	Կէապօլան	30	35	265	
20	Լիզ	200	275	1768	
21	Խօշ-կեալտի	120	170	1428	
22	Կողակ	45	48	471	
23	Մօլլարենտ	25	37	253	
24	Յատկոն	38	109	835	
<b>Ընդամենը Ներքին Պուլանըխ</b>		<b>583</b>	<b>839</b>	<b>6174</b>	
<b>Ընդամուր գումար</b>		<b>2393</b>	<b>3324</b>	<b>24,269</b>	

## Դ. Պիրլիսի նահանգի վարչատարածքային բաժանումը 1878–1914ին

Արևմտեան Հայաստանի Պիրլիսի նահանգը կազմուած էր պատմական Մեծ Հայքի Տուրութեան և Աղձնիք նահանգների տարածքների վրայ: Օսմանեան իշխանութիւններն այն ստեղծել էին որպէս առանձին վարչատարածքային միաւոր 1880–81ին՝ Վանի և Տիարպերի նահանգներից առանձնացուած տարածքներից<sup>1</sup>:

1880–90ականներին նահանգի վարչական սահմանները գտնուում էին անընդհատ փոփոխման գործընթացի մէջ: Ըստ 1884–85ի *Սալմամէն*<sup>2</sup> տուեալների՝ նահանգի վարչական բաժանումն ուներ հետեւեալ պատկերը:-

1. Պիրլիսի գաւառ, որը բաղկացած էր 5 գաւառակներից՝ Պիրլիս, Խլար, Խիզան, Մօտկան և Կարճկան.
2. Մուշի գաւառ, որը բաղկացած էր 4 գաւառակներից՝ Մուշ, Վարդո, Պուլանըն, Մանազկերտ.
3. Սղերդի գաւառ, որը բաղկացած էր 6 գաւառակներից՝ Սղերդ, Շիրվան, Էրուհ, Պերվարի, Ունդուան, Խարզան.
4. Կէնճի գաւառ, որը բաղկացած էր 4 գաւառակներից՝ Կէնճ, ճապաղուր, Խուլփի և Սասուն<sup>3</sup>:

Արդէն երկու տարի անց ոուս ուսումնասիրող Ալեքսանդր Գիպպիուսը, որպէս սկզբնադրիր նշելով Երգումի նահանգի 1888ի *Սալմամէն*, տալիս է Պիրլիսի նահանգի վարչական բաժանման հետեւեալ պատկերը:-

1. Պիրլիսի գաւառ. գաւառակներն էին 3ը՝ Պիրլիս, Խլար, Խոյը (Մօտկան).
2. Մուշի գաւառ. գաւառակներն էին 4ը՝ Մուշ, Վարդո, Պուլանըն, Մանազկերտ.
3. Սղերդի գաւառ. գաւառակներն էին 7ը՝ Սղերդ, Շիրվան, Աղարիս (գաւառակի կազմի մէջ էին մտնում Կեցանը, Ներքին Կարկառը և Սպարկերտը), Էրուհ, Պերվարի, Ունդուան և Խարզան.
4. Կէնճի գաւառ. գաւառակներն էին 4ը՝ Կէնճ, ճապաղուր, Խուլփի և Սասուն<sup>4</sup>:

<sup>1</sup> Sezen, *Osmanni Yer Adlari*, էջ 124: Մուշի սանջակը նախքան վերջնականապէս Պիրլիսի նահանգի կազմում ընդգրկուելը, մի կարճ ժամանակով (1881–83) նորից յիշատակուում է Վանի նահանգի կազմում (մանրամասն տե՛ս՝ Andreas Birken, *Die Provinzen des Osmanischen Reiches*, Dr. Lidwig Reichert verlag, Wiesbaden, 1976, էջ 184):

<sup>2</sup> *Սալմամէն* էին կոչուում օսմանեան կենտրոնական և նահանգային իշխանութիւնների կողմից հրատարակուող պաշտօնական տարեգրերը, որոնք տեղեկութիւններ էին պարունակում Օսմանեան Կայսրութեան և /կամ նրա առանձին վարչական միաւորների վարչատարածքային բաժանման, բնակչութեան, տնտեսութեան և ֆինանսների վերաբերեալ:

<sup>3</sup> Justin McCarthy, *The Arab World, Turkey and the Balkans, 1878–1914. A handbook of historical statistics*, G.K. Hall, Boston, 1982, էջ 16:

<sup>4</sup> А.И. Гиппіусъ, *Статистические таблицы вилайетовъ Тураецкой империи, близжайшихъ къ Закавказью*, Типъ. канцъ. Главноначальствъ. гражд. частью на Кавказѣ, Тифлисъ, 1889, էջ 12–13:

1880ականների վերջերին Պիթլիսի նահանգը ենթարկում է վարչական նոր վերաձեռնումների: Աղաքիսի գաւառակը լուծարում է, նրա կազմի մեջ մտնող Կեցանը, Կարկառը և Սպարկերտը ընդգրկում են Խիզանի գաւառակի կազմում: Վանի գաւառին է կցում Կարճկանը (1888), իսկ Սասունի գաւառակը դուրս է բերում Կէնճի գաւառի կազմից եւ միացում Մուշի գաւառին:

Նահանգի վարչատարածքային բաժանումն արդէն 1890ականների սկզբներին ունէր հետեւեալ տեսքը:-

1. Պիթլիսի գաւառ, բաղկացած էր 4 գաւառակից՝ Պիթլիս, Խլաթ, Խիզան, Մօտկան.
2. Մուշի գաւառ, բաղկացած էր 5 գաւառակներից՝ Մուշ, Պուլանըխ, Մանազկերտ, Վարդո և Սասուն,
3. Սղերդի գաւառ, բաղկացած էր 7 գաւառակներից՝ Սղերդ, Ռեղուան, Շիրվան, Էրուհ, Խարզան, Պէրվարի և Հազզօ,
4. Կէնճի գաւառ, բաղկացած էր 3 գաւառակներից՝ Կէնճ, Շապաղզուր և Խուլփ<sup>5</sup>.

1890ականների երկրորդ կեսին փոփոխութիւններ են կատարում Սղերդի գաւառի կազմում՝ Ռենդուանը միաւորում է Խարզանի գաւառակին, իսկ Հազզօն միացում է Սասունի գաւառակին (1899): Այս փոփոխութիւններից յետոյ 1900ականների սկզբներին նահանգի վարչական բաժանումը ստանում է այն տեսքը, որը պահպանում է մինչեւ առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակը (Աղիսակ 4):

Համանգի վարչատարածքային բաժանումը Մեծ Եղեռնի նախօրեակին<sup>6</sup>

	Գաւառակ	Տարածութիւն (քառ. կմ)
	Պիրլիս	1286
	Խարք	1138
	Խիզան	1394
	Մօսլկան	1138
	Մուշ	2703
	Մանազկերտ	2561
	Պուլանըլս	1679
	Վարդո	1565
	Սասուն	2219
	Կէնճ (Կինճ)	1309
	Շապաղջուր	2447
	Խոլլի	1422
	Սղերդ	797
	Էրուհ	1992
	Պէրփարի	1536
	Խարզան	1570
	Շիրվան	1195

Այսպիսով, Մեծ Եղեռնի նախօրեակին Պիրլիսի նահանգը բաղկացած էր չորս գաւառից եւ տասնեօր գաւառակից: Նահանգի ընդհանուր տարածութիւնն ըստ տարրեր տուեալների կազմում էր 27,100 քառ. կմ (1904 ընդարձակ օրացոյց),

\* McCarthy, *The Arab World, Turkey, and The Balkans (1878–1914)*, էջ 21. նաև՝ Kemal H. Karpat, *Ottoman population 1830–1914: Demographic and social characteristics*, The University of Wisconsin Press, Wisconsin, 1985, էջ 174: Գաւառակների տարածութիւններն՝ ըստ Մաևսկի, Յօնի-Ստատистическое описание Вансского и Битлесского вилаетовъ. Географический очеркъ, էջ 12–13: Պիրլիսի նահանգի վարչական բաժանումն ըստ գաւառների եւ գաւառակների տես 1904 Ընդարձակ օրացոյց Ա. Փրկչիան Հիանդանից հայց, տպագրութիւն Յ. Մատրեսեան, Կ. Պոլիս, 1903, էջ 228:

27,951 քառ. կմ (Մաեսկի) կամ 29,850 քառ. կմ (Քինէ)<sup>7</sup>:

1878–1914՝ Թիթլսի նահանգի տարածքն ընդունվուած էր Հայ Առաքելական Եկեղեցու հետեւեալ Եկեղեցական թեմերի կազմում.-

Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի իրաւասութեան տակ.-

1. Բաղեշի Եպիսկոպոսական վիճակ (ընդունվուած էր Թիթլսի, Խլարի և Մօտկանի գաւառակների տարածքները).
2. Տարօնի արքեպիսկոպոսական վիճակ (ընդունվուած էր Մուշի և Կէնճի գաւառների տարածքները).
3. Սղերդի Եպիսկոպոսական վիճակ (ընդունվուած էր Սղերդի գաւառի տարածքը).

Աղքամարի կաթողիկոսութեան իրաւասութեան տակ էր.-

4. Խիզանի Եպիսկոպոսական վիճակ (ընդունվուած էր համանուն գաւառակի տարածքը)<sup>8</sup>:

1883–1903՝ Մշոյ վիճակից առանձին, «մասնաւոր թեմի» կարգավիճակով, գոյութիւն է ունեցել Կէնճի (Կինճ) թեմը<sup>9</sup>: 1904ին Կէնճն արդէն նշում է որպէս Մուշի առաջնորդական վիճակի իրաւասութեան տարածք<sup>10</sup>:

<sup>7</sup> Նախ. նաև՝ Մաևսկի, *Военно-Статистическое описание Вансского и Битлисского вилаетовъ. Географический очеркъ*, էջ 13. նաև՝ Cuinet, էջ 523:

<sup>8</sup> Մաղաքիա արք. Օրմանեան, Հայոց Եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, հրատարակիչը՝ Վ. և Հ. Տեր-Ներսէսեան, Կ. Պոլիս, 1911, էջ 261–62. նաև՝ 1904 ընդարձակ օրացոյց Ա. Փրկչիան Հիանդանցի հայոց, էջ 373–77, 395–96. նաև՝ Արշակ Ալպօյածեան, «Առաջնորդական վիճակներ», 1908 ընդարձակ օրացոյց Ա. Փրկչիան Հիանդանցի հայոց, Կ. Պոլիս, 1908, էջ 313–15, 346:

<sup>9</sup> Ուսումնասիրող Յակոբ Պետրոսեանը Կէնճի թեմի ստեղծման տարեթիւ է նշում 1883ը (Յակոբ Պետրոսեան, «Վերջին առաջնորդը Տարօն աշխարհի (Վարդան ծայրագոյն վարդապետ Յակոբեան)», Էջմիածին, 2012:ԿԸ(ԺԲ), էջ 51):

<sup>10</sup> 1904 ընդարձակ օրացոյց Ա. Փրկչիան Հիանդանցի հայոց, էջ 375:

## Ե. Օսմանեան իշխանութիւնների վիճակագրական տուեալները Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան քուի վերաբերեալ (1878–1914)

Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան քուարանակի վերաբերեալ օսմանեան կառավարութեան վիճակագրական տուեալները բազմաբնոյք են: Դրանք օսմանեան մարդահամարների եւ հաշուառումների տեղեկութիւններն են (1881/82–93, 1895, 1896, 1897, 1906), բուրքական նահանգային սպանամէնների տուեալները, մեծ տերութիւնների վիճանագիտական ներկայացուցիչներին տրամադրուած վիճակագրական աղիսակները (1878–80, 1897, 1914): Ներկայացնենք դրանք պահպանելով ժամանակագրական կարգը:

1880ին մեծ տերութիւնների դեսպաններին օսմանեան կառավարութեան կողմից ներկայացուած Արևմտեան Հայոստանի վեց նահանգների բնակչութեան բուրքական պաշտօնական վիճակագրական տուեալներով՝ Պիրլիսի նահանգում բնակում եր արական սեռին պատկանող 77,993 հայ (բաշխումն ըստ գաւառների տե՛ս Աղիսակ 5):

1881/82–1893ի օսմանեան մարդահամարի տուեալներով՝ նահանգում հաշուառուել եր 101,358 առաքելական հայ բնակչութիւն: Առանց ազգային պատկաննելութեան նշում է նահանգի կարողիկ 4948 շունչ, եւ բողոքական 1498 շունչ բնակչութիւնը<sup>2</sup>, ընդամենը 107,804 շունչ քրիստոնեայ տարրեր յարանուանութիւններին պատկանող բնակչութիւն<sup>3</sup>:

Ըստ 1897ի օսմանեան տուեալների՝ նահանգի հայ բնակչութեան քուարանակը 111,102 էր, որից 5636ը՝ կաթոլիկ, 1751ը՝ բողոքական (տե՛ս նաև Աղիսակ 6 և 7):<sup>4</sup>

1906ի մարդահամարի տուեալներով՝ Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան թիւն եր 96,944 շունչ, այդ թում առաքելական հայեր՝ 90,209, կաթոլիկ հայեր՝ 5174 եւ բողոքականներ՝ 1551 շունչ (տե՛ս նաև Աղիսակ 6 և 7):<sup>5</sup>

1914ի սկզբներին հայկական բարեփոխումների հարցի շուրջ ընթացող դիւանագիտական բանակցութիւնների առի օսմանեան կառավարութեան կողմից մեծ տերութիւնների ներկայացուցիչներին տրամադրուած վիճակագրական տուեալների համաձայն՝ Պիրլիսի նահանգում կար 110,462 հայ, այդ թում՝ 65,232 արական եւ 45,230 իգական սեռի (ըստ երեւյթին այս քուի տակ ներառուած են միայն առաքելական հայերը, տուեալների բաշխումն ըստ նահանգի

<sup>1</sup> British Documents on Ottoman Armenians, vol. II, Türk Tarih kurumu, Ankara, 1983, էջ 129:

<sup>2</sup> Հաշուի առնելով, որ Պիրլիսի նահանգի կաթոլիկ եւ բողոքական բնակչութիւնը չնշին բացառութեամբ ազգութեամբ հայեր էին, այստեղ եւ յետագայ շարադրանքում օսմանեան առի բնութանը առանց ազգային պատկաննելութեան նշման հաղորդուող կարողիկների եւ բողոքականների թիւը գումարում ենք հայ բնակչութեան քուին:

<sup>3</sup> Karpat, էջ 130 (բաշխումն ըստ գաւառների տե՛ս՝ Աղիսակ 6 և 7):

<sup>4</sup> Karpat, էջ 196:

<sup>5</sup> Նոյն, էջ 162:

վարչական մասը միաւորների բացակայում է):<sup>6</sup>

1914ի օսմանեան այլ վիճակագրութեան տուեալներով (դրանք օսմանեան իշխանութիւնների կողմից շրջանառութեան են դրուել առաջին աշխարհամարտից յետոյ ի հիմնաւորումն, որ հայերը Արևմտեան Հայաստանի տարածքում փորբամասնութիւն են կազմում): Նահանգի հայ բնակչութեան թիւն էր 119,132 շունչ, որից առաքելական հայեր՝ 114,704 շունչ, կարողիկներ՝ 2788, բողոքականներ՝ 1640 (տե՛ս նաեւ՝ Աղիւսակներ 6 և 7) (հայերի ըստ զաւառակների բաշխումը տե՛ս ստորեւ՝ համապատասխան բաժիններում):<sup>7</sup>

Այսպիսով, ըստ օսմանեան կառավարութեան տուեալների՝ Հայոց ցեղասպանութեան նախօրեակին Պիթլիսի նահանգում բնակում էր առաելագոյնը 120,000 հայ:

Ինչպէս արդէն նշել ենք, օսմանեան վիճակագրական տուեալների հիմքերը՝ օսմանեան իշխանութիւնների անցկացուած մարդահամարների եւ հաշուառումների գիտացուցակները, առ այսօր չեն հրատարակուած եւ յայտնի չեն հարցով գրադուող հետազօտողներին, ինչը հնարաւորութիւն չի ընձեռում համայնքել դրանք հայկական գիտացուցակների տուեալների հետ: Մինչդեռ, ինչպէս ցոյց կը տանք աշխատութեան՝ զաւառակ առ զաւառակ հայ բնակչութեան բուաքանակի վերաբերեալ տարրեր գիտացուցակների տուեալների բննութեանը նուիրուած բաժնում, օսմանեան տուեալները որպէս կանոն չեն հաստատում եւ ո՛չ մի հիմնական կամ օժանդակ աղքիւրի կողմից, որոնք իրարից անկախ հաղորդում են աւելի բարձր թիւեր:

1878ին Հայկական Հարցի միջազգայնացումից յետոյ օսմանեան իշխանութիւնների կողմից նահանգի հայ բնակչութեան բուաքանակը նուազ ներկայացնելու միտումը ակնյայտ է, երբ համեմատում ենք 1875ի եւ 1878–80ի օսմանեան վիճակագրութիւնը աւելի ուշ ժամանակի օսմանեան մարդահամարների տուեալների հետ: Այսպէս, 1890ականների օսմանեան վիճակագրական տուեալներով՝ նախկին շուրջ 77,500 հայ առաքելական արական բնակչութեան փոխարէն նահանգի տարածքում բնակում էր ընդամենը 55,777: Դրանով իսկ օսմանեան կառավարութիւնը անգա՞մ տեղական սալնամէնների թերի տուեալները նուազեցնում էր շուրջ 20,000ով (Աղիւսակ 5):

<sup>6</sup> Armenia. Political and ethnic boundaries, 1878–1948, Edited by Anita Burdett, Archive ed., Chippenham, 1998, էջ 324:

<sup>7</sup> Tableaux indiquant le nombre des divers éléments de la population dans l'Empire Ottoman au 1er mars 1330 (14 mars 1914), Constantinople, 1919, էջ 7. նաեւ՝ Meir Zamir, “Population statistics of the Ottoman Empire in 1914 and 1919”, Middle Eastern Studies, Jan., 1981:17(1), էջ 92: Առաքելական, կարողիկ ու բողոքական հայերի թիւն առանձին տե՛ս՝ Karpat, էջ 174: Առաքելական հայերի նոյն 114,704 շունչ թիւը տե՛ս նաեւ առաջին աշխարհամարտի տարիներին Թալէարի համար պատրաստուած տեղեկագրում (*Talaat Pasha's Report on the Armenian Genocide*, London, Gomidas Institute, 2011, էջ 49):

**Եղիսակ 5. Պիրլիսի, Մուշի և Սղերդի գաւառների հայ արական բնակչութեան քուաքանակն ըստ օսմանեան տուեալների**

№	Գաւառ	1875 <sup>8</sup>	1880	1881/82–1893
1	Պիրլիս	10,969	66,768	18,394
2	Մուշ	35,428		28,078
3	Սղերդ	23,932		6514
	Կէնճ	4932	11,225	2791
	<b>Ընդամենը</b>	<b>75,261</b>	<b>77,993</b>	<b>55,777</b>

Աղբիրները նաև փաստում են, որ քուրքական մարդահամարների տուեալները նահանջի հայ ազգաքնակչութեան ևամար չեն համապատասխանում զինուորական տուրքը վճարող հարկատու հայ բնակչութեան փաստացի բոլին, ինչը երեսում է Պուլանըխի գաւառակի օրինակով: Այսպէս, 1898ին գաւառակը տալիս էր արքունի գանձարանը 386,190 դուրուշ զինուորական տուրք, ինչը իրաքանչիր անհատի կողմից տարեկան 38 դուրուշ վճարման պարագայում նշանակում է որ Պուլանըխում արական սերի հայերի ընդհանուր թիւը 10,163 էր<sup>9</sup>, այնինչ, ըստ 1914ի օսմանեան մարդահամարի տուեալների՝ Պուլանըխի հայութեան ընդհանուր թիւը կազմում էր 14,662 շունչ (արական բնակչութիւնը մոտ 7500):

Օսմանեան վիճակագրութիւնը չի դիմանում քննութեան, երբ համեմատում ենք դրա տուեալները առաջին աշխարհամարտի ընթացքում Պիրլիսի նահանջի արեւելեան շրջաններից (Մանազկերտ և Պուլանըխ) ոռոսական Կովկասում ապաստանած փախստական հայերի հաշուառնան տուեալների հետ: Այսպէս, ըստ Սասունո՛ւ 1915ի գարնանը ոռոսական զօրքերի առաջխաղացման եւ նրանց կողմից Մանազկերտի և Պուլանըխի շրջանների գրաւման

<sup>8</sup> Օսմանեան սալամէների տուեալներն ըստ 1886–97ի Ո-իգեում Ո-ուսաստանի փոխիրապատոս Ալեքսանդր Գիպպիուսի (Գրույչ, *Статистическая табличка вилайетовъ Турецкой империи*, լուստ 6. Битоллесский вилайетъ): Տուեալն արտացորում է ընդհանուր ոչ-իլլամադաւան արական բնակչութեան թիւը: Ըստ 1880ի օսմանեան տուեալների՝ հայերը կազմում էին Պիրլիսի նահանջի ոչ-իլլամադաւան բնակչութեան 97%ից աւելը. մնացած 3%ը բաժին էր ընկնում ասորիներին (Kagrat, էջ 194–95):

<sup>9</sup> Բենսէ, *Պուլանըխի կամ Հարք գաւառ*, տպ. Կ. Մարտիրոսեանց, Թիֆլիս, 1901, էջ 33:

արդիւնքում ջարդերից զերծ էր մնացել 34,000 մանազկերտցի և պուլանըխցի հայ<sup>10</sup>: Մէկ այլ աղբիւրի՝ արեւմտահայ փախստականներին օգնութեան հարցերով գրադուող Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան լիազօր Ա. Շարաֆեամի տուեալներով, նախքան վերոնշեալ շրջանների ուսական օօրքերի կողմից գրաւումը, Պուլանըխցի հայութիւնն ունեցել էր 7500, իսկ Մանազկերտի հայերը 950 զոհ, ընդամենը շուրջ 8500 զոհ<sup>11</sup>: Նշուած շրջանների հայերը նաեւ կորուստներ են ունեցել դէպի ուսական Կովկաս 1915ի Յուլիսի օադրի ընթացքում և յետազայ տարիներին՝ մինչեւ առաջին աշխարհամարտի աւարտը: Ըստ «Ամրաստանազիր-տեղեկագիր Բաղէջի կուսակալութեան» փաստարդի տուեալների՝ արդէն 1919ի Փետրուարի դրութեամբ Պուլանըխցի և Մանազկերտի վերապրած հայութեան թիւը մոտ 25,000 էր<sup>12</sup>: Սինչդեռ, ըստ օսմանեան վիճակագրութեան, 1914ին Մանազկերտում բնակում էր 4438, իսկ Պուլանըխում 14,662 շունչ հայ, ընդամենը 19,100 շունչ հայ<sup>13</sup>. տուեալ, որը ցեղասպանութիւնը վերապրած պուլանըխցի և մանազկերտցի հայերի թուից շուրջ 30%-ով ցածր է:

Նշենք նաեւ, որ ամերիկացի ուսումնասիրող Շասրին Մըրֆարքին, ով յայտնի է օսմանեան կառավարութեան վիճակագրութեան տուեալների նկատմամբ իր դրական վերաբերմունքով, Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան պարագայում այնուամենայնի հարկ է համարում էապէս վերանայել դրանք՝ բարձրացնելով առաջին աշխարհամարտի նախօրեակին նահանգի հայերի բուարանակի ցուցանիշը մինչեւ 191,156ի<sup>14</sup>: Այս թիւը գրեթէ համընկնում է

<sup>10</sup> Կարօ Սասունի, *Թրքահայասրամը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914–1918)*, տպ. Սեւան, Պէյրու, 1966, էջ 83. նաեւ՝ Կ. Սասունու՝ «Մոշէն և Սասուն ազատուածները» բոքակցութիւնը Կ. Պոլսում հրատարակուող Շակարպամարտ օրաբերքի 1919 Մայիս 22ի համարում (թիւ 161 (1982), էջ 2):

<sup>11</sup> Ա. Շարաֆեան, «Համառօտ տեսութիւն գաղթականութեան ծագման», *Համբաւարելու*, Թիֆլիս, 3 Յունուար 1916, էջ 46:

<sup>12</sup> «Ամրաստանազիր-տեղեկագիր Բաղէջի կուսակալութեան», *Հայկագիան հայազիրական հանդէս*, 1995:ԺԵ, էջ 542 (փաստարդի մասին աւելի մանրամասն՝ յետազայ շարադրանքում):

<sup>13</sup> Karpat, էջ 174:

<sup>14</sup> Այլուհանդերձ, անիրաժեշտ է նշել, որ Մըրֆարքի կողմից արուած Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան բուարանակի հարցի վերլուծութիւնը լի է սխալներով, որոնք վկայում են, որ հեղինակը բոլորովին անտեղեակ է հայկական վիճակագրական աղբիւրներին: Այսպէս, ուսումնասիրողը իր ծեռքի տակ ունենալով 1912ի պատրիարքարանի տուեալը, որը չէր ընդգրկում Սղերդի գաւառը (180,000 հայ), սխալմամբ վերագրում է այն ամրող նահանգի ազգարնակչութեանը: Համեմատելով օսմանեան և Քինդի տուեալները՝ ուսումնասիրողը թէւ նշում է, որ բուրքական տուեալները իրականութիւնից ցածր են ցոյց տալիս Կէնճի և Սղերդի սանջակների հայ բնակչութեան թիւը, սակայն հետևողական չի գտնում իր բննադատութեան մէջ՝ լույս նահանգի այլ շրջանների հայ բնակչութեան թերհաշուառնան մասին (Justin McCarthy, *Muslims and minorities. The population of Ottoman Anatolia and the end of the Empire*, N.Y. University Press, 1983, էջ 72–74, 77): Մըրֆարքի հաշուարկի մերուդաբնութեան մանրամասն բննական վերլուծութիւնը կատարել է ամերիկահայ ուսումնասիրող Լեւոն Մարաշլեանս (Levon Marashlian, “Population statistics on Ottoman Armenians in the context of Turkish historiography,” *Armenian review*, winter 1987:40(4), էջ 1–59):

նոյն ժամանակի համար Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի հաղորդած տուեալին (տե՛ս յաջորդ բաժինը):

**Աղյուսակ 6.** Օսմանեան կառավարութեան տուեալները Պիրլիսի վիլայեթի հայ բնակչութեան քուաքանակի վերաբերեալ 1878–1914

№	Գաւառ	1881/82–1893			1897		1906			1914
		Ար.	Իզ.	Ընդհ.	Ընդհ.	Ար.	Իզ.	Ընդհ.	Ընդհ.	Ընդհ.
1	Պիրլիս	18,732	12,300	31,032	31,826	16,052	12,564	28,616	37,964	
2	Մուշ	29,758	26,996	56,754	60,739	29,390	23,356	52,746	63,911	
3	Սղերդ	8135	6717	14,852	12,857	5234	4396	9630	11,240	
4	Կէնճ	2791	375	5166	5680	3383	2569	5952	6017	
	Ընդամենը	59,416	48,388	107,804	111,102	54,059	42,885	96,944	119,132	
	Ընդհանուր գումար		107,804		111,102		96,944		119,132	

**Աղյուսակ 7.** Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան բաշխումն ըստ յարանուանութիւնների՝ օսմանեան կառավարութեան 1878–1914 տուեալների համաձայն

№	Գաւառ	1881/82–1893			1897			1906			1914		
		Առաքելական	Կարութիկ	Բողոքական	Առաքելական	Կարութիկ	Բողոքական	Առաքելական	Կարութիկ	Բողոքական	Առաքելական	Կարութիկ	Բողոքական
1	Պիրլիս	30,445	26	561	30,874	138	814	27,832	130	654	37,284	89	591
2	Մուշ	53,776	2476	502	57,802	2449	488	49,769	2448	529	60,682	2699	530
3	Սղերդ	11,971	2446	435	9359	3049	449	6666	2596	368	10,828	-	412
4	Կէնճ	5166	-	-	5680	-	-	5952	-	-	5910	-	107
	Ընդամենը	101,358	4948	1498	103,715	5636	1751	90,219	5174	1551	114,704	2788	1640
	Ընդհ.		107,804			111,102			96,944			119,132	

## **Զ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի եւ այլ հայկական սկզբնադրիւթերի վիճակագրական տուեաները Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան բուի վերաբերեալ (1878–1914)**

### **1. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տուեալներ**

1878–1914՝ Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան թիւը ներկայացնող Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրութիւնները կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբի.-

1. 1878–80ին եւ 1913–14ին Հայկական Հարցի արծարծումների կապակցութեամբ պատրիարքարանի հրահանգով անցկացուած մարդահամարների տուեալներ.
2. Մահաքիա Օրմանեանի պատրիարքութեան օրօք 1902ին, անցկացուած հաշուառման տուեալներ (պահպանուել է Մուշի թեմի հայ բնակչութեան հաշուառման տետրը և Սղերդի թեմի գիւղացուցակ պարունակող տեղեկագիրը), որանց եւ այլ տուեալների հիման վրայ Օրմանեանի կազմուած վիճակագրութիւնը.
3. 1912ին Հայկական Հարցի վերաբացման կապակցութեամբ Հայոց պատրիարքարանին կից ստեղծուած Ապահովութեան Յանձնաժողովի պատրաստած վիճակագրական աղիսակներ, որոնք ներկայացնում են հայ բնակչութեան թիւը 1882ի եւ 1912ի դրութեամբ:

Ներկայացնենք տուեալները՝ պահպանելով ժամանակագրական կարգը:

1878–80ի ընթացքում Հայոց պատրիարքարանի յանձնարարութեամբ կատարուել է նահանգի հայ բնակչութեան բուաքանակի երկու առանձին հաշուառկ: Առաջինը 1878ի գարնանը կատարուած Բաղէշի, Մշոյ եւ Սղերդի առաջնորդարանների հաշուառումն է, որի տուեալներով նահանգում բնակուում էր 207,801 հայ (18,891 տուն), այդ թուն Բաղէշի թեմ՝ 23,848 շունչ (2168 տուն), Մշոյ թեմ՝ 147,741 շունչ (13,431 տուն), Սղերդի թեմ՝ 36,212 (3292 տուն)<sup>1</sup>: Այս տուեալներին մօտ է Մշոյ թեմի հայ առաջնորդի կողմից 1879ի ամռանը Էրզրումում Մեծն Բրիտանիայի հիպատոս Հենրի Թրոտերին (Henry Trotter) ներկայացուած վիճակագրութիւնը, ըստ որի Մուշի եւ Պիթլիսի գաւառների հայ արական բնակչութեան թիւն էր 120,000<sup>2</sup>:

1878ի ամռանը Հայոց պատրիարքարանի յանձնարարութեամբ Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան հաշուառում է կատարել Արիստակէս Վարդապետ Տելկանցը<sup>3</sup>: Ըստ նրա տուեալների՝ նահանգում բնակուում էր 107,895 հայ, այդ

<sup>1</sup> ԳԱԹ, Թ. Ազատեանի ֆոնդ, բաժին 3, վլ. 40,49, 55:

<sup>2</sup> Արման Զ. Կիրակոսեան, Բրիտանական դիւսմագիրութիւնը եւ արեւմբահայութեան խնդիրը (XIX դարի 30-ական րը.–1914ր.), ՀՀ ԳԱԱ, պատմ. Ինստ., «Գիտութիւն, Երեւան, 1999, էջ 137:

<sup>3</sup> Արիստակէս Տէր-Սարգսեան (Տելկանց) (1844, Վան – 1896, Վարագ), արեւմտահայ եկեղեցական գործիչ, բանահաւաք:

թում Մուշի գավառ՝ 58,384, Բաղէջի գավառ՝ 20,473 և Սղերդի գավառ՝ 29,038<sup>4</sup>: Տեսկանցի այս վիճակագրութիւնը իրականից պակաս էր ցոյց տալիս նահանգի հայ բնակչութեան թուարանակը: Այն ցածր է նոյն տարիներին վերաբերող օսմանեան եւ հայկական զրեթէ բոլոր տուեալներից: Սակայն Հայոց պատրիարքարանը, այս տուեալին աւելացնելով Խիզանի և Խալարի գաւառակների վիճակագրութիւնը եւ ստանալով նահանգի համար 130,460 հայ բնակչութիւն, այն ընդգրկում է Արեւմտեան Հայաստանի համար պատրաստուած իր վիճակագրութեան մեջ, որը 1880–81ին տրամադրում է Կ. Պոլսում հաւատարմագրուած մեծ տէրութիւնների դեսպաններին<sup>5</sup>:

Օրինաչափ հարց է ծագում, թէ ինչո՞ Պոլսոյ հայոց պատրիարք Ներսէս Վարժապետեանը իր տրամդրութեան տակ ունենալով այլ, անգա՞մ օսմանեան պաշտօնական աղբիւրներից քաղուած տուեալներ, որոնց համաձայն Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան թուարանակը շատ աւելի բարձր էր 130,460ից, նախընտրեց Տեսկանցի վիճակագրութիւնը: Կարծում ենք, դա ուներ քաղաքական հիմքեր: Բանն այն է, որ նախորդ տուեալները ստացուել էին տների թուարանակի հիման վրայ կատարած հաշուարկների արդիւնքում, իսկ Տեսկանցի տուեալը հիմնուած էր հայ բնակչութեան անհատական հաշուառման վրայ: Դա, ըստ պատրիարքարանի, կարող էր բարձրացնել հայկական վիճակագրութեան արժեքը եւրոպական դիւնեազտների աշքերում: Անհատական հաշուառման՝ որպէս իր կողմից ներկայացուող տուեալների հաւաստիութեան կարեւորագոյն գրաւական լինելու վրայ էր շեշտը դնում Ներսէս պատրիարքը՝ 1880ի ամռանը Կ. Պոլսում Մեծն Բրիտանիայի դեսպանին ուղարկած Արեւմտեան Հայաստանի ազգաբնակչութեան թուարանակի վիճակագրական աղիւսակին կից ուղեկցող նամակում<sup>6</sup>:

Ժամանակագրական առումով նահանգի հայ բնակչութեան յաջորդ ամբողջական հաշուառումը կատարուել է Օրմանեանի պատրիարքութեան օրոք՝ 1902ին: Ըստ Օրմանեանի տուեալների՝ նահանգն ուներ 196,000 հայ բնակչութիւն, որից լուսատրչական հայեր՝ 190,000, կարոլիկ՝ 4000, բողոքական՝ 2000 (բնակչութեան բաշխումն ըստ

<sup>4</sup> Ա. Տեսկանց, Այցելութիւն ի Հայաստան 1878 թ., ՀՍՍՀ ԳԱ Իրատ., Երեւան, 1985, էջ 90–91, 106–8, 126–27: Տեսկանցի մօտ Մշոյ գավառի հանրագրումը թիվ 66,808 շունչ է: Այս թիվը հանել ենք Խնուսի գաւառակի տուեալը 8424 հայ (Մեծ Եղեռնի նախօրեակին վարչական առումով Խնուսը Երգրումի նահանգի Երգրումի գավառի մաս էր կազմում):

<sup>5</sup> Նշուած տուեալը տե՛ս օրինակ՝ Сборникъ дипломатическихъ документовъ. Реформы въ Армении (26 ноября 1912 г. – 10 мая 1914 г.), Гос. тип., Петроград, 1915, էջ 283:

<sup>6</sup> Հայոց պատրիարքարանի իրահանգով 1878–80ին անցկացուած հաշուառումների եւ մարդահամարների մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Թարոյեան, Արեւմտրահայութեան թուարանակի հարցը, էջ 78–87:

գաւառների տե՛ս Աղիսակ 6):

1912ին Հայկական Հարցի վերաբացման կապակցութեամբ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին կից ստեղծուած մարմնի՝ Ապահովութեան Յանձնաժողովի կողմից պատրաստուեց Երկու Վիճակագրական աղիսակ, որոնք արտացոլում էին Օսմանեան Կայսրութեան և Արևմտեան Հայաստանի վեց նահանգների հայ բնակչութեան բուաքանակը 1882ին և 1912ի դրութեամբ: Այդ տուեազներով, Պիթլիսի նահանգում 1882ին բնակում էր 250,000<sup>8</sup>, իսկ 1912ին 198,000 շահնչ հայ (բաշխումն ըստ գաւառների տե՛ս Աղիսակ 8):<sup>9</sup>

Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի յանձնարութեամբ Պիթլիսի նահանգի հայկական թեմական կառոյցներն Օսմանեան Կայսրութեան հայկական այլ թեմերի հետ մէկտեղ հայ բնակչութեան ընդհանուր հաշուառում են իրականացրել և 1913–14ի ընթացքում (պատմագիտական գրականութեան մէջ յայտնի է որպէս 1913–14ի մարդահամար,

<sup>7</sup> Հայոց պատրիարքարանի՝ 1902ի հաշուառման համագումար տուեալը առաջին անգամ հրապարակուել է 1906ին, ֆրանսերեն, բելգիացի դիւանագէտ Վան դեն Ստեն դե Ժեա (F. Van Den Steen de Jehay, *De La Situation Légale des sujets Ottomans Non-Musulmans*, Oscar Schepens & Co, Bruxelles, 1906, էջ 51 (միայն լուսաւորչական հայերի թիւը)), այնուհետեւ, ըստ թեմերի՝ Օրմանեանի կողմից՝ Հայոց Եկեղեցին, էջ 262:

Մշյոյ թեմի բնակչութեան հաշուառումն իրակացրել էր արևմտահայ յայտնի գործիչ Գեղամ Տէր-Կարապետեանը: Նրա պատրաստած տեսորը տե՛ս ՀՅԴ Բոստոնի արխիսի, «Անձնական գրութիւններ, Տէր-Կարապետեան Գեղամ (Տատրակ)» ֆոնդ, պահ 16, դ. 1 («Վիճակագիր Մշյոյ Առաջնորդական բոլոր թեմին - Վարժարանաց, Եկեղեցեաց, վանօրէից, վկայարանաց, շին և աւեր (ի դաշտ Մշյոյ և շրջակայս) - Մատրանց, Նուիրական տեղեաց, բնակչութեան Աւանայ և Ծինից և Եկեղեցական պաշտօնից Հայաքեալ ըստ հրահանգի Ազգ. Պատրիարքարանի 1902 Յունվ. 5 և Յունիս 21 թիւ Շրջարեսական Գրութեանցն Գեր. Պատր. Փոխանորդ Տ. Խոսրով ծ. վրդ. Պէհրիկեան»): Գրութիւնը բնակչութեան համագումար թիւ չի պարունակում, ինչը ենթադրել է տալիս, որ տուեալներն ամփոփուել են արդէն Կ. Պոլսի պատրիարքարանում: 1902ի հաշուառման՝ Սղերոյի թեմի ցուցակը տե՛ս ՀԱԱ, ֆ 412, գ. 1, գ. 1856: 1902ի Վիճակագրութեան որոշ տուեալներ կը ներկայացնեն աշխատանքի՝ առանձին գաւառակներին վերաբերող համապատասխան բաժիններում:

<sup>8</sup> Ըստ գաւառների ու գաւառակների հայ բնակչութեան բաշխումը բացակայում է (Leart, էջ 59. նաև՝ *Population Arménienne da la Turquie avant la guerre. Statistiques établies par le Patriarcat Arménien de Constantinople*, Turabian, Paris, 1920, էջ 9):

<sup>9</sup> Թէոդիկ, Ամէնուն լուսաւորութիւն Մ. Յովակիմեան, Կ. Պոլսի, 1922, էջ 261–62: Այս Վիճակագրութիւնը կազմելիս Ապահովութեան Յանձնաժողովը օգտագործել է 1880–81ի մարդահամարի տուեալները, որոնք պահպանուել էին Մշյոյ առաջնորդ Գարեգին Ալեաքեանի արխիսում: Նա նաև դեկապրում էր նահանգում մարդահամարի կազմակերպման աշխատանքները: Աղիորը վկայում է, որ նահանգի տուեալները հասարուել էին առանձնակի խնամքով՝ դրանք միքանի անգամ ճշտուել են ճշգրտուել են (Մարկոս Նարանեան, «Հայոց Վիճակագիրը», Վերջին լուր, ամէնօրեայ քաղաքական հայարերը, Կ. Պոլսի, 7 Յունուար 1919, էջ 1: Միքայէլ Նարանեանը փոխանցում է առաջնորդի հետեւալ խօսքերը. «Մշյոյ և Պիթլիսի շրջանակին Հայոց Վիճակագրութիւնը և ի հիմք ճշգրած ու ճշգրտած եմ»): Ապահովութեան Յանձնաժողովի տուեալների մասին մանրամասն տե՛ս՝ Թարոյեան, Արևմտահայութեան բուաքանակի հարցը, էջ 92–95:

Նշուած ձեռնարկի նկատմամբ մենք նաեւ օգտագործում ենք 1913ի վիճակացոյց անուանումը, քանի որ հայ բնակչութիւնը հաշուառելու Պատրիարքարանի հրահանգը եւ դրան կից՝ վիճակացոյցի հարցարերերը քեմեր են ուղարկուել 1913ին<sup>10</sup>: Հասկանալի պատճառներով պատրիարքարանը չի հասցրել հանրագումարի բերել եւ հրապարակել մարդահամարի արդինքները: Նշուած մարդահամարի գիլացուցակների տուեալներն ամփոփել են ֆրանսահայ ուսումնասիրողներ Գէորգեանը եւ Փապունեանը, որոնք նաեւ առանձին դէպքերում լրացրել են պակասող տուեալները այլ աղբիւրների կողմից հաղորդուող տեղեկութիւնների միջոցով: Ըստ 1913–14ի մարդահամարի տուեալների հիման վրայ Գէորգեանի եւ Փապունեանի կատարած հաշուարկի Մեծ Եղեռնի նախօրեակին նահանգում բնակում էր 218,404 հայ (բաշխումն ըստ գաւառների տե՛ս Աղիսակ 8)<sup>11</sup>:

Այսպիսով, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից շրջանառութեան մէջ դրուած տուեալներով Մեծ Եղեռնի նախօրեակին Պիրլիսի նահանգում բնակում էր շուրջ 200,000 հայ: Այս թիւը մօտ 1.7 անգամ բարձր է օսմանեան կառավարութեան կողմից հաղորդուող տուեալից (120,000) եւ, այդ առումով, օսմանեան վիճակագրութեան համեմատ աւելի՝ է համապատասխանում նահանգի հայ ազգաբնակչութեան քուաքանակի առարկայական պատկերին:

Այրուհանդերձ, ինչպէս արդէն նշել ենք, գաւառակ առ գաւառակ Հայոց պատրիարքարանի մարդահամարների գիլացուցակների տուեալների այլ աղբիւրների տուեալների ներգրամամբ քննութիւնը ցոյց է տալիս, որ պատրիարքարանի տուեալները գերծ չեն թերութիւններից եւ ենթակայ են շտկման ու լրացման՝ նահանգի հայ բնակչութեան քուաքանակի աւելի ճշգրիտ պատկերը ստանալու համար:

<sup>10</sup> Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամարի մասին մանրամասն տե՛ս՝ Թարոյեան, *Արևմտահայութեան քուաքանակի հարցը*, էջ 92–115:

<sup>11</sup> Kévorkian, Paboudjian, էջ 59–60, 463–507: Մուշի եւ Պիրլիսի գաւառներում մարդահամարը կատարուել է 1913ի ամռանը, Սղերդի գաւառում մարդահամարի կատարման աշխատանքները տեևել են աւելի երկար մինչեւ աշնան վերջ, իսկ տուեալները հայոց պատրիարքարան են ուղարկուել աւելի ոչ՝ 1913ի Դեկտեմբերին (տե՛ս 1913 Դեկտեմբերի 14 քուակիր Սղերդի առաջնորդական տեղապահ Գէորգ Վարդապետ Նալբանդեանի ուղեկցող նամակը, ՀՔԸԸ ՆՄԱ, APC/BNu, DOR 3/3, f. 31): Մարդահամարի գիլացուցակներից քաղուած որոշ տուեալներ (բնակավայրերի անուններ եւ դրանցում հայ տների թիւ տարրերակով) առաջին անգամ շրջանառութեան մէջ են դրուել 1921ին Թէոդիկի կողմից (Թէոդիկ, Գողգորս հայ հոգեւորականութեան և իր հօդիմ 1915 աղիսակի գրադաւան, Նիւ Եղոք, 1985, էջ 59–103, 536–41): Պիրլիսի նահանգի մարդահամարի հարցարերերը առցանց տե՛ս՝ ՀՔԸԸ Նուպարեան Մատենադարանի կայքում <http://www.bnulibrary.org/index.php/fr/archives/les-archives-du-patriarcat-d-istanbul/recensement> (դիտուել է 14.01.2017):

**Աղիսակ 8. Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան քուաքանակն ըստ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տուեալների, 1902–1914**

№	Վարչական միաւոր	1902–10 Օրմանեան	1912ի Հայոց պատրիարքարան- Ապահովութեան Յանձնաժողով	1913–14ի մարդահամար - Գ-Էռզեան/ Փապուծեան
1	Պիթլիսի գաւառ	76,500	68,500	51,007
2	Մուշի գաւառ	94,000	109,000	141,489
3	Կէճի գաւառ		2500	4344
4	Սղերդի գաւառ	25,500	18,000	21,564
<b>Ընդամենը</b>		<b>196,000</b>	<b>198,000</b>	<b>218,404</b>

## 2. Այլ հայկական սկզբնադրիւմներ

1878–1914’ արեւմտահայութեան քուաքանակի հարցին անդրադարձած հայ ուսումնասիրողներից Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան քուաքանակի վերաբերեալ վիճակագրական տուեալներ են հաղորդում (ըստ Ժամանակագրական կարգի) Վահան Պարտիզակցին, Ալեքսանդր Երիցեանցը, Մկրտիչ Աւետիսեանը, Ա.-Դօն:

Նահանգի Մուշի եւ Սղերդի գաւառների վիճակագրութիւնն է հաղորդում Վահան Պարտիզակցին<sup>12</sup>: Ըստ հեղինակի տուեալների՝ 1879ին Մուշի գաւառու ուներ 127,000, իսկ Սղերդի գաւառը՝ 40,000 շունչ հայ բնակչութիւն<sup>13</sup>: Կ. Պոլսի

- = Վահան վարդապետ Տէր-Սինասեան (Վահան Պարտիզակցի), արեւմտահայ մտաւորական, Եկեղեցական գործիչ: Որպէս Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի ներկայացուցիչ՝ 1870–80ականներին միքանի անգամ այցելել է Արեւմտեան Հայաստան գաւառներ՝ հայ բնակչութեան քուաքանակի եւ ընկերային-տնտեսական կացութեան վերաբերեալ տուեալներ հաւաքելու նպատակով: Պարտիզակցին մէկն էր այն երեք վարդապետներից (միս Երկուսը՝ Տեւկանց եւ Գարեզին Սրուանձտեանց), որոնք 1878ի ամռանը պատրիարք Ներսէս Վարժապետնանի կողմից ուղարկուեցին Արեւմտեան Հայաստան՝ մարդահամար անցկացնելու հրահանգով (Թաթոյեան, Արեւմտահայութեան քուաքանակի հարցը, էջ 78–79. նաեւ՝ Էմմա Կոստանդնեան, «Վահ-Վասպուրականի հասարակական-մշակութային գործիչները 19-րդ դարի Ակսին», Զրիակոնիայ Հայաստան, Մայր Արք Սույր Էջմիածնի կրօնական, լրագրուական երկշարաքարերը, Դեկտեմբեր 2010:Ա, թի 23 (331), էջ 5, 7):
- = Վահան վարդապետ Պարտիզակցի, Խօսք զիայրինեաց, Բ. տպագրութիւն, տպ. Յ.Գ. Փալազչեան, Կ. Պոլսի, 1911, էջ 47–48:

*Սասիս* պարբերականի 1880ի Նոյեմբերի 15ի համարում տպագրուած Պարտիզակցու մէկ այլ տուեալով՝ նահանգում կար 394 հայաբնակ բնակավայր 25,000 տուն հայ բնակչութեամբ, որն ըստ թեմերի բաշխում էին հետեւեալ կերպ-Բաղէջի թեմ՝ 37 հայաբնակ բնակավայր, 4000 տուն, Մշոյ թեմ՝ 243 հայաբնակ բնակավայր, 15,000 տուն, Սղերդի թեմ՝ 114 հայաբնակ բնակավայր, 6000 տուն հայ<sup>14</sup>: Հեղինակը նշում է, որ Վիճակագրութիւնը քաղել է «կէս պաշտօնական կամ անձնական կերպով զգած աղբիւրներէ»<sup>15</sup>: Ըստ Պարտիզակցու՝ հայ բնակչութեան յատակ բուարանակ տալ անկարելի է, «զանգի Թուրքիոյ մէջ ամէ համբելը անհնար է, ո՞չ Օսմանեան պետութիւնը եւ ո՞չ ազգային որեւէ իշխանութիւն կարող է առ այլք»: Հեղինակի դիտարկման՝ մէկ տան շնչերի միջին թիւը գիտերում պէտք է ընդունել 8, իսկ քաղաքներում՝ 5–6 շունչ, ընդհանուր միջինը՝ 7 շունչ (տե՛ս նաև Աղիսակ 9)<sup>16</sup>:

Հայ ուսումնասիրող Ա. Երիցեանի<sup>17</sup> տուեալներով՝ 1880ին Մուշի եւ Պիթլիսի սանօակներում կար 18,812 տուն հայ 145,440 բնակչութեամբ<sup>18</sup>: Հեղինակը, որպէս իր հաշուարկների հիմքում ընկած տուեալների աղբիւր, նշում է զինապարտների եւ աշարի<sup>19</sup> զանձման ցուցակները, Երգումի առաջնորդարանի արխիտի նիւթերը, բուրքական նահանգային սալմամէներից եւ այլ տպագիր աղբիւրներից քաղուած տուեալներ:

<sup>14</sup> Վահան Վարդապետ Պարտիզակցի, «Վիճակագրութիւն», *Սասիս*, Կ. Պոլիս, 15/27 Նոյեմբեր 1880:

<sup>15</sup> Նոյն:

<sup>16</sup> *Սասիս*, 5/17 Փետրուար 1881: 1878–81ի հայկական բարեփոխումների անցկացման շուրջ աշխոյժ քննարկումների փուլում Պարտիզակցին արեւմտահայութեան բուարանակի վերաբերեալ տուեալներ է տրամադրել նաև Օսմանեան Թուրքիայում հաւատարմագրուած երուպական տէրութիւնների դիանագէտներին: Մասնաւորապէս, Պարտիզակցու կողմից Տրապիզոնում Խտախայի հիւպատոս Գայէտանօ Սոլանելլիին հաղորդած տուեալները (1881) երկրորդում են *Սասիսում հրատարակուած ցուցակը* (Կաեդանոյ Սոլանելլի, «Տեսութիւն ի Վերայ գաւառաց Հայաստանի», *Բազմավէպ*, Վենետիկ, 1882:40, էջ 291): Ինչպէս նշում է Սոլանելլին, վիճակագրական տեղեկութիւնները նրան տրամադրուել է «յարուկ առաքելութեամբ մը շրջող անձէ մը գրիքէ հայերէն բնակուած Տաճկարանի ամեն զաւառներուն մէջ, ուստի եւ բնականապէս միհազոյն ճշուրիհան երիտոյր ունի» (էջ 290): Բրիտանացի դիտանագէտներին Պարտիզակցու հաղորդած տուեալները տե՛ս՝ *British Documents on Ottoman Armenians*, vol. II, էջ 131:

<sup>17</sup> Ակերսանդր Երիցեան (1841–1902), արեւելահայ պատմաբան, հնագէտ: 1877–1878 ուսու-բուրքական պատերազմի ժամանակ Երիցեանը կցուած է եղել ուսական բանակի շտարին՝ որպէս առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ: Կազմել է ուսական զօրքերի կողմից գրադեցուած Արեւմտեան Հայաստանի տարածքի ազգաբնակչութեան վիճակագրութիւնը (ուսումնասիրողի կենսագրութիւնը տե՛ս Ա. Ս. Համբարեան, «Ակերսանդր Երիցեան», *Պատմաբանասիրական հանդէս*, 1960:1, էջ 179–90):

<sup>18</sup> Այլ մանրամասնութիւններ քացակայում են (Ա. Երիցով, *Опытъ статистического очерка народонаселенія Турецкой Армении*, Типъ. Главъ. Упр. Намѣстника Кавказскаго, Тифлисъ, 1881, էջ 38):

<sup>19</sup> Հարկի տեսակ Օսմանեան Կայսրութիւնում:

Մկրտիչ Աւետիսեանի<sup>20</sup> 1890ին հրատարակուած վիճակագրութեամք՝ նահանգի հայ բնակչութեան թիւն էր 308,000 (բաշխումն ըստ գաւառների տե՛ս Աղիսակ 9): Հեղինակը հաղորդում է, որ վիճակագրական աղիսակը կազմելիս օգտուել է բուրքական, հայկական և արեւմտեան մի շարք աղբիրներից, այդ թում «Թուրքաց 1878ի Սալմամէն և 1889ին երկրին մէկ մասին պաշտօնապէս շինուած ազգահամարը, Ազգային պատրիարքարարնի պաշտօնեաների տեղիկազիրները, երուպական մի քանի կարեւոր աշխարհագիրների վիճակագրութիւնները և աղոնց վրայ աւելցուական պատրիարքութիւններ»<sup>21</sup>:

Նահանգի հայ բնակչութեան թուարանակի հաշուարկ է կատարել նաեւ Ա.-Դօն 1909ին: Նրա տուեալներով նահանգում կար 22,092 տուն - 154,164 շունչ հայ (իսկ բնակչութեան բաշխումն ըստ գաւառների տե՛ս Աղիսակ 9)<sup>22</sup>: Ա.-Դոյի թուերի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ վիճակագրութիւնը թերի է, բաց են թողնուած բազմաթիւ հայարձակ գիտերի մասին տուեալներ, նաեւ՝ Սղերդի գաւառում Խարզանի և Էրուի գաւառակների վիճակագրութիւնն ամբողջութեամք:

Մեծ Եղեռնի նախօրեակին Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան թուարանակի մասին տեղեկութիւններ է պարունակում «Ամբաստանազիր-տեղեկազիր Բաղէշի կուսակալութեան»ը, որը կազմուել է 1919ի Փետրուարին Հալէպում, Պիթլիսի նահանգի վերապրած հայութեան ներկայացուցիչների կողմից<sup>23</sup>: Ըստ տեղեկազրի տուեալների՝ նահանգում բնակում էր 255,000 հայ (բաշխումն ըստ գաւառների տե՛ս Աղիսակ 9):

<sup>20</sup> Մկրտիչ Աւետիսեան (Թերլեմէզեան, Վան, 1864-Վան, 1896), ԺԹ. դարի հայոց ազատագրական շարժման գործիչ, լրագրող, Արմենական Կուսակցութեան հիմնադիրներից:

<sup>21</sup> Մ.Ա., Թուրքիայի հայերն և իրենց դրացիներ, տագ. Մ. Փորբուգալեանի, Մարտէլ, 1890, էջ Թ, 44:

<sup>22</sup> Ա.-Դօ, Վանի, Պիթլիսի և Էրզրումի վիլայէթները, էջ 157:

<sup>23</sup> Տեղեկազիրը հրատարակուել է սփիտքահայ ուսումնասիրող Լեւոն Վարդանի կողմից 1995ին, Հայկագեան հայագիրական հանդեսում (1995:ԺԵ, էջ 530-45): «Ամբաստանազիր-տեղեկազիր» կազմնան մասին տե՛ս նաեւ Թարոյեան, «Արեւմտահայութեան թուարանակի և Արեւմտեան Հայաստանի բնակչութեան էրնիկական կազմի հարցերը Փարիզի հաշտութեան կոնֆերանսին», էջ 57-58:

**Աղիւսակ 9. Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան քուաքանակն ըստ այլ հայկական աղբիւրների, 1879–1914**

№	Գ-աւառ	1879 Պարտիզակցի	1880 Պարտիզակցի		1890 Աւտիսեան	1909 Ա-Դ-օ		1914 «Ամբաստանագիր- տեղեկագիր»
		Ծունչ	Տուն	Ծունչ	Ծունչ	Տուն	Ծունչ	Ծունչ
1	Պիրլիս	127,000 <sup>24</sup>	4000 <sup>25</sup>	28,000	115,000	5782	40,955	75,000
2	Մուշ		15,000	105,000	118,000	12,855	89,518	125,000
3	Կէնճ	-				659	4619	25,000
4	Սղերդ	40,000	6000	42,000	75,000	2796	19,072	30,000
<b>Ընդամենը</b>		<b>167,000</b>	<b>25,000</b>	<b>175,000</b>	<b>308,000</b>	<b>22,092</b>	<b>154,164</b>	<b>255,000</b>

Վերոնշեալ տուեալներից առանձին աղբիւրագիտական արժեք են ներկայացնում են կարող են օգտագործուել Մեծ Եղեռնի նախօրեակին հայ բնակչութեան քուաքանակը ճշտելու գործում Պարտիզակցու, Ա-Դ-օյի և «Ամբաստանագիր-տեղեկագիր» տուեալները։ Դա պայմանաւորուած է նրանով, որ Պարտիզակցին Հայոց պատրիարքարանի յանձնարարութեամբ բազմաթիւ տարիներ գրադուել է հայ բնակչութեան քուաքանակի վերաբերեալ տեղեկութիւններ հաւաքելու գործով, ինչպէս նաև մասնակցել է 1878–80ի մարդահամարի իրականացնան աշխատանքներին։ Ա-Դ-օյի տուեալներն արժեքաւոր են նրանով, որ դրանց միջոցով մեզ են հասել Ի. դարի սկզբներում Վանի, Էրզրումի և Պիրլիսի առաջնորդարաններում պահուող տեղեկագրերի տուեալները, որոնց բնագրերն այսօր կորած են<sup>26</sup>։

<sup>24</sup> Առանց Խիզանի։

<sup>25</sup> Առանց Խիզանի։

<sup>26</sup> Ա-Դ-օյի՝ Պիրլիսի նահանգի առանձին գաւառակներին վերաբերող տուեալները կը ներկայացնենք աշխատանքի համապատասխան բաժիններում։ Ա-Դ-օյի վիճակագրական տուեալներին 1912-14ի հայկական մամուլում անդրադարձների մասին տե՛ս՝ Ռ. Թարոյեան, «Մի քանի բուեր», Ա-Դ-օյի «Վանի, Պիրլիսի և Էրզրումի վիլայեթները» ուսումնասիրութիւնը (1912 թ.) և Հայկական Հարցի վերաբարձման ժամանակաշրջանում արեւմտահայութեան քուաքանակի հարցի շուրջ հայկական մամուլում ծաւալուած բանավէճը», Յեղասպանագիրական հանդէս, 2017:5(1), էջ 32-64։

## **Է. Առևտեան ուսումնասիրողների վիճակագրական տուեալները Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան թուի վերաբերեալ**

1878–1914՝ Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան թուաքանակի վերաբերեալ վիճակագրական տեղեկութիւններ են հաղորդում Օսմանեան Կայսրութիւնում Մեծն Բրիտանիայի և Ռուսաստանի դիւանագիտական ներկայացուցիչները (հիւպատոսներ եւ այլ պաշտօնեաներ), ուազմական հետախոյզները և ճանապարհորդները։ Յատկանշական է, որ գրեթե բոլոր ուսումնասիրողները, քեւ իրենց հաշուարկները կառուցում են օսմանեան տուեալների հիման վրայ, չեն ընդունում դրանք որպէս հաւաստի, պարտը են համարում այս կամ այն կերպ ճշտել եւ ուղրել դրանք՝ որպէս կանոն օսմանեան վիճակագրութեան համեմատ շօշափելիօրէն բարձրացնելով հայ բնակչութեան թիւը։

1880ականներին Պիրլիսի և Մուշի գաւառների առանձին գաւառակների հայ բնակչութեան թուաքանակի վերաբերեալ տեղեկութիւններ է հաղորդում ոսմանական ուազմական հետախոյզ Ալեքսանդր Կոլիսակինը, որն իր վիճակագրական աղիւսակները կազմելիս օգտագործել է տեղում հաւաքած օսմանեան վիճակագրական գիւղացուցակները։ Ըստ հեղինակի՝ 1880ականներին Մուշի սանջակի հայ ծխերի ընդհանուր թիւն էր 9075, որոնք բաշխում էին հետեւեալ կերպ։ - Մուշ 5766, Պուլանըն 2442, Մանազկերտ 477, Վարդո 390։ Պիրլիսի սանջակում ուսումնասիրողը արձանագրում է 6021 սուն հայ, որից Պիրլիսի գաւառակ՝ 2283, Խլարի գաւառակ՝ 1032, Խիզանի գաւառակ՝ 1012 և Մուլանի գաւառակ՝ 594 սուն հայ<sup>1</sup>։

1897ին Կ. Պոլսի ոսմանական դեսպան Ալեքսանդր Նելիդովին ներկայացուած «Թուրքիայի ազգաբնակչութեան ազգագրական ակնարկ» վերտառութեամբ դիւանագիտական տեղեկագրի համաձայն՝ Պիրլիսի նահանգն ունէր 165,000 հայ բնակչութիւն<sup>2</sup>։

1895–99ին Վանում ոսմական փոխիթապատու Վաղիմիր Մաեսկու<sup>3</sup> տուեալներով, որն իր հաշուարկներում օգտագործել է նահանգի բուրքական գինուրական իշխանութիւնների մօտ պահուղ գիւղացուցակները, 1890ականներին նահանգի հայ ծխերի թիւն էր 23,326։ Հեղինակը մէկ տան վրայ հաշում է 8 շունչ, ինչը նահանգի համար տալիս է 186,608 հայ բնակչութիւն (բաշխումն ըստ գաւառների տե՛ս Աղիսակ 10։ Մաեսկո՝ Պիրլիսի նահանգի առանձին

<sup>1</sup> А. М. Колюбакинъ, *Материалы для военно-статистического обозрѣнія Азіатской Турции*, т. 8, ч. 2, *Статистический обзоръ Мушско-буланыхской плоскости, Битлесского санджака и казы Адильджеевасъ*, Типъ. А. А. Михельсона, Тифлисъ, 1890, էջ 157–58։

<sup>2</sup> Հեղինակը նշում է, որ իր հաշումները հիմնում են պաշտօնական տուեալների, ինչպէս նաև ճանապարհորդների կողմից հաղորդած տեղեկութիւնների վրայ (ՀԱԱ, ֆ. 818, գ.1, գ. 565, թ. 87)։

<sup>3</sup> Մաեսկու մասին կենսագրական կարծ ակնարկը (ոսմերէն) տե՛ս՝ <http://www.grwar.ru/persons/persons.html?id=6191>, դիտուել է 31.03.2017։

գաւառակներին վերաբերող տուեալները կը ներկայացնենք աշխատանքի համապատասխան բաժիններում):<sup>4</sup>

Մաեսկուն Վանի փոխիհակատուի պաշտօնում յաջորդած Ալեքսանդր Տումանսկին Կ. Պոլսում ուսական դեսպան Խան Զինովեևին հասցեազրած 1901 Հոկտեմբերի 8ի հաղորդագրութեան մէջ հաղորդում է, որ Մուշի գաւառի բնակչութիւնը կազմում է 190,000 շունչ, որից կեսից աւելին (շորջ 100,000ը) բաժին է ընկնում հայերին:<sup>5</sup>

Օսմանեան Կայսրութեան եւ մասնաւորապէս Արեւմտեան Հայաստանի հայ բնակչութեան բուաքանակի վերաբերեալ 1880–90ականներին անգլիական դիանագէտների կողմից կատարուած հաշուարկները հանրագումարի են բերուած «Քուրդիստան»ում նախկին բրիտանական հիմաստու զնդապէտ Վիլիամ Էւերեթի (William Everett) կողմից 1895ին պատրաստած զեկուցագրում:<sup>6</sup> Էւերեթը նշում է, որ Պիրլիսի, Մուշի եւ Սղերդի մասին ամրողական վիճակագրութիւնը հաւաքուել է Վանում Մեծն Բրիտանիայի փոխիհակատու, կապիտան<sup>7</sup> Էմիլիոս Քլայրոնի (Emilius Clayton) կողմից 1881ին, իսկ 1895ի դրութեամբ սահմանների համար՝ իր կողմից<sup>8</sup>: Ըստ Քլայրոնի հաշուարկի՝ գաւառակն ունեցել է շորջ 153,600 շունչ հայ բնակչութիւն (Կէնճի գաւառը ներառեալ 154,432 շունչ), Էւերեթի տուեալն է՝ 152,398 շունչ (բաշխումն ըստ գաւառների տե՛ս Աղիսակ 10):<sup>9</sup>

Օսմանեան ծառայութեան մէջ գտնուող<sup>10</sup> ֆրանսիացի վիճակագիր Քինն, իմմունելով օսմանեան պաշտօնական տուեալների վրայ, 1892ի Պիրլիսի նահանգի համար հաղորդում է 131,390 հայ բնակչութիւն (տե՛ս նաեւ Աղիսակ 10):<sup>11</sup>

<sup>4</sup> В.Т. Маевский, *Военно-статистическое описание Ванского и Битлисского вилаетовъ*, էջ 220–223. նաև՝ *Сборникъ дипломатическихъ документовъ*, էջ 284:

<sup>5</sup> Ալեքսանդր Տումանսկու զեկուցագիրը տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 818, գ.1, գ. 578, թ. 4:

<sup>6</sup> Մեծն Բրիտանիայի Ազգային Արխիվ, CAB 37/38/26 (Report on the population of Asia Minor and the Turkish Provinces to the eastward, compiled by Colonel William Everett, C.M.G., Assistant Adjutant-General, Intelligence Division, War Office, formerly Her Majesty's Consul for Kurdistan, May 11, 1895):

<sup>7</sup> Զեկուցագիրը գրելու ժամանակ՝ արդէն զնդապէտ:

<sup>8</sup> Նոյն, էջ 230:

<sup>9</sup> Նոյն:

<sup>10</sup> Նա գրադեմում էր Օսմանեան պարտի վարչութեան քարտուղարի պաշտօնը:

<sup>11</sup> Cuinet, էջ 527: Քիննի տուեալներին անդրադարձել եւ վերլուծութեան են ենթարկել, մասնաւորապէս, հայ ուսումնասիրողներ Հայկազուն Գալստեամը եւ Սարգս Գարայեանը (Հ. Հ. Գալստեան, «Արեւմտեան Հայաստանի բնակչութեան ազային կազմը՝ ըստ Վիրալ Քիննի վիճակագրութեան», *Մերժաւոր իւ Միջին Արևելքի երկրներ եւ ժողովուրդներ*, XII, Թուրքիա, ՀԱԱՀ ԳԱ հրատ., Երեւան, 1985, էջ 59–79. նաև՝ Sarkis Y. Karayan, “Vital Cuinet’s La Turquie d’Asie: A critical evaluation of Cuinet’s information about Armenians,” *Journal of the Society for Armenian Studies*, 2000:11, էջ 53–63. նաև՝ Թարոյեան, «Արեւմտահայութեան բուաքանակի եւ Արեւմտեան Հայաստանի բնակչութեան էրնիկական կազմի հարցերը XIX դարի 90-ական թթ. կետերին», էջ 31:

Քինէի տուեալներից օգտուել են նաև Արեւմտեան Հայաստանի նահանգների եւ Օսմանեան Կայսրութեան այլ տարածների բնակչութեան բուարանակի հարցով հետաքրքրուող այլ ուսումնափրողներ, մասնաւորապէս ուսական զիսաւոր սպայակոյտի փորձագէտներ գտնողապէս Ֆեռոդր Գրիգորովը եւ գեներալ-լեյտենանտ Ալեքսանդր Զելինինին<sup>12</sup>: Այսպէս, վերջինս<sup>13</sup> 1885ին Պիրլիսի նահանգի հայ բնակչութիւնը հաշուում է 154,000 շունչ<sup>14</sup>:

1912ին Հայկական Հարցի վերարարծարծման առթի նահանգի հայ բնակչութեան բուարանակի իրենց հաշուարկներն են ներկայացնուում տեղում ուսական դիանագիտական ներկայացուցիչները: Այսպէս, ըստ ուսական փոխհիապատու Սերգէ Օլֆերենի 25 Նոյեմբեր 1912 բուակիր գեկուցագրի՝ նահանգի հայ բնակչութեան թիւն էր 180,000<sup>15</sup>: Ուսական հիապատու Պատէ Շիրկովի 1912ի Դեկտեմբերի 24ի գեկուցագրում գետեղուած վիճակագրութեան համաձայն՝ նահանգի հայ առաքելական բնակչութեան թիւն էր 150,000 շունչ, բողոքական, կարուիկ հայերի, ինչպէս նաև ասորիների թիւը՝ մօտ 50,000 շունչ, ընդամենը՝ 200,000 շունչ<sup>16</sup>:

1914ի դրութեամբ ըստ նահանգների Օսմանեան Կայսրութեան ազգաբնակչութեան, եւ այդ թում նաև Պիրլիսի նահանգի հայ բնակչութեան վիճակագրութիւնն է պարունակուում նաև ԱՄՆ Տեղեկատու Փորձագիտական խմբի «Ասիական Թուրքիայի բնակչութիւնը պատերազմի նախօրեակին» ("Population of Asiatic Turkey at the outbreak of the war") վերնագիրը կրող տեղեկագրը<sup>17</sup>: Ըստ տեղեկագրի տուեալների՝ Պիրլիսի նահանգում բնակուում էր 185,000 հայ (բաշխումն ըստ գաւառների տե՛ս Աղիւակ 10):

<sup>12</sup> Карта распределения армянского населения въ Турецкой Армении и Курдистанъ съ пояснительною запискою Генеральнааго Штаба генералъ-лейтенанта Зеленаго и подполковника Сысоева, Воен. тип., Санктъ-Петербургъ, 1895. նաև՝ Ф. Грязнов, Военный обзоръ передового театра въ Азиатской Турции, часть II, Военная типография, СПб, 1897:

<sup>13</sup> Ալեքսանդր Զելինի (1839–1913), ուսու զինուորական գործիչ, 1870–79<sup>18</sup> Կ. Պոլսում ուսական դիապանութեան ուազնական կցորդ, ուսական բանակի զիսաւոր շտարի գեներալ-լեյտենանտ (տե՛ս [http://ria1914.info/index.php?title=Зеленый,\\_Александр\\_Семенович](http://ria1914.info/index.php?title=Зеленый,_Александр_Семенович), դիտուել է 25.10.2018. նաև՝ Թարոյեան, «Արեւմտահայութեան բուարանակի եւ Արեւմտեան Հայաստանի բնակչութեան էքսիկական կազմի հարցերը XIX դարի 90-ական թթ. կտսրին», էջ 28–31):

<sup>14</sup> Սարկি�սյան, էջ 372:

<sup>15</sup> Сборникъ дипломатическихъ документовъ, էջ 285:

<sup>16</sup> ՀԱԱ, ֆ. 818, գ.1, գ. 578, թ. 26:

<sup>17</sup> Տեղեկատու Փորձագիտական Խումբը (The Inquiry) ստեղծուել էր 1917 Սեպտեմբերին՝ ԱՄՆ նախազահ Վուդրո Վիլսոնի հրահանգով: Կառոյցի նպատակն էր տուեալներ հաւաքել առաջին աշխարհամարտի աւարտից յետոյ կայանալիք հաշտութեան բանակցութիւնների համար: Վիճակագրութիւնը պատրաստուել է կառոյցի փորձագէտներից մէկի՝ պրոֆեսոր Դևիդ Մագի (David Magie) կողմից 1918 Նոյեմբերի 15ին (մանրամասն տե՛ս՝ Թարոյեան, «Արեւմտահայութեան բուարանակի եւ Արեւմտեան Հայաստանի բնակչութեան էքսիկական կազմի հարցերը Փարիզի հաշտութեան կոնֆերանսին», էջ 68–69, 76–77):

Այսպիսով, ըստ ուս եւ արեւմտեան աղբիւրների տուեալների՝ Պիթլիսի նահանգն ունեցել է 130,000ից (Քինէ) – 200,000 (Շիրկով) շոնչ հայ քնաշուրին: Ինչպէս արդէն նշել էինք, թէեւ ուս եւ արեւմտեան ուսումնասիրողներն իրենց հաշուարկներում առաջնորդուել են օսմանեան իշխանութիւնների վիճակագրական տուեալներով, նրանք, սակայն, հարկ են համարել տուեալները վերանայել յօդուտ հայ քնակշուրեան քուաքանակի բարձրացման: Պիթլիսի հայ քնակշուրեան քուաքանակի վերաբերեալ Մաեսկու, Օլֆերեի, Շիրկովի, ԱՄՆ Տեղեկատու Փորձագիտական Խումբի տուեալները (համապատասխանարար 186,608–180,000–200,000–185,000 հայ) քաւականին մօտ են Օրմանեանի 1902ի եւ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1912ի վիճակագրութիւնների քուերին, համապատասխանարար՝ 196,000 եւ 198,000 շոնչ հայ:

**Աղիսակ 10.** Ուս եւ արեւմտեան ուսումնասիրողների վիճակագրական տուեալները Պիթլիսի նահանգի հայ քնակշուրեան քուաքանակի վերաբերեալ (1884–1912)

№	Վարչական միաւոր	1885	1892	1895	1899		1912	1912	1914 Տեղեկատու Փորձագիտական Խումբ (ԱՄՆ)
		Չունչ	Չունչ	Չունչ	Տուն	Չունչ	Օլֆերե	Շիրկով	
1	Պիթլիսի գաւառ	-	32,909	39,287	6437	51,496	-	-	71,000
2	Սուշի գաւառ	-	55,365	66,871	11,648	93,184	-	-	70,000
3	Կենճի գաւառ	-	12,964	10,832	3458	14,260	-	-	18,000
4	Սղերդի գաւառ	-	30,152	35,408	1783	27,667	-	-	26,000
<b>Ընդամենը</b>		<b>154,000</b>	<b>131,390</b>	<b>152,398</b>	<b>23,326</b>	<b>186,608</b>	<b>180,000</b>	<b>200,000</b>	<b>185,000</b>

## Ը. Մեծ Եղեռնի նախօրեակին Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան թուի՝ ժամանակակից ուսումնասիրողների հաշուարկներ

1878–1914<sup>1</sup> Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան թուաքանակի հարցին անդրադարձել եւ նահանգի բնակչութեան սեփական հաշուարկներով են հանդէս եկել հայ ուսումնասիրողներ Սասունին<sup>1</sup>, Բիզանդ Եղիայեանը<sup>2</sup>, Գարայեանը<sup>3</sup>, Գերգեան/Փապուճեանը<sup>4</sup>, Գեղամ Բաղալեանը<sup>5</sup>, օտարերկրեայ ուսումնասիրողներից Մըք-Ձարբին<sup>6</sup>:

Սասունին, հետեւելով հիմնականում Ա.-Դոյի տուեալներին եւ որոշ դէպքերում լրացնելով դրանք մէկ-երկու այլ աղքիրներից վերցրած տուեալներով, Պիթլիսի նահանգում հաշուում է 683 հայաքնակ բնակավայր 28,328 տուն հայ բնակչութեամբ<sup>7</sup>: Կլորացնելով տների թիւը մինչեւ 30,000ի եւ մէկ տան վրայ հաշուելով 6 շունչ՝ ուսումնասիրողը

<sup>1</sup> Սասունի, *Պատմութիւն Տարոնի աշխարհի*, էջ 331–86: Սասունիի տուեալները օգտագործել է նաև ամերիկահայ ուսումնասիրող Լեւոն Մարաշլեանը (Levon Marashlian, *Politics and demography: Armenians, Turks, and Kurds in the Ottoman Empire*, Cambridge, Massachusetts, Zoryan Institute, 1991, էջ 72–90):

<sup>2</sup> Բ. Եղիայեան, *Ժամանակակից պատմութիւն Կարողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914–1972*, տպ. Կաքողիկոսութեան Հայոց Մէծի Տանն Կիլիկիոյ, Անրիլիսա, 1975, էջ 891:

<sup>3</sup> Sarkis Y. Karayan, M.D., *Armenians in Ottoman Turkey, 1914. A geographic and demographic gazetteer*, Gomidas Institute, London, 2018, էջ 169–222: Ուսումնասիրողի աւելի վաղ արուած հաշուարկը տե՛ս՝ Sarkis J. Karayan, “An inquiry into the statistics of the Turkish Genocide of the Armenians 1915–1918,” *The Armenian Review*, Winter 1972:25, էջ 3–41 (Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան հաշուարկը էջ 11):

<sup>4</sup> Kevorkian, Raboudjian, էջ 59–60, 463–506: 1913–14ի Հայոց պատրիարքարանի մարդահամարի տուեալների հիման վրայ Գերգեան/Փապուճեանի հաշուարկը ներկայացնել է աշխատանքի Զ. քաժնի § 1ում: Ըստ զատօնակների նրանց տուեալներին անդադար է կատարուելու աշխատանքի համապատասխան քաժններում: Տե՛ս նաև աշխատանքի վերաբերեալ Լեւոն Վարդանի գրախօսականը (Լ. Վարդան, «Աւելան Հ. Գէորգեան եւ Փոլ Պ. Փապուճեան, «Հայերը Օսմանեան Կայսրութեան մէջ Երեսնեն առաջ», Հայկագեան հայագիրական հանդէս, 1993:ԺԳ., էջ 378–400):

<sup>5</sup> Բաղալեան, «Սուլթանական կառավարութեան վարչաժողովրդագրական քաղաքականութիւնը», էջ 448–456. նաև՝ Գեղամ Բաղալեան, «Արևմտեան Հայաստանի եւ Կիլիկիայի վարչաժողովրդագրական պատկերը», Հայոց պատմութիւն, հ. III. Նոր ժամանակաշրջան, զիրք երկրորդ (1901–1918 թթ., հայ զաղքավայրերը, պարբերական մանուլը եւ մշակոյթը XIX դ. եւ XX դ. սկզբին), «Զանգակ-97», Երեւան, 2015, էջ 52–65:

<sup>6</sup> McCarthy, *Muslims and minorities*, էջ 72–74, 77: Մըք-Ձարբիի հաշուարկին անդրադարձել ենք աշխատանքի Դ. քաժնում:

<sup>7</sup> Հեղինակը Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան թուաքանակի հաշուարկի մէջ է ընդգրկում նաև Էրզրումի նահանգի Էրզրումի զատադի Խնուսի զատօնակի հայութիւնը՝ 38 հայաքնակ բնակավայր, 2042 տուն հայ բնակչութեամբ:

գտնում է, որ նահանգում բնակուել է 180,000 շունչ հայ<sup>8</sup>: Սասունու հաշուարկը թերի է. մասնաւորապէս, հետևելով Ա-Դոյին եւ իր տրամադրութեան տակ չունենալով այլ աղքիրներ, ուսումնասիրողը բաց է բողել բազմաթի հայարնակ բնակավայրեր յատկապէս Սղերդի գաւառում<sup>9</sup>:

Ըստ Եղիայեանի՝ Պիթլիսի նահանգի 526 հայարնակ բնակավայրերում 1914ին բնակում էր 258,150 շունչ հայ, այդ թում Պիթլիսի գաւառ՝ 91,975, Մուշի գաւառ՝ 142,600, Կէնճի գաւառ՝ 2875, Սղերդի գաւառ՝ 20,700 շունչ հայ: Ուսումնասիրողն իր հաշուարկի հիմքում դրել է Օրմանեանի տուեալները՝ աւելացնելով դրանք 10–15 առ հարիր «մինչեւ 1914–15 բնակչութեան բնական աճումի համեմատութեամբ»<sup>10</sup>:

Գարայեանը, որպէս առքիր օգտագործելով Ա-Դոյի Վանի, Պիթլիսի և Էրզրումի վիլայէքները եւ Թէոդիկի Գողգորս հայ հոգեւորականութեան եւ իր հօրին 1915 աղելապի գուրին աշխատութիւններում, ինչպէս նաև տարբեր հայրենակցական միութիւնների հրատարակութիւններում զետեղուած տուեալները, յանգում է այն եզրակացութեան, որ առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակին Պիթլիսի նահանգում կար 247,639 շունչ հայ բնակչութիւն, այդ թում Պիթլիսի գաւառ՝ 58,200 շունչ, Մուշի գաւառ՝ 136,037 շունչ, Կէնճի գաւառ՝ 16,409 շունչ եւ Սղերդի գաւառ՝ 36,993 շունչ հայ<sup>11</sup>:

Բաղալեանի հաշուարկով՝ 1914ին Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան թիւը 255,000 է (բնակչութեան բաշխումն ըստ գաւառների եւ գաւառակների բացակայում է): Որպէս հաշուարկի հիմք՝ ուսումնասիրողն նշում է Մարտիրոսեանի, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամարի՝ Գէորգեան/Փափումեանի եւ Թէոդիկի աշխատութիւններից քաղուած տուեալները, ինչպէս նաև «Ամբաստանագիր-տեղեկագրի»<sup>12</sup> վիճակագրութիւնը<sup>13</sup>:

<sup>8</sup> Առանց Խնուսի գաւառակի հայ բնակչութեան՝ 644 հայարնակ բնակավայր՝ 26,286 տուն հայ բնակչութեամբ (Սասունի, Պալմուրիս Տարօնի աշխարհի, էջ 386: Սասունու ըստ գաւառակների հայ բնակչութեան բուաքանակի որոշ հաշուարկներին անդրադարձ է կատարուելու աշխատանքի համապատասխան բաժիններում):

<sup>9</sup> Դա ընդունում է նաև ինքը հեղինակը (նոյն, էջ 361):

<sup>10</sup> Եղիայեան, էջ 891:

<sup>11</sup> Karayan, Armenians in Ottoman Turkey, 1914, էջ 171: Ուսումնասիրողի աւելի վաղ արուած հաշուարկը տե՛ս Karayan, “An inquiry”, էջ 11 (31,419 տուն - 51,352 շունչ) հայ բնակչութիւն, այդ թում Պիթլիսի գաւառ՝ 7,115 տուն - 56,920 շունչ, Մուշի գաւառ՝ 22,781 տուն - 182,248 շունչ, Կէնճի գաւառ՝ 444 տուն - 3552 շունչ, Սղերդի գաւառ՝ 1079 տուն - 8632 շունչ հայ): Առանձին գաւառակների հայ բնակչութեան բուաքանակին վերաբերող ուսումնասիրողի տուեալները կը ներկայացնեմք աշխատանքի համապատասխան բաժիններում:

<sup>12</sup> «Ամբաստանագիր-տեղեկագիր Բաղէջի կուսակալութեան» գրութեանն անդրադարձել ենք աշխատանքի Ե. բաժնում:

<sup>13</sup> Բաղալեան, «Աբեմտեան Հայաստանի եւ Կիլիկիայի վարչաժողովը վրագրական պատկերը», էջ 58–59, 61:

## Շ. Պիթիսի նահանգի այլազգի բնակչութեան թուի վերաբերեալ վիճակագրական տուեալները

Բացի հայերից, Պիթիսի նահանգի տարածքում բնակուել են քրդեր (սունի, շիա (ղզրաշ), ալեխներ (ներառեալ զազաներ), բուրքեր, չերքէզներ, ասորիներ, եզղիներ: Նշուած ազգութիւնների եւ էթնոկրօնական խմբերի թուաքանակի հաշուարկի, դրանց նկատմամբ հայերի յարաբերակցութեան հարցերի ուսումնասիրութիւնը բարդանում է, այն պատճառով, որ օսմանեան վիճակագրութիւնը հաշուառել է կայսրութեան բնակչութիւնը ըստ իշխանութեան կողմից ճանաչուած՝ կարգավիճակով օժտուած կրօնական համայնք-միլլէրների, ինչի արդիւնքում, թուրքերը, քրդերը եւ այլ խլամադաւան ազգութիւններն ու էթնոկրօնական խմբերը օսմանեան եւ դրանից սերուող այլ վիճակագրութիւններում որպէս կանոն չեն առանձնացուել միմեանցից, ներկայացուել են «մուսուլմաններ» ընդհանուր անուան տակ:

Իր հերթին, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը իրականացրել է միայն Օսմանեան Կայսրութեան հայ առաքելական ազգաբնակչութեան հաշուառումը, ինչպէս նաև յարակից տուեալներ հաւաքել առաքելական հայերի հետ տուեալ բնակավայրում/շրջանում բնակուող կաթոլիկ եւ բողոքական հայերի վերաբերեալ, եւ, համապատասխանաբար, Հայկական Հարցի արծարծման ժամանակաշրջաններում իր կազմած եւ մեծ տէրութիւնների ուշադրութեանը ներկայացուած վիճակագրութիւններում Արեւմտեան Հայաստանի, ներառեալ Պիթիսի նահանգի տարածքում բնակուող այլ ազգութիւնների եւ էթնոկրօնական խմբերի հաշուարկը հիմնուում է օսմանեան եւ դրանից սերուող արեւմտեան վիճակագրական տուեալների վրայ:

Դրանից ելնելով՝ երեւ հայ առաքելական եւ քրիստոնեա այլ կրօնական համայնք-միլլէրների թուաքանակի իրենց հաշուարկներում արեւմտեան հետինակները հաշուի էին առնում տուեալ միլլէրի կրօնական-համայնքային՝ իշխանութեան կողմից տրամադրուած վիճակագրական տուեալները, ապա խլամադաւան ազգաբնակչութեան պարագայում նրանք ստիպուած էին ապահնել բացարձակապէս օսմանեան վիճակագրութեանը եւ, դրանից ելնելով, կա՞ն ներկայացնել տուեալ վարչական միատրի ընդհանուր խլամադաւան (մուսուլման) ազգաբնակչութեան թիւը կա՞ն էլ հաշուարկել խլամադաւան առանձին ազգութիւններն ու էթնոկրօնական խմբերն ինքնուրոյն՝ օսմանեան ընդհանուր տուեալների հիման վրայ եւ ելնելով տեղերից ստացուած մօտաւոր դիտարկումներից եւ տեղեկութիւններից:

Պիթիսի նահանգի ընդհանուր ազգաբնակչութեան թուաքանակի վերաբերեալ վիճակագրական տուեալներին այս անդրադարձի ենթահողում անհրաժեշտ է նաև արծանագրել, որ 1878–1914<sup>4</sup> օսմանեան պաշտօնական վիճակագրութեան տարրեր տուեալների ուսումնասիրութիւնը վկայում է այն մասին, որ օսմանեան իշխանութիւններն ուղղակիորէն կեղծել են Պիթիսի նահանգի մուսուլման ազգաբնակչութեան թիւը: Այսպէս, 1878–1914<sup>4</sup> Պիթիսի նահանգի մուսուլման ազգաբնակչութեան թուաքանակի վերաբերեալ, մի կողմից, օսմանեան մարդահամարների ընթացքում հաւաքուած «հում» տուեալների եւ, միևն կողմից, նոյն ժամանակաշրջանում մեծ տէրութիւնների դեսպան-

ներին ներկայացուած տուեալների միջեւ զոյտրիւն ունեն բաւականին շօշափելի տարրերութիւններ: Օրինակ, ըստ 1881/82–93ի օսմանեան մարդահամարի տուեալների՝ նահանգում գրանցուել էր 167,054 մուսուլման<sup>1</sup>, մինչդեռ մեծ տերութիւնների դեսպաններին 1895ին օսմանեան կառավարութեան ներկայացրած վիճակագրութեան համաձայն, նահանգում մուսուլմանների թիւը 352,713 էր<sup>2</sup>: Նոյնպէս, 1906ին անցկացուած օսմանեան մարդահամարի ընթացքում նահանգում հաշուառուել էր 197,906 մուսուլման ազգաբնակչութիւն<sup>3</sup>, մինչդեռ ըստ նոյն մարդահամարի արդինքների հիման վրայ 1914ին օսմանեան կառավարութեան կողմից Հայկական Հարցի շուրջ ընթացող բանակցութիւնների շրջանակներում ներկայացուած տուեալների՝ նահանգի մուսուլմանների թիւը 295,374 էր<sup>4</sup> (մեկ այլ հրապարակուած օսմանեան վիճակագրութեամբ՝ 309,999)<sup>5</sup>:

Թուրք հետազոտող Կարպատը, որը 1985ին հրատարակել էր օսմանեան մարդահամարների «հում» տուեալները, նշուած վիճակագրական թոշքները բացատրում է նրանով, որ դիանագէտներին ներկայացուած տուեալներում յաւելագրուել էին բուռվ շուրջ 200,000 վաշկատուն եւ կիսավաշկատուն քրդեր, որոնք բնակում էին օսմանեան հաշուառումից դուրս մնացած դժուարամատչելի շրջաններում՝ Սասունի, Սօմկանի եւ այլ տարածքներում<sup>6</sup>: Հարց է ծագում, թէ ի՞նչ տուեալների հիման վրայ էր օսմանեան կառավարութիւնը որոշում, որ չհաշուառուած բուրդ բնակչութեան թիւը 200,000 է, այլ ոչ թէ, ասենք, 150,000 կամ 250,000, ինչպէս նաև՝ ինչո՞ւ համապատասխանարար չէր աւելացնում նաև հայերի բուաքանակը, քանի որ նոյն տարածքներում քրդերի հետ առկայ էր մեծ բուռվ հայ բնակչութիւն, որը նոյնպէս ամբողջովին դուրս էր մնում օսմանեան մարդահամարների ընթացքում իրականացուող հաշուառումից:

Ստորեւ Աղիսակ 11ում ներկայացնում ենք Պիրլիսի նահանգի իսլամադաւան ազգաբնակչութեան բուաքանակի վերաբերեալ 1890ականներից առ 1914 հիմնական վիճակագրական սկզբնադրիւնների կողմից հաղորդուող տուեալները:-

<sup>1</sup> Karpat, էջ 148–149:

<sup>2</sup> Turkey, № 8 (1896). Further Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey, էջ 98:

<sup>3</sup> Karpat, էջ 168:

<sup>4</sup> Armenia. Political and Ethnic Boundaries 1878–1948, էջ 324:

<sup>5</sup> Tableaux indiquant le nombre des divers éléments de la population dans l'Empire Ottoman, էջ 7:

<sup>6</sup> Karpat, էջ 150:

**Աղյուսակ 11.** Պիրլիսի նահանգի իսլամադաւան ազգաբնակչութեան թիւն ըստ տարրեր սկզբնադրիւների տուեալների (1890ականներից 1914)

№	Վարչական միաւոր	1891 Քինէ <sup>7</sup>	1897 օսմանեան <sup>8</sup>	1899 Մաեսկի <sup>9</sup>	1912 Հայոց պատրիարքարան-Ապահովութեան Յանձնաժողով <sup>10</sup>	1912 Օլֆերե <sup>11</sup>	1914 օսմանեան <sup>12</sup>	1914 ԱՄՆ Տեղեկատու Փորձագիտական Խումբ <sup>13</sup>
1	Պիրլիսի գաւառ	70,403	48,691	76,200	-	-	72,977	73,000
2	Մուշի գաւառ	66,752	77,884	98,088	-	-	99,548	68,000
3	Կենճի գաւառ	64,448	41,972	57,640	-	-	51,011	54,000
4	Սղերդի գաւառ	52,397	68,845	65,392	-	-	86,463	66,000
<b>Ընդամենը</b>		<b>254,000</b>	<b>237,392</b>	<b>297,320</b>	<b>182,000<sup>14</sup></b>	<b>281,000</b>	<b>309,999</b>	<b>261,000</b>

Ինչպէս կարելի է տեսնել վերը ներկայացուած աղյուսակում գետեղուած տուեալներից՝ Պիրլիսի նահանգի տարածում կար մոտ 240,000–310,000 շունչ իսլամադաւան ազգաբնակչութիւն (հաշուի չենք առել Կ. Պոլսի Հայոց պատրիարքարան-Ապահովութեան Յանձնաժողովի 1912ի տուեալները, որոնք չեն ընդգրկում նահանգի տարածք ամրողութեամբ):

Ինչեւ, Հայոց Յեղասպանութեան նախօրենակի դրութեամբ նահանգի իսլամադաւան ազգաբնակչութեան մօտաւոր թիւը հաշուարկելու նպատակով կարող ենք օգտագործել 1915ին առաւել մօտ կանգնած չորս սկզբնադրիւների

<sup>7</sup> Cuinet, էջ 527:

<sup>8</sup> Karpat, էջ 196–197:

<sup>9</sup> Маевский, *Военно-статистическое описание Ванского и Битлесского вилаетовъ. Статистический очеркъ*, էջ 220–223:

<sup>10</sup> Leart, էջ 60–61:

<sup>11</sup> Сборникъ дипломатическихъ документовъ, էջ 285:

<sup>12</sup> Tableaux indiquant le nombre des divers éléments de la population dans l'Empire Ottoman, էջ 7:

<sup>13</sup> Zamir, էջ 104:

<sup>14</sup> Ըստ ադրիբի՛ վիճակագրութեան մէջ ներառուած չէ Սղերդի գաւառի հարաւային շրջանների բնակչութեան թիւը: Ադրիբում վարչական միաւորները որոշակի չեն նշում, սակայն կարելի է ենթադրել, որ խօսքն առաջին հերթին գնում է Էրուսի Եւ Պերվարի գաւառակների տարածքի մասին:

1899ի Մաեսկու, 1912ի Օլֆերեի, 1914ի օսմանեան, 1914ի ԱՄՆ Տեղեկատու Փորձագիտական Խմբի տուեաներից միջին թիւ համելու մերողը: Համապատասխան հաշուարկի համածայն Հայոց Յեղասպանութեան նախօրեակին նահանգի իսլամադաւան բնակչութեան թիւը մօս 290,000 էր:

Մեր տրամադրութեան տակ առկայ սկզբնադրիւներից իսլամադաւանների ըստ ազգութեան բաշխման տուեալներ են պարունակում 1899ի Մաեսկու, 1912ի Հայոց պատրիարքարան-Ապահովութեան Յանձնաժողովի, 1912ի Օլֆերեի և 1914ի ԱՄՆ Տեղեկատու Փորձագիտական Խմբի վիճակագրութիւնները (Աղիւսակ 12):

#### **Աղիւսակ 12. Պիրլիսի նահանգի իսլամադաւան ազգաբնակչութեան թիւն ըստ ազգութիւնների**

№	Վարչական միաւոր	1899 Մաեսկի <sup>15</sup>	1912 Հայոց պատրիարքարան- Ապահովութեան Յանձնաժողով <sup>16</sup>	1912 Օլֆերե <sup>17</sup>	1914 ԱՄՆ Տեղեկատու Փորձագիտական Խումբ <sup>18</sup>
1	Շուրքեր	23,632	40,000	10,000	60,000
2	Չերքէզներ	-	10,000	1000	
3	Քրդեր	273,688	132,000 <sup>19</sup>	270,000	201,000
<b>Ընդամենը</b>		<b>297,320</b>	<b>182,000</b>	<b>281,000</b>	<b>261,000</b>

Ինչպէս կարելի է տեսնել վերը զետեղուած աղիւսակից, ի տարբերութիւն Պիրլիսի նահանգի ընդհանուր իսլամադաւան ազգաբնակչութեան բուաքանակի վերաբերեալ տուեալների, որոնք քիչ թէ շատ մօս են իրար, առանձին բուրք և չերքեց ազգաբնակչութեան բուաքանակների հարցում տուեալները բաւականին շօշափելի տատանում են. բուրք ազգաբնակչութեան պարագայում տարբերութիւնն առաւել ցածր եւ բարձր տուեալների միջեւ մօս 6 անգամ է (10,000՝ Օլֆերե - 60,000՝ ԱՄՆ Տեղեկատուական Փորձագիտական Խումբ), չերքեզների պարագայում մօս 10 անգամ (1000՝ Օլֆերե - 10,000՝ Հայոց պատրիարքարան-Ապահովութեան Յանձնաժողով): Սա, անշուշտ, հետե-

<sup>15</sup> Маевский, *Военно-статистическое описание Вансского и Битлесского вилаетовъ. Статистический очеркъ*, էջ 220–23:

<sup>16</sup> Leart, էջ 60–61:

<sup>17</sup> Сборникъ дипломатическихъ документовъ, էջ 285:

<sup>18</sup> Zamir, էջ 104:

<sup>19</sup> Այդ բում նատակեաց քրդեր՝ 35,000, քափառաշրջիկ՝ 42,000, դղթաշներ՝ 8000, զազա, թմբի, շարորը՝ 47,000:

տանը է օսմանեան վիճակագրութեան կողմից իսլամադաւանների ընդհանուր հաշուառման, ինչի պատճառով մուտքաման ազգութիւնների հաշուարկների հարցում վիճակագրութիւնների հեղինակները ստիպուած էին ապահնել քիչ թէ շատ հիմնաւոր ենթադրութիւնների եւ կրահումների: Առկայ տուեալները մեզ բոյլ են տալիս ենթադրել, որ Հայոց Յեղասպանութեան նախօրեակին Պիթիսի նահանգում կար մոտ 250,000 քորդ, 30,000 քորդ եւ 10,000 չերքէ ազգաբնակչութիւն:

Պիթիսի նահանգում բնակուող այլ ազգութիւններից համեմատաբար մեծ թիւ էին կազում ասորինները (յակորիկեան եւ կարողիկ յարանուանութիւնների հետեւորդներ) եւ Եղինները, որոնց օսմանեան պաշտօնական վիճակագրութիւնը հաշուառել է իսլամադաւանների մէջ (Աղիսակ 13):

**Աղիսակ 13.** Պիրլիսի նահանգի ոչ-հայ քրիստոնեայ և այլակրօն ազգաբնակչութեան թիւն ըստ տարրեր սկզբնադրիս-ների տուեալների

№	Վարչական միաւոր	1891 Քինէ <sup>20</sup>	1899 Մաեւսկի <sup>21</sup>	1912 Հայոց պատրիարքարան- Ապահովութեան Յանձնաժողով <sup>22</sup>	1912 Օլֆերի <sup>23</sup>	1914 օսմանեան <sup>24</sup>	1914 ԱՄՆ Տեղեկատու Փորձագիտական Խումբ <sup>25</sup>
1	Ասորի յակորիկեաններ	6190	2696		5000	3992	
2	Ասորի կարոլիկներ (քաղղէացիներ)	2600	2856	15,000	4000	4356	13,000
3	Ղալտիներ	372	400	-	400	-	-
4	Ճոյներ	210	-	-	-	-	-
5	Եզրիներ	3863	3240	5000	4000	-	4000
6	Գնչուներ	-	-	-	500	-	-
7	Այլ	-	-	-	100	-	2000
<b>Ընդամենը</b>		<b>13,235</b>	<b>9192</b>	<b>20,000</b>	<b>14,000</b>	<b>8348</b>	<b>19,000</b>

<sup>20</sup> Cuinet, էջ 527:

<sup>21</sup> Маевский, *Военно-статистическое описание Ванского и Битлисского вилаетовъ. Статистический очеркъ*, էջ 220–23:

<sup>22</sup> Leart, էջ 60–61:

<sup>23</sup> *Сборникъ дипломатическихъ документовъ*, էջ 285:

<sup>24</sup> *Tableaux indiquant le nombre des divers éléments de la population dans l'Empire Ottoman*, էջ 7. նախ՝ Karpat, էջ 174–75, 188–89:

<sup>25</sup> Zamir, էջ 104:

## **Ժ: ՄԵԾ ԵՂԵՆԻ նախօրեակին Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան բուաքանակի հաշուարկի մեթոդաբանութիւնը**

Աշխատանքի այս՝ ԺԱ բաժնում ներկայացում է Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան բուաքանակի մեր հաշտարկն ըստ զաւառակների: Իրականութեանը մօտ պատկեր ստանալու նպատակով մեր կողմից մէկտեղուն եւ համադրուել են տուեալ զաւառակի հայ բնակչութեան բուաքանակի վերաբերեալ սկզբնադրիւրի նշանակութիւն ունեցող հնարաւորինս մեծ բուով վիճակագրութիւններ:

Կազմել ենք Պիթլիսի նահանգի իրաքանչիւր զաւառակի հայ բնակչութեան բուաքանակի վերաբերեալ սկզբնադրիւրների կողմից հաղորդուող տուեալների համեմատական աղիսակներ՝ փորձելով ըստ տարրեր սկզբնադրիւրների հնարաւորինս ամբողջական ներկայացնել տուեալ վարչական միաւորում ՄԵԾ ԵՂԵՆԻ նախօրեակին գոյութիւն ունեցող հայաբնակ բնակավայրերը:

ՄԵԾ ԵՂԵՆԻ նախօրեակին Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան բուաքանակի հաշուարկի հիմք ընդունել ենք Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի իրահանգով Օսմանեան Կայսրութեան, այդ բուում՝ Պիթլիսի նահանգի տարածքում գործող հայկական եկեղեցական-թեմական կառոյցների կողմից 1913–14ի ընթացքում կազմուած վիճակագրութիւնների տուեալները (նշուած ծեռնարկի նկատմամբ նաև օգտագործում ենք 1913ի վիճակացոյց եւ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամար անուանումները)<sup>1</sup> համադրելով եւ լրացնելով դրանք մեր տրամադրութեան տակ առկայ այլ արժանահաւատ տուեալների հետ (Պիթլիսի նահանգից ՄԵԾ ԵՂԵՆը վերապրածների կողմից իրենց հայրենի բնակավայրերի մասին հաղորդուող տեղեկութիւններ, կոտորածից մազապուրծ եղած եւ Արեւելեան Հայաստանում եւ Կովկասում ապաստանած փախստականների հաշուառման տուեալներ, օժանդակ այլ սկզբնադրիւրներ):

Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամարի տուեալները հաշուարկների հիմքում դնելը մենք պայմանաւորում ենք հետեւեալ հիմնական նկատառումներով.-

1. Մարդահամարը կատարուել է մի մարմնի կողմից, որն ի պաշտօնէ ներկայացնում էր Օսմանեան Կայսրութեան հայ համայնքը, ուներ 1863ին ազգային սահմանադրութեամբ սահմանուած լիազօրութիւններ եւ, ինչը գուցէ աւելի էական է, լծակներ (թեմական կառոյցների ցանց, տարածքին ծանօթ հոգեւորականներ)՝ արեւմտահայութեան առաւել ամբողջական հաշուառում իրականացնելու համար.

<sup>1</sup> Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամարի մասին մանրամասն տե՛ս՝ Թարոյեան, Արևմտահայութեան բուաքանակի հարցը, էջ 92–115:

2. Մարդահամարը Մեծ Եղեռնին ժամանակագրական առումով առաւել մօտ իրականացուած արեւմտահայոթեան հաշուառումն է.
3. Մարդահամարը մեզ հասած աղբիրներից առաւել մանրամասնն ու ամբողջականն է. առկայ են նահանգի գրեթե բոլոր (բացառութեամբ Սաստինի որոշ շրջաններ) վարչական միաւորների համար մարդահամարի գիւղացուցակները:

Դրա հետ մէկտեղ, Կ. Պոլսի պատրիարքարանի 1913–14ի մարդահամարի տուեալները զերծ չեն թերութիւններից, ինչը եւ պայմանաւորում է դրանք այլ տուեալների հետ համադրելու, ճշտելու, փոխվրացնելու անհրաժեշտութիւնը։ Առանձնացնենք այդ թերութիւններից հիմնականները։

1. Մարդահամարի գիւղացուցակները սպառիչ եւ լիարժեք չեն. կան բնակավայրեր, նոյնիսկ՝ առանձին շրջաններ, որոնց վերաբերեալ տուեալները բացակայում են.
2. Որոշ շրջանների համար մարդահամարի գիւղացուցակի հիմքում դրուած են իրականից ցածր օսմանեան հաշուառման տուեալները։ Դա պայմանաւորուած էր այն հանգամանքով, որ որոշ ենթաքեններ տարրեր առարկայական եւ ենթակայական պատճառներով (ժամանակի սղութիւն, ֆինանսական եւ կազմակերպական աղբիրների պակաս եւն.) ի վիճակի չեն եղել սեփական ուժերով բնակչութեան հաշուառում իրականացնել եւ դրա փոխարէն տուեալներ են վերցրել օսմանեան իշխանութեան տեղական մարմիններից, մասնաւորապէս բնակչութեան հաշուառման վարչութեան (Nüfus-u Umumi İdaresi) տեղական բաժանմունքներից<sup>2</sup>:

Պիբլիսի նահանգի տուեալ վարչական միաւորի հայ բնակչութեան բուաքանակի հաշուարկն իրականացուել է հետեւեալ մեթոդների կիրառմամբ։

1. Այն դէպքում, երբ Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամարի գիւղացուցակին զուգահեռ այլ արժանահաւատ հայկական աղբիրները տրամադրում են տուեալ ժամանակահատուածին վերաբերող այլ գիւղացուցակներ կամ առանձին գիւղերի տուեալներ, մենք կիրառել ենք առկայ աղբիրների տուեալներից միշին թիւ հանելու մեթոդը։
2. Այն դէպքում, երբ Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամարի գիւղացուցակից դուրս է քողնուել բնակավայր կամ բնակավայրեր, որոնք արժանահաւատ երկու եւ աւելի այլ աղբիրների կողմից Մեծ Եղեռնի նախօրեակի դրութեամբ վկայուած են որպէս հայարնակ՝ մենք մեր հաշուարկում յաւելել ենք պակասող բնակավայրը։

<sup>2</sup> Օսմանեան կառավարութեան վիճակագրական համակարգի մասին մանրամասն տե՛ս՝ Stanford J. Shaw, “The Ottoman census system and population, 1831–1914,” *International Journal of Middle East Studies*, Oct., 1978:9(3), էջ 325–38:

- Այն դեպքում, եթե տուեալ գաւառակի համար Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամարի տուեալը բացակայում է, մենք հաշուարկի հիմքում դրեւ ենք տուեալ ժամանակահատուածին վերաբերող կամ առաւել մօտ կանգնած այլ գիտացուցակ, ներկայացնելով տուեալ ցուցակն ընտրելու պատճառ(ներ)ը:
- Այն դեպքում, եթե տուեալ ժամանակահատուածին վերաբերող զուգահեռ այլ գիտացուցակ բացակայում է, սակայն այլ տուեալներով երեւում է, որ Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամարի տուեալը բերհաշուառում է հայ բնակչութիւնը, մեր կողմից կիրառուել է թերհաշուառան գործակցի սահմանմամբ որոշակի չափով պատրիարքարանի տուեալը շտկելու մերողը:

Առաւել ճշգրիտ հաշուարկ կատարելու նպատակով առանձին դեպքերում չենք սահմանափակուել վերոնշեալ միայն մերողի կիրառմամբ, այլ համարեւ ենք դրանցից միքանիսը:

Տուեալ վարչական միաւորի համար Մեծ Եղեննի նախօրեակին հայ բնակչութեան բուաքանակի մեր կողմից ստացուած թիւը կլորացուել է մինչեւ ամենամօտ տասնեակը:

Տուեալ վարչական միաւորի կազմում ընդգրկուած գիտախմբերի ու բնակավայրերի հարցում առաջնորդուել ենք Հայկական համառուց հանրագիրարանի «Պիթլիսի նահանգ» բայոյօդուածում ներկայացուող գիտացուցակով<sup>3</sup>: Բնակավայրերի անունների գրելածեւերը տալիս ենք ըստ 1913–14ի Հայոց պատրիարքարանի մարդահամարի ցուցակի: Այն դեպքում, եթե տուեալ բնակավայրի անունը մարդահամարի ցուցակում բացակայում է՝ առաջնորդուել ենք այլ կարեւոր սկզբանորինների կողմից (Ա-Դօ, Նազարե Մարտիրոսեան, Թէողիկ) տրուող գրելածեւով՝ դրա մասին համապատասխանաբար նշելով ծանօթագրութեան մէջ: Առանձին դեպքերում տուել ենք բնակավայրի ան-աւան տարբերցումները:

Մեզ չի յաջորդուել գտնել եւ հայկական աղբիւրների կողմից հաղորդուող տուեալների հետ համեմատել Պիթլիսի նահանգի բնակչութեանը վերաբերող 1878–1914ի ընթացքում օսմանեան կառավարութեան կողմից անցկացուած մարդահամարների եւ ոչ մի գիտացուցակ: Եթէ անզամ դրանը պահպանուել են բուրքական արխիւներում, ապա առ այսօր չեն դրուել գիտական շրջանառութեան մէջ եւ յայտնի չեն անգա՞մ օսմանեան վիճակագրութեամբ գրադուող եւ օսմանեան արխիւներում նիւթերի հետ աշխատած թուրք եւ արեւմտեան ուսումնասիրողներին (Շոու, Կարպատ, Մըրֆարքի)<sup>4</sup>:

<sup>3</sup> Հայկական համառուց հանրագիրարան, հրո. 1, Ա-Դաշում, ՀԽՀ գլխ. խմբ., Երեւան, 1990, էջ 532–35:

<sup>4</sup> Մասնաւորապէս, Օսմանեան Կայսրութեան ժողովրդագրութեան հարցերով գրադուող ամերիկացի ուսումնասիրող Մըրֆարքին նշում է, որ բուրքական արխիւներում տեսել է ըստ շնչերի եւ տների ոչ-մահմեդական բնակչութեան հաշուառան տուեալները, սակայն ի վիճակի չի եղեւ դրանցից օգտուելու, քանի որ այդ նիւթերն իբր «դասակարգուած չէին» (McCarthy, *Muslims and minorities*, էջ 84):

Ինքնին հասկանալի է, որ աշխատանքում ներկայացուած վիճակագրական նիւթը սպառիչ չէ: Տարբեր աղբիրներում ցարուցիր առկայ են բազմաթիւ տուեալներ Պիթլիսի նահանգի առանձին բնակավայրերի հայ բնակչութեան քուաքանակի վերաբերեալ, որոնց հաւաքումը դուրս է եղել մեր հետազօտութեան շրջանակներից: Նաեւ բնաւ չի կարելի բացառել, որ յետազայում կարող են գիտական շրջանառութեան մէջ դրուել ինչպէս նահանգի ամբողջական, այնպէս էլ դրա առանձին շրջաններին վերաբերող սկզբնաղբիրային արժեք ունեցող նորայայտ վիճակագրութիւններ:

Նշենք նաեւ, որ մեր նպատակից դուրս է եղել Հայոց Ցեղասպանութեան նախօրեակի դրութեամբ Պիթլիսի նահանգի բոլոր հայարնակ բնակավայրերի սպառիչ եւ ճշգրիտ ցուցակ կազմելը, ինչպէս նաեւ բնակավայրերի քարտեզի վրայ տեղագրելը: Չենք բացառում, որ նահանգի սակաւարի հայ բնակչութիւն ունեցող առանձին բնակավայրեր դուրս են մնացել մեր հաշուարկից, սակայն գտնում ենք, որ դա էական ազդեցութիւն չի ունեցել հաշուարկի արդիւնքների արժանահաւատութեան վրայ՝ հաշուի առնելով օգտագործուած մերողարանութիւնը:

Ըստ առանձին վարչատարածքային միաւորների հայ ազգաբնակչութեան հաշուարկի արդիւնքները ներկայացնելուց յետոյ նպատակայարմար ենք գտել առանձնացնել եւ ներկայացնել տուեալ վարչատարածքային միաւորում մուսուլմանների եւ այլ խոշոր էթնոկրօնական խմբերի քուաքանակի վերաբերեալ 1899ի Մանևկու եւ 1914ի օսմանեան կառավարութեան վիճակագրութիւններից քաղուած տուեալները, որից յետոյ հայ բնակչութեան մեր ստացած քուի եւ այլ ազգութիւնների համար՝ 1914ի օսմանեան վիճակագրութեան տուեալների գումարման միջոցով որոշել ենք տուեալ վարչատարածքային միաւորում ընդհանուր ազգաբնակչութեան թիւը եւ ընդհանուր ազգաբնակչութեան մէջ հայերի տեսակարար կշիռը:

## **ԺԱ. ՄԵԾ Եղենի նախօրեակին Պիթլիսի նահանգի հայ բնակչութեան քուի հաշուարկ**

### **1. ՊԻԹԼԻՍԻ ԳԱՏՎՈ.**

#### **1.1. Պիթլիսի գաւառակի<sup>1</sup>**

1878–1914<sup>2</sup> Պիթլիսի գաւառակի հայ բնակչութեան քուաքանակի վերաբերեալ սկզբնադրիւների կողմից հա-  
պրոդուտ տուեալներն են.-

1. 1878–80. Հայոց պատրիարքարանի մարդահամար (իիմքում դրուած են Տեւկանցի կողմից 1878ի ամռանը հա-  
տաքուած տուեալները) 15,523 շունչ (այդ թում Բաղէջ քաղաք՝ 5964, շրջակայ գիտեր (Փարխանդ, Դատուան)՝  
5544, Տատիկ՝ 2394, Գէօզալդարա՝ 1621)<sup>3</sup>.
2. 1882. Բաղէջի առաջնորդարան՝ 3029 տուն - 20,666 շունչ, այդ թում Բաղէջ քաղաք՝ 1532 տուն - 10,724 շունչ,  
Տատիկ 655 տուն - 3853 շունչ, Գէօզալդարա 339 տուն - 2459 շունչ, Փարխանդ 181 տուն - 1378 շունչ, Դատուան  
322 տուն - 2252 շունչ (գիտացուցակը տե՛ս Աղիսակ 16)<sup>4</sup>: 1882ի այս տուեալները օգտագործուել են նաև  
Ա-Դոյի կողմից, որը գաւառակի համար հաղորդում է 21,690 հայ բնակչութիւն, որից 10,000ը քաղաքում (1600  
տուն), 11,690ը (1670 տուն) գաւառակի 46 հայաքնակ գիտերում<sup>5</sup>.
3. 1891. Քին՝ 16,286 շունչ<sup>6</sup>.
4. 1899. Մաեսկի՝ 3436 տուն հայ, որից Պիթլիս քաղաքում՝ 1550 տուն, գաւառակի հայաքնակ բնակավայրերում՝  
1886 տուն: Հեղինակը մեկ տաճ վրայ հաշուում է 8 շունչ, ստանալով գաւառակի համար 27,488 շունչ հայ  
բնակչութիւն (գիտացուցակը տե՛ս Աղիսակ 16)<sup>6</sup>.
5. 1913ի Բաղէջի թեմի վիճակացոյց (Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամար)՝ 3255 տուն -

<sup>1</sup> Պիթլիս քաղաք եւ շրջակայ գիտեր, Փարխանդի, Դատուանի, Ազնուածորի (Գէօզալդարա), Տատիկի եւ Չուխուրի գիտա-  
խմբեր:

<sup>2</sup> Տեւկանց, էջ 107:

<sup>3</sup> Ե. Ա., «Տաճկական Հայաստան. մարդաբի եւ հարկահամար Բաղէջոյ վիճակի», Արձագանք, Թիֆլիս, 1882, № 18, էջ 278–80.  
նաև՝ Հ. Ա. Էփրիկեան, «Պատկերազարդ բնաշխարհիկ քառարան, հիդր. առաջին, Ա-Ը, տպարան Ս. Ղազար, Վենետիկ, 1902,  
էջ 365: Գիտացուցակը տե՛ս Աղիսակ 16:

<sup>4</sup> Ա-Դօ, Վանի, Պիթլիսի եւ Երզրումի վիլայէթները, էջ 157:

<sup>5</sup> Cuinet, էջ 562:

<sup>6</sup> Մաևսկի, *Военно-статистическое описание Ванскаго и Битлисскаго вилаетовъ. Статистический очеркъ*, էջ 220:

21,814 հայ բնակչութիւն, որից 7241ը (1135 տուն)՝ Պիրլիս քաղաքում, 14,573ը (2120 տուն)՝ գաւառակի 46 հայաբնակ գիտերում (Չոխուրի գիտախումբը ներառեալ) (գիտացուցակը տե՛ս Աղիսակ 16)<sup>7</sup>:

Մենք հնարաւորութիւն ունենք համադրել 1913ի վիճակացոյցի տուեալները Պիրլիսի գաւառակի Տատիկի գիտախմբի եւ առանձին այլ գիտերից Մեծ Եղեռնը վերապրածների կողմից իրենց հայրենի բնակավայրերի հայ բնակչութեան բուաքանակի մասին հաղորդուող տեղեկութիւնների հետ (Աղիսակ 14 եւ 15): Համապրումը ցոյց է տաիս, որ վիճակացոյցի հաղորդած թիւը միջինը շուրջ 20–25%ով ցածր է տուեալ գիտի վերապրած բնակչի վկայած տուեալից: Սա փաստարկ է առ այն՝ որ թեմական իշխանութիւնները թերի են հաշուառել Պիրլիսի գաւառակի հայ բնակչութիւնը: Նշենք, որ 1913ի Բաղէշի թեմի վիճակացոյցի թիւը շատ չի տարբերում նոյն ժամանակաշրջանի համար օսմանեան կառավարութեան կողմից հաղորդուող տուեալից (ըստ 1914ի օսմանեան վիճակագրութեան՝ գաւառակում բնակում եր 19,123 հայ)<sup>8</sup>, ինչը հիմքեր է տալիս ենթադրելու, որ վիճակացոյցի կազմման ժամանակ Պիրլիսի թեմական կառոյցներն ինքնուրոյն հաշուառում չեն իրականացրել, այլ օգտուել են օսմանեան ցուցակներից:

<sup>7</sup> Հաշուարկը մեր կողմից ըստ մարդահամարի գիտացուցակի տուեալների (տե՛ս ՀԲԸՄ ՆՄԱ, APC/BNu, DOR 3/3, ff. 49–52): Նոյն տուեալների հիման վրայ Գեղրգեան/Փապութեանի հաշուարկով 57 հայաբնակ բնակավայր - 23,899 շունչ հայ (Ke-vorkian ու Raboudjian, էջ 59, 469): Տարբերութիւնը բացատրում է նրանով, որ ֆրանսահայ ուսումնասիրողները գաւառակի գիտացուցակը լրացնում են Ա.-Դոյի Վանի, Պիրլիսի և Էրզրումի վիլայեթները գրքում գետեղուած գիտացուցակի տուեալներով, ինչը մեր կարծիքով արդարացուած չէ, քանի որ Ա.-Դոյի տուեալները արտացոլում են աւելի վաղ ժամանակաշրջանի (1880ականների սկզբներ) իրողութիւնը: Սուլթան Արդուզ Համիլի կառավարման տարիներին, յատկապէս 1895–96ի զանգուածային կոտորածների հետեւանքով, Պիրլիսի նահանգի որոշ բնակավայրեր հայաքափունել են եւ առաջին աշխարհամարտի նախօրեակին դեռևս չին վերականգնել իրենց հայ բնակչութիւնը:

Պիրլիսի գաւառակի 1913–14ի Հայոց պատրիարքարանի մարդահամարի գիտացուցակը տե՛ս նաեւ՝ Թէոդիկ, Գողգորա հայ հոգիուրականութեան, էջ 59–67, 536–37:

<sup>8</sup> Karpat, էջ 174:

**Աղիսակ 14.** Պիրլիսի գաւառակի Տատիկի գիղախմբի հայ բնակչութեան քուաքանակն ըստ 1913ի վիճակացոյցի և Վերապրածների վկայութիւնների տուեալների

№	Բնակավայր	1913 թաղէջի առաջնորդարան (1913-14ի Հայոց պատրիարքարանի մարդահամար)		Մեծ Եղեռնը վերապրածների վկայութիւններ <sup>9</sup>	
		Տուն	Ըունչ	Տուն	Ըունչ
1	Պաս	60	351	70	420
2	Կելիօկ	30	162	60	410
3	Ծղկամ	50	277	40	280
4	Կէխը	20	191	40	320
5	Մոճկոնք	39	292	50	400
6	Ոստին	31	224	40	280
7	Սասիկ	28	193	35	280
8	Վանիկ	61	380	60	420
9	Խոլթիկ	490	2598	500	3500 <sup>10</sup>
<b>Ընդամենը</b>		<b>809</b>	<b>4668</b>	<b>895</b>	<b>6310</b>

<sup>9</sup> Վերապրած Սարգսի Կարիքեանի կողմից Տատիկի գլուխախմբի համար հաղորդած տուեալները (Հայոց Յեղասպանութիւնը Օմանիան Թուրքիայում: Վերապրածների վկայութիւններ: Փաստաթղթերի ժողովածու, հրթ. II, Պիթլիսի նահանգ, զլս. խմբ՝ Ա. Վիրաբեան, Հայաստանի Ազգային Արխիսի, Երևան, 2012, էջ 66–67):

<sup>10</sup> Վերապրած Ասպատուր Բրուտեանի տուեալները (նոյն, էջ 69):

**Աղիւսակ 15.** Պիրլիսի գաւառակի որոշ զիտերի հայ բնակչութեան քուաքանակն ըստ 1913ի վիճակացոյցի և վերապահմաների վկայութիւնների տուեալների

№	Բնակավայր	1913 թաղէջի առաջնորդարան (1913–14ի Հայոց պատրիարքարանի մարդահամար)		Վերապրածների վկայութիւններ	
		Տուն	Շունչ	Տուն	Շունչ
1	Հանդ	50	321	55	500 <sup>11</sup>
2	Կարք	56	384	60	500 <sup>12</sup>
3	Թուխ	50	349	60	610 <sup>13</sup>
4	Տօփ	31	224	35	300 <sup>14</sup>
<b>Ընդամենը</b>		<b>187</b>	<b>1278</b>	<b>210</b>	<b>1910</b>

Մեծ Եղեռնի նախօրեակին Պիրլիսի գաւառակի հայ բնակչութեան քուաքանակը որոշելու նպատակով որպէս իիմք ընդունել են 1913ի վիճակացոյցի (Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամար) տուեալները: Այս բնակավայրերի դէպրում, որոնց համար առկայ է Մեծ Եղեռնը վերապրողի կողմից հաղորդուող զուգահեռ տուեալ՝ բնակչութեան թիւը որոշուել է երկու տուեալից միջին թիւը հանելով: Մնացած բնակավայրերի դէպրում 1913–14ի մարդահամարի տուեալները բողոքուել են անփոփոխ: Պիրլիս քաղաքի պարագայում Մեծ Եղեռնի նախօրեակին բնակչութեան համար ընդունուել է կլորացուած 10,000 թիւը, որը վկայում է այլ աղբիւների (Ա.-Դօ,<sup>15</sup> Սասունի<sup>16</sup>) կողմից: Այս սկզբունքների հիման վրայ կատարուած հաշուարկների համաձայն (Աղիւսակ 16), Մեծ Եղեռնի նախօրեակին Պիրլիսի գաւառակում կար 3548 տուն - 25,713 շունչ հայ բնակչութիւն, որից Պիրլիս քաղաքում՝ 1370

<sup>11</sup> Վերապրած Յովսէփ Մարտիրոսեանի տուեալները (նոյն, էջ 72):

<sup>12</sup> Վերապրած Բագրատ Պետրոսեանի տուեալները (նոյն, էջ 71):

<sup>13</sup> Վերապրած Իգիր Մանուկեանի տուեալները (նոյն, էջ 68):

<sup>14</sup> Վերապրած Միհիթար Միրզոյեանի տուեալները (նոյն, էջ 76):

<sup>15</sup> Ա.-Դօ, Վահակ, Պիրլիսի, Էղզրումի վիլայէթները, էջ 157:

<sup>16</sup> Սասունի, Պարմութիս Տարօնի աշխարհի, էջ 334:

տուն - 10,000 շունչ եւ հաշուարկի մէջ ընդգրկուած զաւառակի 46 հայաբնակ գիւղերում՝ 2178 տուն - 15,713 շունչ հայ։ Պիրլիսի զաւառակի հայ բնակչութեան կլորացուած թիւ՝ 3550 տուն - 25,710 շունչ հայ<sup>17</sup>։

<sup>17</sup> Ըստ Բաղպետանի՝ Քաղէջի գաւառակի հայաբնակ զիտերի հայ թնակչութեան թիւը առաջին աշխարհամարտի նախօրէին շուրջ 13,000 էր։ Ուստմանախրողը չի մանրամասնում, թէ ի՞նչ տուեալների հիման վրայ է յանգել այդ կարծիքի (Գեղամ Ա. Բաղպետան, «Արեւմտեան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ Եղեռնի նախօրէին. մաս եօթերորդ։ Պիրլիսի նահանջի հարաւ-արեւելեան գաւառները», Վեմ համահայկան հանդէս, Ը (ԺԴ) տարի, Հոկտեմբեր-Դեկտեմբեր, 2016:56 (4), էջ II):

Գարայեանի տուեալներով՝ Պիրլիս քաղաքում կար 1600 տուն - 10,000 շունչ հայ, Պիրլիսի գաւառակի 55 հայաբնակ զի-դերում՝ 2059 տուն - 14,413 շունչ հայ թնակչութիւն (ուսումնասիրող մէկ տան վրայ հաշում է 7 շունչ) (*Armenians in Ottoman Turkey, 1914*, էջ 173-77): Որպէս աղքար՝ հեղինակը նշում է Թէոդիկի, Ա-Դոյի և Սասունու տուեալները (նոյն):

**Աղիսակ 16. Պիրլիսի գաւառակի հայ բնակչութեան քուաքանակը Մեծ Եղեռնի նախօրեակին**

№	Բնակավայր	1880–81 Բաղէջի առաջնորդարան		1899 Մաեսկի		1909 Ա-Դօ		1880–81 Բաղէջի առաջնորդարան (1913–14ի Հայոց պատրիարքարանի մարդահամար)		1899 Մաեսկի	
		Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ
1	Պիրլիս (Բաղէջ) ք.	1532	10,726	1550	12,400	1600	10,000	1135	7241	1370	10,000
<i>Հույսուրի զիւղախումբ</i>											
2	Մսուրի	-	-	2	16	-	-	-	-	-	-
3	Մուշեղշեն	-	-	26	208	-	-	68	401	68	401
4	Մօղակ	-	-	19	152	-	-	21	128	21	128
5	Ճապկիս	-	-	6	48	-	-	5	27	5	27
6	Սարակեօլէ (Էրուն)	-	-	-	-	-	-	13	92	13	92
7	Քսիսամ	-	-	-	-	-	-	18	150	18	150
<i>Դադուանի և Փարիսանի զիւղախումբեր</i>											
8	Ալամեր	4	28	-	-	4	28	-	-	-	-
9	Արքձոր	9	53	5	40	9	53	-	-	-	-
10	Անպ	8	35	6	48	8	35	7	23	7	23
11	Գոմս	58	302	18	144	-	-	59	589	59	589
12	Դատուան	70	512	53	424	120	512	135	1298	135	1298
13	Էլմալը	16	132	13	104	16 <sup>18</sup>	132	-	-	-	-
14	Թուխ	41	272	25	200	25 <sup>19</sup>	208	50	349	55	480
15	Խախոնէ	31	207	27	216	50	207	39	370	39	370
16	Խարթկող	4	48	12	96	4	48	11	199	11	199
17	Խնձօքոր	12	74	11	88	12	74	15	62	15	62
18	Խնձորզին	22	170	-	-	-	-	39	370	39	370
19	Ծվար	17	86	25	200	20	86	20	180	20	180
20	Կամախ	41	266	45	360	41	266	49	423	49	423
21	Կորու (Կորվու) Վերին	60	575	25	200	60	575	64	527	64	527
22	Կորու (Կորվու) Վարի			19	152			31	235	31	235
23	Հօրմզ	14	80	5	40	14	80 <sup>20</sup>	23	130	23	130

<sup>18</sup> Ա-Դօն զիւղը տեղադրում է Խլաթի գաւառակի կազմում:

<sup>19</sup> Ա-Դօն զիւղը տեղադրում է Խլաթի գաւառակի կազմում:

<sup>20</sup> Ըստ Պետոյեանի՝ զիւղն ունէր 60 տուն հայ (Վարդան Պետոյեան, Սամայ ազգագրութիւնը, ՀՍՍՌ ԳԱ հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 1965, Երեւան, 1965, էջ 12):

24	Մարգործ ստորին	25	182	15	120	25	182 <sup>21</sup>	28	173	28	173
25	Մարգործ Վերին	7	53	10	80	7	53	-	-	-	-
26	Մզրէ	20	134	25	200	25	134	30	155	30	155
27	Ալկամ (Ջրլըան)	7	50	7	56	7	50	25	150	25	150
28	Պաշշէն	35	325	35	280	35	325	50	490	50	490
29	Պոռ	46	392	60	480	100	392	59	524	59	524
30	Ռունուա	8	60	-	-	8	60	-	-	-	-
31	Սնդեսն	3	22	4	32	3	22	10	40	10	40
32	Ուրտափ	58	534	60	480	80	302	88	584	88	584
33	Փարխանն	51	331	50	400	51	311	40	230	40	230

*Ազնուածորի (Գեօգալդարայի) գիւղախումբ*

34	Ալբերդ	2	21	2	16	2	21	-	-	-	-
35	Բալքան	3	18	6	48	3	18	-	-	-	-
36	Չնէր	-	-	-	-	-	-	2	14	2	14
37	Խարզգիք	25	168	-	-	25	168	23	170	23	170
38	Խարք	8	64	15	120	8	64	10	88	10	88
39	Խումս	20	162	-	-	20	162	-	-	-	-
40	Կարք	40	335	42	336	40	335	56	384	58	442
41	Կոստոն	4	39	4	32	4	39	-	-	-	-
42	Կուրք	57	514	-	-	57	514	-	-	-	-
43	Հանդ	38	238	38	304	38	238	50	321	53	411
44	Հօրծագ	8	57	10	80	8	57	17	56	17	56
45	Սազ	47	293	50	400	47	293	72	406	72	406
46	Նէլ	27	181	18	144	27	181	36	232	36	232
47	Սաղնուս	-	-	-	-	-	-	2	11	2	11
48	Տաշուօփ	13	70	18	144	13	70	15	100	15	100
49	Տօփի	20	114	21	168	20	114	31	224	33	262

*Տայրիկի գիւղախումբ*

50	Խուլքիկ	334	1779	560	4480	334	1779	490	2598	495	3049
51	Ծղկամ	41	243	25	200	41	243	50	277	45	279
52	Կելիօկ	27	184	40	320	27	184	30	162	45	286
53	Կելիս	19	147	20	160	19	147	20	191	30	256
54	Մոճկոնք	43	291	45	360	43	291	39	292	46	346
55	Ծէն	12	73	-	-	12	73	-	-	-	-
56	Ոստին	27	134	30	240	27	134	31	224	36	252
57	Պաս	58	441	55	440	58	441	60	351	65	386
58	Սասիկ	27	158	20	160	27	158	28	193	32	237
59	Սափի	7	41	-	-	7	41	-	-	-	-
60	Վաճիկ	60	362	52	416	60	362	61	380	61	400
	<b>Քննամէնը</b>	<b>3166</b>	<b>21,776</b>	<b>3229</b>	<b>25,832</b>	<b>3291</b>	<b>20,262</b>	<b>3255</b>	<b>21,814</b>	<b>3548</b>	<b>25,713</b>

<sup>21</sup> Ըստ Պետոյեանի՝ Մարգործ ունէր 100 տուն հայ:

## 1.2. Խոլարի գաւառակ

Խոլարի գաւառակի հայ բնակչութեան քուաքանակի վերաբերեալ սկզբնադրիւները հաղորդում են հետեւեալ տուեալները:-

1. 1880. Մշոյ առաջնորդարան-Գրիգորիս արքեպիսկոպոս Ալեքսանդրի 25 հայաբնակ բնակավայր<sup>22</sup>, 1001 տուն - 8656 շունչ<sup>23</sup>.
2. 1880. «Սովելոց Յանձնաժողով»<sup>24</sup> 9864 շունչ<sup>25</sup>.
3. 1882. Արջագանք շարաբարերը՝ 23 հայաբնակ բնակավայր, 930 տուն - 8538 շունչ<sup>26</sup>.
4. 1899. Մաեստի 1054 տուն - 8432 շունչ հայ բնակչութիւն<sup>27</sup>.
5. 1913. Բաղէշի թեմի վիճակացոյց (Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամար) 22 հայաբնակ բնակավայր, 1771 տուն - 13,860 շունչ<sup>28</sup>.

<sup>22</sup> Ներառեալ Էլմալը, Թուխ և Ուրտափ բնակավայրերը:

<sup>23</sup> Մշոյ առաջնորդարանի վիճակագրութիւնը ուղարկուել է Կ. Պոլսի 1880ի Նոյեմբերին (Գրիգորիս արքեպիսկոպոս Տարօնյ, «Վիճակագիր հայոց Տարօնյ», Մասիս, Կ. Պոլսի, 24 Նոյեմբերի (6 Դեկտեմբերի) 1880, էջ 2): Տուեալները վերատպուել են Եփրիկեանի Պագլիրազարդ բնաշխարհիկ բառարանում, հյոր առաջին, Ա-Ը, էջ 175): Նոյն վիճակագրութիւնը որոշակի փոփոխութիւններով (դուրս է բողնուած Ուրտափ գիտը)՝ Ա-Դոյի մօտ (Ա-Դօ, Վասի, Պիրլիսի և Երզրումի վիլայէքները, էջ 89):

<sup>24</sup> Ստեղծուել է Հայոց պատրիարքարանին կից 1877–78ի ոռս-թուրբական պատերազմից անմիջապէս յետոյ, պատերազմից սուժած հայաբնակ շրջանների սովելալներին մթերք մատակարարելու նպատակով:

<sup>25</sup> Այլ մանրամասներ բացակայում են (Ա. Թոխմախեան, Հայրենիքի պահանջներ և հայ գիտացին: Հրապարակախօսութիւն կապրուած Մայիսի 29-ին և կրկնուած Յունիսի 12-ին Արծրունու թագրունում, տպ. Կովկաս. փոխ. գիշ. կառավ., Թիֆլիս, 1881, էջ 44):

<sup>26</sup> Խոլարի գաւառակի վիճակագրութիւնը ներկայացուած է «Բաղէշի հիւսիսկողմը» ներառուած բնակավայրերի մէջ (Ե. Ս., «Տաճկական Հայաստան. մարդարի և հարկահամար Բաղէշոյ վիճակի», էջ 278. նաև՝ Եփրիկեան, էջ 365):

<sup>27</sup> Հեղինակը նշում է, որ անձամբ միքանի անգամ այցելել և ուսումնասիրել է Խոլարի գաւառակը (Մաևսկի, Յօւնո-ստատիստիկական ուսումնական հայութեան մասին առաջարկուած տեսչութեան համար և այլն առաջարկուած տեսչութեան մասին առաջարկուած տեսչութեան մասին, Օժբեկ պատմութեան մասին, էջ 93):

<sup>28</sup> Հաշուարկը մեր կողմից՝ ըստ մարդահամարի գիտացուցակի տուեալների (ՀԲԸ ՆՄԱ, APC/BNU, DOR 3/3, ff. 49–52): Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամարի տուեալների հիման վրայ Գեղրգեան/Փապուճեանի կողմից կատարաւած հաշուարկով Խոլարի գաւառակում կար 22 հայաբնակ բնակավայր, 1679 տուն - 13,432 շունչ հայ: Տարբերութիւնը բացատրում է նրանով, որ ուսումնասիրուները գաւառակի կազմից հանել են Պիրլիսի գաւառակի կազմում են հաշուառել Չամիրամ և Զրիոր բնակավայրերի հայ բնակչութիւնը (Կévorkian/Paboudjian, էջ 59, 474):

6. 1914. Մարտիրոսեան<sup>29</sup> 23 հայաբնակ բնակավայր, 1664 տուն - 12,575 շունչ<sup>30</sup>:

1880–81ի և 1913–14ի Հայոց պատրիարքարանի տուեալների համադրումը վկայում է, որ նշուած ժամանակահատում հայ ընտանիքների թուաքանակի աճը կազմել է 90%, հայ բնակչութեան աճը 62%, ինչն ըստ երեսյրին ոչ-այնքան բնական աճի, որքան հաշուառնան գործընթացի բարելաւման արդիւնք է: 1880–81ին մէկ տան վրայ ընկնող բնակիչների միջին թիւը կազմում էր 9,2, իսկ 1913–14ին՝ 7.8 շունչ: Ելնելով վերոնշեալից՝ կարելի է առաջարկել Մեծ Եղեռնի նախօրենակին Խլարի գաւառակի հայ բնակչութեան թուաքանակի ճշտման երկու մեթոդ.- 1) տների թուաքանակի աճի ցուցանիշը (90%) բնակչութեան թուաքանակի վրայ տարածումը և 2) 1880–81ին մէկ տան վրայ ընկնող բնակիչների միջին թիւի ցուցանիշը 1913–14ի տուեալների վրայ տարածումը:

Կիրառելով առաջին մեթոդը՝ մենք տարածում ենք 1880–1914՛ վկայուող տների թուի 90% աճը հայ բնակչութեան թուաքանակի վրայ: Ըստ այդմ, 1914ին գաւառակի հայ բնակչութեան թիւը կազմում է 16,222 շունչ:

1880–81ին մէկ տան վրայ ընկնող բնակիչների միջին թիւի ցուցանիշի 1913–14ի տուեալների վրայ տարածման մեթոդով վերցնում ենք աղբիւրի կողմից 1880–81ին վկայուող մէկ տան վրայ ընկնող բնակիչների միջին թիւը և բազմապատկում այն նոյն աղբիւրի կողմից 1913–14ի հաշուառուած տների թուաքանակի վրայ՝ 1771: Ըստ այդմ, 1914ին գաւառակի հայ բնակչութեան թիւը կազմում է 16,293 շունչ:

Այսպիսով այս երկու մեթոդների կիրառմամբ մեր կողմից կատարուած հաշուարկի արդիւնքում կարող ենք եզրակացնել, որ Մեծ Եղեռնի նախօրենակին Խլարի գաւառակի՝ հաշուարկի մէջ ընդգրկուած 23 հայաբնակ բնակավայրերում կար մօտ 1770 տուն հայ՝ շուրջ 16,200 շունչ հայ բնակչութեամբ<sup>31</sup>:

Ըստ որոշ օժանդակ աղբիւրների կողմից հաղորդուող տուեալների՝ գաւառակի հայ բնակչութեան թուաքանակը նոյնիսկ մի փոքր աւել է եղել: Այսպէս, Մանազկերտի առաջնորդական փոխանորդ Յովհաննէս քահանայ Տեր-Աւետիսեանի կողմից Գէորգ Ե. կաթողիկոսին 1915 Մայիսի 28ին ուղարկած գեկուցագրում հղորդուում է, որ Խլարի

<sup>29</sup> Մարտիրոսեանը՝ իբրեւ ուսուցիչ, Մշոյ առաջնորդարանի քարտուղար եւ թուրքական կառավարութեան եկեմտական վարչութեան պաշտօնեայ, առիյ է ունեցել շուրջ 20 տարի շրջելու Վանի, Պիրլիսի և Էրզրումի նահանգներով և վիճակագրական տուեալներ հաւաքել: Այդ տուեալները նա իրատարակել է Թիֆլիսի *Վան-Տուս* պարբերականի 1916ի միքանի համարներում (*Վան-Տուս*, 1916, № 12–15):

<sup>30</sup> Մարտիրոսեան, «Համաեւրոպական պատերազմի ընթացքում ամայացած Արևելեան Հայաստանի գաւառների վիճակագրութիւնը», *Վան-Տուս*, 1916, № 15, էջ 8:

<sup>31</sup> Քինէի տուեալներով (1891) գաւառակի հայ բնակչութեան թիւն էր՝ 6609 (Cuinet, էջ 564), 1914ի օսմանեան տուեալներով՝ 9501 հայ (Kargat, էջ 174):

գաւառակում կար 24 հայաբնակ քնակավայր՝ 2150 տուն հայ քնակչութեամբ<sup>32</sup>: Մէկ այլ՝ վերջերս ի յայտ եկած սկզբնադրիւրի՝ Վ. Տէրոյեանի<sup>33</sup> վիճակագրութեան համաձայն, Մեծ Եղեռնի նախօրեակին Խլարի գաւառակի 21 հայաբնակ գիտերում կար 2215 տուն հայ<sup>34</sup> (Տէրոյեանի գիտացուցակը տե՛ս Աղիսակ 18): Ընդունելով մէկ տաճ անդամների միջին թիւը 8 շունչ՝ կը ստանանք Խլարի գաւառակի համար 17,200 շունչ (Տէր-Աւետիսիւտան քահանայ), կամ 17,720 շունչ (Տէրոյեան) հայ քնակչութիւն:

**Աղիսակ 17.** Խլարի գաւառակի հայ քնակչութեան քուաքանակը ըստ Հայոց պատրիարքարանի 1880–81ի և 1913–14ի տուեալների

	1880–81	1913–14	Աճ%
Տուն	930	1771	90%
Շունչ	8538	13,860	62%

<sup>32</sup> Մ. Ներսիսիւտան, «Նիւթեր հայկական կոտորածների մասին», *Պատրիարքանասիրուկան հանդէս*, 1965:1, էջ 89: Խլարի գաւառակի հայ քնակչութեան քուաքանակի համար նոյն տուեալը (24 հայաբնակ քնակավայր, 2150 տուն հայ) իր հաշուարկում օգտագործում նաև Գարայեանը (Karayan, “An inquiry”, էջ 11, 30): Ուստիմնասիրողի մէկ այլ հաշուարկով (ըստ Թէոդիկի տուեալների) Խլարի գաւառակում 1914ին կար 1967 տուն - 13,769 շունչ հայ քնակչութիւն (Karayan, *Armenians in Ottoman Turkey*, 1914, էջ 178–79):

<sup>33</sup> Հասարակական-քաղաքական գործիչ Վարազդատ Տէրոյեանը 1919ին որպէս Մերձաւոր Արեւելքի Օգնութեան Ամերիկեան Կոմիտէի (Ամերկոն) ներկայացուցիչ, արեւտահայ զաղրականներից իրենց հայրենի քնակավայրերի մասին տարբեր՝ այդ թում, վիճակագրական տուեալների հաւաքմամբ է գրաղուել: Ստացած թուերը նա մատիտով անց է կացրել նաև Ա-Դոյի Վամի, Պիրլիսի և Էրզրումի վիլայեթները գրքի իր օրինակի համապատասխան աղիսակներում, տուեալ քնակավայրի անուան դիմաց: Տէրոյեանի՝ Ա-Դոյի գրքում անելացուած վիճակագրական նիւթը հրատարակուել է Բադալեանի կողմից (Գեղամ Բադալեան, «Վարազդատ Տէրոյեանի վիճակագրական նիւթերն Արեւմտեան Հայաստանի քնակավայրերի վերաբերեալ», Բամբեկ Հայաստանի արխիմինիք, 2005:105(1), էջ 212–20):

<sup>34</sup> Նոյն, էջ 220: Բադալեանի կազմած աղիսակում Խլարի գաւառակի կազմում նշում է 22 քնակավայր 2215 տուն քնակչութեամբ: Մեր հաշուարկոց հանձն ենք Թուխը (60 տուն), որը հետեւելով Հայկական համազուր համրազիրարանի «Պիրլիսի նահանգ» բայօղուածի տուեալի, տեղադրել ենք Պիրլիսի գաւառակի կազմում:

**Աղյուսակ 18. Խլարի գաւառակի հայ բնակչութեան թուաքանակը Մեծ Եղեռնի նխօրեակին**

№	Բնակավայր	1880 Մշոյ առաջնորդարան		1882 Արժագանք շարաբարերք		1913 Բաղէջի առաջնորդարան (1913-14ի Հայոց պատրիարքարանի մարդահամար)		1914 Մարտիրոսեան		1914 Տերոյեան
		Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ	
1	Ազրակ	6	51	7	63	21	152	13	84	25
2	Աղաղ	18	139	20	159	30	270	39	270	55
3	Էրսոնք	28	262	19	205	42	397	36	263	40
4	Թէղուտ	215	1728	174	1473	260	1599	254	1928	300
5	Խարապաշար և Հարկլոնձա (Խլարի քաղերից)	28	209	25	300	38	210	21	93	-
6	Խիարդանք	-	-	-	-	-	-	10	78	15
7	Խովիկ	20	183	11	196	68	670	66	516	50
8	Ծաղկէ	25	227	15	95	29	209	19	147	40
9	Ծղակ	60	496	89	865	159	1394	82	596	150
10	Կամուրջ	57	688	83	570	100	724	87	688	200
11	Կծուակ	60	514	71	642	150	940	105	923	150
12	Կօշտեան	26	249	30	304	97 <sup>35</sup>	636	65	480	60
13	Զորկոնք	12	95	13	84	59	674	-	-	25
14	Շեմալտին	15	153	18	160	34	175	40	294	50
15	Մատնավանք	12	103	17	133	28	170	22	200	40
16	Մեծք	20	185	20	202	132	1404	60	430	80
17	Նազուկ			8	75	-	-	10	74	-
18	Շամիրամ	22	178	26	214	58	440	80	625	60
19	Զգիրօք	10	115	8	70	10	115	15	110	-
20	Զրիոք	36	283	37	316	50	326	100	785	70
21	Սփուաձոր	29	176	31	247	50	360	37	275	45
22	Սօխորդ	15	138	21	159	49	386	58	390	50
23	Տափավանք	90	873	80	695	100	670	161	1172	250
24	Փրիուս	115	1000	107	1311	207	1939	284	2154	400
<b>Ընդամենը</b>		<b>919</b>	<b>8045</b>	<b>930</b>	<b>8538</b>	<b>1771</b>	<b>13,860</b>	<b>1664</b>	<b>12,575</b>	<b>2155</b>

<sup>35</sup> Նազիկը ներառեալ:

### 1.3. Մօտկանի գաւառակ

#### 1.3(1). Մօտկանի շրջանակ

Մօտկանը, որն իր դիրքով կազմում էր Սասունի բնական մասը, օսմանեան կառավարութեան կողմից ընդգրկուել էր Պիթլիսի գաւառակի կազմում: Ինչպէս օսմանեան այնպէս էլ հայկական աղբյուրները թերի են ներկայացնում գաւառակի հայ բնակչութեան քուաքանակը՝ իրարից էականորեն չտարբերուելով: Դա առաջին հերթին պայմանաւորուած էր գաւառակի լեռնոտ եւ դժուարանատչելի տեղանքով, որը բնական խոշընդուներ էր յարուցում գաւառակի ուսումնասիրութեանն ուղղուած փորձերին: Նշուած եւ այլ պատճառներով Սասունին Մօտկանը բնորոշում է որպէս «ամենաածանօք վայրը Տարօնի աշխարհին մէջ»<sup>36</sup>:

ԺԹ: դարի երկրորդ կէս-Ի. դարի սկզբի ժամանակաշրջանի համար համահաւաք գիտացուցակն ընդգրկում է 33 հայաբնակ բնակավայրի անուն<sup>37</sup>, սակայն առանձին վիճակագրական ցանկերում բնակավայրերի քանակը որպէս կանոն աւելի ցածր է:

Մօտկանի<sup>38</sup> հայ բնակչութեան քուաքանակի վերաբերեալ աղբյուրների հաղորդած տուեալներն են.-

1. 1878. Արխստակէս Տեւկանց՝ 25 հայաբնակ բնակավայր, 4950 շունչ<sup>39</sup>.
2. 1880. Մշոյ առաջնորդարան-Գրիգորիս արքեպիսկոպոս Ալեքսեան՝ 31 հայաբնակ բնակավայր, 313 տուն - 3756 շունչ (գիտացուցակը բացակայում է)<sup>40</sup>.
3. 1882. Արժագանք շաբաթաթերք՝ 20 հայաբնակ բնակավայր, 288 տուն - 2138 շունչ (տե՛ս նաև Աղիսակ 19)<sup>41</sup>.
4. 1890. Կոլիբակին՝ 25 հայաբնակ բնակավայր, 367 տուն<sup>42</sup>.

<sup>36</sup> Սասունի, Պակմութիսն Տարօնի աշխարհի, էջ 344: Ուսումնասիրողը նշում է, որ Մուշի եւ Պիթլիսի հայոց առաջնորդարանները որեւէ սույզ գաղափար չունեին գաւառակի հայ ազգաբնակչութեան քոյի մասին (նոյն):

<sup>37</sup> Մօտկանի գաւառակի հայաբնակ գիտերի ցանկը Հայկական համառուր համբագիւրանի «Պիթլիս նահանգ» բայօղուածում, էջ 532:

<sup>38</sup> Առանց Խոյք-Բռնաշէնի:

<sup>39</sup> Տեւկանց, էջ 106-7:

<sup>40</sup> Գրիգորիս արքեպիսկոպոս Տարօնոյ, էջ 2:

<sup>41</sup> Ե. Ս., էջ 279-280. նաև՝ Էփրիկեան, էջ 365:

<sup>42</sup> Կոլիբակինի տուեալները նաև Մաեսկու աշխատութիւնում (Маевский, Всено-статистическое описание Ванского и Битлесского вилаетовъ. Отдѣльъ приложеній, էջ 105-6):

5. 1899. Մաեսկի՝ 15 հայաբնակ բնակավայր, 372 տուն - 2976 շունչ<sup>43</sup>.
6. 1909. Ա-Դօ՛ 19 հայաբնակ բնակավայր, 316 տուն - 2212 շունչ (տե՛ս նաև Աղիսակ 19)<sup>44</sup>.
7. 1913. Մշոյ առաջնորդարան (1913–14ի Հայոց պատրիարքարանի մարդահամար)՝ 27 հայաբնակ բնակավայր, 512 տուն - 5469 շունչ (տե՛ս նաև Աղիսակ 19)<sup>45</sup>:

Մօտկանի գալառակի եւ Սասունի այլ շրջանների համար մենք հնարատրութիւն ունենք համեմատելու 1913–14ի Հայոց պատրիարքարանի մարդահամարի տուեալները հայ ազգագրագէտ, ծնունդով սասունցի Վարդան Պետոյեանի կողմից պատրաստած գիլացուցակի տուեալների հետ: Հեղինակը իր վիճակագրութիւնը կազմել է՝ հիմք ընդունելով խնդրոյ առարկայ ժամանակաշրջանին վերաբերող տարրեր գրաւոր աղբիւների տուեալները, ինչպէս նաև Մեծ Եղեռնը վերապրած սասունցի հայերից քաղուած տեղեկութիւնները: Տուեալների քաղուատումը ցոյց է տալիս, որ երկու աղբիւներում առկայ է 21 բնակավայրի համընկնում, որոնցում ըստ Պետոյեանի կար 1110 տուն հայ բնակչութիւն (տե՛ս Աղիսակ 19)<sup>46</sup>:

Մեծ Եղեռնի նախօրեակին Մօտկանի գալառակի Մօտկանի շրջանի հայ բնակչութեան քուաքանակը որոշելու նպատակով որպէս հիմք ընդունում ենք 1913–14ի Հայոց պատրիարքարանի մարդահամարի տուեալները՝ լրացնելով

<sup>43</sup> Նոյն, էջ 103–4:

<sup>44</sup> Ա-Դօ՛ս որպէս իր տեղեկութիւնների աղբիւր նշում է Մշոյ առաջնորդարանը (Վանի, Պիրլիսի և Էրզրումի վիլայէքսէրը, էջ 97, 157):

<sup>45</sup> ՀԲԸ ՆՄԱ, APC/BNu, DOR 3/3, f. 60. նաև՝ Kévorkian/Paboudjian, էջ 477:

<sup>46</sup> Հաշուարկը մէկ կողմից՝ ըստ Պետոյեանի տուեալների (Վ. Պետոյեան, Սասունի քարրառը, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի հրատ., Երեւան, 1954, էջ 180–82). նաև՝ Պետոյեան, Սասունյա ազգագրութիւնը, էջ 12–13. նաև՝ Վ. Պետոյեան, Սասունի և Տարոմի պատմաաշխարհագրական տեղագրութիւնը, Լուսակն, Երեւան, 2005, էջ 59–61):

Պետոյեանի տուեալները որոշ գիլերի համար բարձր են Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամարի տուեալներից 8–10 անգամ: Հեղինակը նշում է, որ Մօտկանի շրջանի գիլերի վիճակագրական ուսումնափրութիւնը կատարել է Մօտկանում ապրուծ, ականատես եւ տեղեակ մարդկանց միջոցով, որոնք են Սղունդի գիլացի Բար Սիմոնեանը, Կրխուի գիլացի Խորայէլ Յովհաննիսեանը, որոնք 1947ին ապրում էին Աշտարակի շրջանի Ուշան գիլում (Պետոյեան, Սասունի և Տարոմի պատմաաշխարհագրական, էջ 98):

Սասունին, համեմատելով Ա-Դոյի եւ Պետոյեանի վիճակագրական տուեալները, գտնում է, որ Ա-Դոյի տուեալները «անշուշտ թերի» են, սակայն Պետոյեանի բուերն էլ չափազանցուած են. «Ինչ որ սպոյզ է, Մօտկանէն բաւականին մեծ թիւով սասունցիներ ազարուեցան 1916ին եւ այդ ազարուածներն ինքնին շատ աւելի թիւ մը կը կազմէին, քան Ա-Դոյի ներկայացուցած անշերու ամբողջ գումարը»՝ նշում է ուսումնափրուրը (Սասունի, Պատմութիւն Տարոմի աշխարհի, էջ 376):

պակասող բնակավայրը Թէոդիկի գիտացուցակից վերցուած տուեալներով<sup>47</sup>: Կատարուած հաշուարկը փաստում է, որ 1914ին Մօտկանի շրջանի մեր կողմից հաշուարկի մէջ ընդգրկուած 29 հայրնակ բնակավայրերն ունեին 537 տուն - 5669 շունչ հայ բնակչութիւն (կլորացուած թիւ՝ 540 տուն - 5670 շունչ):<sup>48</sup>

#### Աղիւսակ 19. Մօտկանի գաւառակի հայ բնակչութեան քուաքանակը Մեծ Եղեռնի նախօրեակին

№	Բնակավայր	1882 Առջագանք շաբաթաթերթ		1909 Ա-Գ-Օ	1913 Բաղէջի առաջնորդարան (1913-14ի Հայոց պատրիարքարանի մարդահամար)		1914 Պետոյեան	Մեր հաշուարկը	
		Տուն	Շունչ		Տուն	Շունչ		Տուն	Շունչ
1	Ասպենջեր Վերին	15	100		50	35	526	80	35
2	Ասպենջեր Ներքին	15	91						526
3	Բողնուտ	15	97	10	20	300	30	20	300
4	Բըրուտք	12	84	8	27	155	25	27	155
5	Գգեղ	14	106	14	15	130	60	15	130
6	Խուր	15	97	10	13	105	30	13	105
7	Կընծու	25	173	40	49	500	50	49	500
8	Կըրիսու	35	310	10	40	400	100	40	400
9	Կասապ	-	-	-	9	82	-	9	82
10	Կարք (Կառք)	6	42	6	9	84	10	9	84
11	Կոռ	-	-	-	4	30	-	4	30
12	Հաւու թաղի	9	70	10	13	55	15	13	55
13	Մարմանտ	-	-	-	3	11	-	3	11
14	Մեծձոր	3	21	3	-	-	-	10 <sup>49</sup>	80
15	Մերէ թաղի	4	26	10	7	73	10	7	73

<sup>47</sup> Թէոդիկ, Գողգորա հայ հոգեւորականութեան, էջ 89-90, 538-39:

<sup>48</sup> Գարայեանը, հիմուելով Պետոյեանի տուեալների վրայ, Մօտկանում (առանց Խոյք-Բոնաշէնի) հաշում է 42 հայրնակ բնակավայր՝ 1426 տուն - 11,408 շունչ հայ բնակչութեամբ (Karayan, Armenians in Ottoman Turkey, 1914, էջ 180-182):

№	Բնակավայր	1882 Արձագանք շաբաթաբերք		1909 Ա-Դ-Օ	1913 Բաղէջի առաջնորդարան (1913-14ի Հայոց պատրիարքարանի մարդահամար)		1914 Պետոյեան	Մեր հաշուարկը	
		Տուն	Ծունչ		Տուն	Տուն		Տուն	Ծունչ
16	Մըզուկ	12	84	20	16	188	30	16	188
17	Մըրցանք	5	35	5	5	50	25	5	50
18	Մըծի	16	109	25	30	300	120	30	300
19	Յարփի	15	99	15	30	400	100	30	400
20	Նիզ	11	96	15	25	200	-	25	200
21	Նիզ (այլ)	-	-	-	30	100	40	30	100
22	Շենիկ	40	292	20	50	500	60	50	500
23	Որձենք	8	60	15	10	90	15	10	90
24	Ջրկիզ	-	-	-	2	10	-	2	10
25	Ջրսու	-	-	-	-	-	30	15 <sup>50</sup>	120
26	Սլընտր (Սղունդ)	-	-	-	30	400	70	30	400
27	Ուրուս	-	-	-	6	100	10	6	100
28	Ուրուս (այլ)				7	80		7	80
29	Քաշախ	23	146	30	27	600	200	27	600
<b>Ընդամենը</b>		<b>298</b>	<b>2138</b>	<b>316</b>	<b>512</b>	<b>5469</b>	<b>1110</b>	<b>537</b>	<b>5669</b>

### 1.3(2). Խոյք-Բոնաշէնի գիւղախումբ

Խոյք-Բոնաշէնը վարչականօրէն պատկանում էր Մօտկանի գաւառակին, ինչի պատճառով 1878–1914ին վերաբերող օսմանեան և օսմանեանից սերուող աղբիւրները (Գիպպիոս, Ջինէ) որպէս կանոն չեն առանձնացնում Երկրամասի վիճակագրութիւնը գաւառակի ընդհանուր տուեալներից: Այլ է հայկական աղբիւրներում, որոնք կա՞մ ներկայացնում են շրջանի բնակչութիւնը առանձին, կա՞մ էլ ներառում են այն Սասունի գաւառակի կազմի մէջ:

<sup>49</sup> Ըստ Թէոդիկի տուեալի (Թէոդիկ, Գողգորա հայ հոգիւրականութեան, էջ 90):

<sup>50</sup> Ըստ Թէոդիկի տուեալի (նոյն):

ԺԹ. դարի երկրորդ կես-ի. դարասկզբի ժամանակաշրջանի համար համահաւաք գիտացուցակը պարունակում է Խոյք-Բռնաշենի շրջանում 36 հայաբնակ բնակավայրի անուն<sup>51</sup>, սակայն Մեծ Եղեռնի նախօրեակին վերաբերող առանձին վիճակագրական ցանկերում այդ թիւն աւելի ցածր է:

Խոյք-Բռնաշենի գաւառակի համար 1913ի Մշոյ թեմի վիճակացոյցի (Հայոց պատրիարքարանի 1913–14ի մարդահամար) ամբողջական գիտացուցակը պահպանուել է Թէոդիկի մօտ: Ըստ նշուած տուեալների՝ գաւառակում հաշուառուել էր 31 հայաբնակ բնակավայր 411 տուն հայ բնակչութեամբ (գիտացուցակը տե՛ս Աղիսակ 20)<sup>52</sup>:

1878–1914<sup>o</sup> Խոյք-Բռնաշենի հայ բնակչութեան թուաքանակի վերաբերեալ այլ աղբիւմերի կողմից հաղորդուող տուեալներն են.-

1. 1878. Տելկանց՝ 27 հայաբնակ բնակաբայր, 1824 շունչ հայ<sup>53</sup>.
2. 1880. Մշոյ առաջնորդարան-Գրիգորիս արքեպիսկոպոս Ալեարքեան՝ 27 հայաբնակ բնակավայր, 371 տուն - 3047 շունչ հայ (առանց գիտացուցակի)<sup>54</sup>.
3. 1890. Կողիւրակին՝ 14 հայաբնակ բնակավայր, 227 տուն հայ<sup>55</sup>.
4. 1899. Մաեսկի՝ 18 հայաբնակ բնակավայր, 608 տուն հայ<sup>56</sup>.
5. 1902. Մշոյ առաջնորդարան-Գեղամ Տէր-Կարապետեան՝ 30 հայաբնակ բնակավայր, 290 տուն (գիտացուցակը տե՛ս Աղիսակ 20)<sup>57</sup>.
6. 1909. Ա-Դօ՝ 21 հայաբնակ գիտ, 327 տուն - 2534 շունչ (տե՛ս նաև Աղիսակ 20)<sup>58</sup>.

<sup>51</sup> Հայկական համառող հանրագիտարան, էջ 532:

<sup>52</sup> Թէոդիկ, Գողգորա հայ հոգիորականութեան, էջ 88–89, 538:

<sup>53</sup> Տելկանց, էջ 68–69 (գիտացուցակ), 90 (համազումար տուեալ):

<sup>54</sup> Գրիգորիս արքեպիսկոպոս Տարօնյ, էջ 2:

<sup>55</sup> Կողիւրակինի տուեալները վերցրել ենք Մաեսկու աշխատութիւնից (Маевский, *Военно-статистическое описание Вансского и Битлусского вилаетовъ*, էջ 104–5):

<sup>56</sup> Նոյնը, էջ 103:

<sup>57</sup> Ծննդերի թիւը բացակայում է (ՀՅԴ Բոստոնի արխիտ, «Անձնական գրութիւններ, Տէր-Կարապետեան Գեղամ (Տատրակ) ֆոն», պահ 16, դ. 1, էջ 150–156):

<sup>58</sup> Ուստմնասիրողն իր տուեալները քաղել է Մուշի առաջնորդարանից (Ա-Դօ, Վանի, Պիրլիսի և Էրզրումի վիլայէրները, էջ 142 (գիտացուցակը), էջ 157 (նահանգի ամփոփիչ աղիսակ)): Ա-Դօյի տուեալներից օգտուել են Գեղրգեան/Փապուճեանը, որոնք Խոյք-Բռնաշենի համար հաղորդում են 21 հայաբնակ բնակավայր՝ 322 տուն և 2503 շունչ հայ բնակչութեամբ (Kévorkian, Paboudjian, էջ 496):

7. 1910. Սմբատ Բիթրաս՝ 4200 շունչ, որից Բոնաշէն՝ 1200, Խոյք՝ 3000 (առանց գիլացուցակի)<sup>59</sup>.
8. 1910. Սաֆրաստեան՝ 21 հայարնակ բնակավայր, 355 տուն հայ (տե՛ս նաև Աղիսակ 20)<sup>60</sup>.
9. 1914. Մարտիրոսեան՝ 29 հայարնակ բնակավայր, 490 տուն - 3765 շունչ (տե՛ս նաև Աղիսակ 20)<sup>61</sup>.
10. 1914, Պետոյեան՝ 28 հայարնակ բնակավայր, 588 տուն (տե՛ս նաև Աղիսակ 20)<sup>62</sup>:

Մեծ Եղեռնի նախօրեակին Խոյք-Բոնաշէնի շրջանի բնակչութեան բուարանակը որոշելով նպատակով հաշուարկ-ների հիմքում դրել ենք 1914ի Մարտիրոսեանի տուեալը, քանի որ այն վերաբերում է տուեալ ժամանակաշրջանին և պարունակում է ինչպէս տների, այնպէս էլ շնչերի թիւը: Մարտիրոսեանի գիլացուցակի տուեալները լրացուել են Թէոդիկի ցուցակում վկայուած բնակավայրերի տուեալներով: Քանի որ Թէոդիկի ցուցակում ներկայացուած է միայն տների թիւը՝ շնչերի թիւը որոշել ենք հաշուելով մեկ տան վրայ 8 շունչ:

Նշուած մեթոդով առանձնացուել է 1914ի դրուեամբ երկու սկզբնաղբիլներում վկայուած Խոյք-Բոնաշէնի 35 հայարնակ բնակավայր, որոնք ըստ կատարուած հաշուարկի ունեցել են 588 տուն - 4549 շունչ հայ բնակչութիւն, այդ բուս Խոյք՝ 20 հայարնակ բնակավայր, 397 տուն - 3047 շունչ, Բոնաշէն՝ 15 հայարնակ բնակավայր, 191 տուն - 1502 շունչ (տե՛ս Աղիսակ 20): Որպէս Մեծ Եղեռնի նախօրեակին Խոյք-Բոնաշէնի հայ բնակչութեան կլորացուած թիւ ընդունում ենք 590 տուն - 4550 շունչ:

<sup>59</sup> Սմբատ Բիթրաս (Տէր-Ղազարենց), *Եղլիլըզէ Սասուն, հյր. Գ., ա. հ., Կ.* Պոլիս, 1910, էջ 613:

<sup>60</sup> Տուեալների ամփոփումը մեր կողմից՝ ըստ հեղինակի ուղեւորագրական նօթերի (Սաֆրաստեան, «Խոյք-Բոնաշէն գաւառները», էջ 307-16):

<sup>61</sup> Մարտիրոսեան, «Համաեւրոպական պատերազմի ընթացքում ամայացած Արեւելեան Հայաստանի գաւառների վիճակագրութիւնը», *Վան-Տուսպ*, 1916, № 14, էջ 8:

<sup>62</sup> Հաշուարկը կատարուել է մեր կողմից՝ ըստ Պետոյեանի գիլացուցակի (Պետոյեան, *Սասնայ բարբառը*, էջ 173-75. նաև՝ Պետոյեան, *Սասնայ ազգագրութիւնը*, էջ 8-9): Հաշուարկից դուրս են բողնուել Սարենգոլէ, Ուշրափ, Օշակ և Կնուտ բնակավայրերը:

**Աղիսակ 20. Խոյք-Բռնաշենի հայ բնակչութեան բուաբանակը Մեծ Եղեռնի նախօրեակին**

№	Բնակավայր <sup>63</sup>	1902 Մուշի առաջ- նորդարան		1909 Ա-Գ-օ		1910 Սաֆ- րաստեան		1914 Պետոյեան		1914 Թէոդիկ		1914 Մարտիրոսեան		1914 մեր հաշուարկը	
		Տուն	Տուն	Տուն	Տուն	Տուն	Տուն	Տուն	Տուն	Տուն	Տուն	Տուն	Տուն	Տուն	
<i>Խոյք</i>															
1	Ազրակ	18	23	168		23	15	168	16	30	235		30	235	
2	Ասպրը (Խեներգս)	-	6	48		3	6	48	-	-	-		-	-	
3	Բարձրաղ (Պապրաղ)	4	-	-		-	-	-	7	24	154		24	154	
4	Գեղոնք (Գելօնք)	5	9	68		12	8	68	8	19	148		19	148	
5	Գոռ (Կոռ)	5	-	-		4	-	-	5	4	30		4	30	
6	Գործրվար	-	-	-		-	-	-	-	30	172		30	172	
7	Թաղավանք	28	26	269		35	26	269	25	82	649		82	649	
8	Թաղվածոր	3	8	47		9	18	-	6	18	121		18	121	
9	Թաղվու (Թաղ)	15	-	-		-	25	-	18	14	84		14	84	
10	Լորտնձոր	7	-	-		23	25	-	14	-	-		14	112	
11	Կոռ	-	8	48		-	-	-	-	8	48		8	48	
12	Հնդկունձոր (Հինդոր)	4	3	12		-	3	12	-	-	-		-	-	
13	Մզրէ (Մզրէ-շիգ)	-	-	-		-	60	-	8	-	-		8	64	
14	Շեն	30	35	280		28 <sup>64</sup>	28	280	35	35	280		35	280	
15	Շենիստ Ներքին	25	35	301		42	35	301	25	35	310		35	310	
16	Չալախ	2	-	-		-	-	-	7	-	-		7	56	
17	Ուարաք	-	8	101		8	-	-	-	6	72		6	72	
18	Սալապոս	3	-	-		-	-	-	5	-	-		5	40	
19	Փիճօնք	15	-	-		-	-	-	21	32	260		32	260	
20	Փիրիվանք	-	1	8		-	1	8	-	-	-		-	-	
21	Փղոնք	-	12	120		7	-	-	10	-	-		10	80	
22	Քէյվու	-	-	-		-	-	-	7	-	-		7	56	
23	Օխին (Եղան)	6	-	-		-	-	-	9	9	76		9	76	
<b>Ընդամենը Խոյք</b>		<b>170</b>	<b>174</b>	<b>1470</b>		<b>194</b>	<b>250</b>	-	<b>226</b>	<b>346</b>	<b>2639</b>		<b>397</b>	<b>3047</b>	

<sup>63</sup> Տեղանունների գրութեան ձեւն ըստ Թէոդիկի և Մարտիրոսեանի ցուցակների:

<sup>64</sup> 400 շունչ հայ:

Բռնաշէն												
1	Արուգ	8	6	47	4	6	47	13	-	-	13	104
2	Բլյիկ	3	-	-	4	10		6	-	-	6	48
3	Դաշտադէմ (Տաշտատեմ)	15	11	137	25 <sup>65</sup>	30	137	21	21	174	21	174
4	Դաշտամիրան	-	-	-	21 <sup>66</sup>	10	-	-	-	-	-	-
5	Եզիանք	-	-	-		60	-	-	-	-	-	-
6	Զօրավա	4	-	-	2 <sup>67</sup>	30		7	-	-	7	56
7	Ընկուզնակ (Ընկուզենի)	15	25	138	10	25	138	18	12	84	12	84
8	Կծանք	10	19	101	18	20	101	18	20	172	20	172
9	Կոստ	4	-	-	2 <sup>68</sup>	5		8	-	-	-	-
10	Մահպուպանք	2	-	-	2 <sup>70</sup>	60		5	-	-	5	40
11	Յարինոգ (Արինօր)	8	-	-	1 <sup>69</sup>	15	-	12	7	69	7	69
12	Շահվերտի	3	19	192	-	19	192	10	-	-	10	80
13	Շամիանք	2	-	-	13	30	-	-	5	38	5	38
14	Շամիանամզրէ	-	-	-	-	-	-	-	4	25	4	25
15	Շենխստ Վերին	10	5	24	-	5	24	15	15	108	15	108
16	Պլուկանք (Բլըլկան, Բըլօկան)	3	13	78	30	35	178	14	32	245	32	245
17	Պլուկանք Ներքին	7	-	-		-	-	6	-	-	6	48
18	Օդուտ (Յօշուտ)	26	38	211	35	38	211	32	28	211	28	211
	Ընդամենք Բռնաշէն	120	136	928	161	398	-	185	144	1126	191	1502
	Ընդհանուր գումար	290	310	2398	355	648	-	411	490	3765	588	4549

<sup>65</sup> Արդու Համիլի ուժիմի տարիներին գիտի բնակչների մի մասը փախել էր Վարդո գաւառակ: Արտագաղթածները 1910ի դրութեամբ դեռ սպասում էին քրդերի կողմից բռնագրաւուած իրենց տների և հողերի վերադարձան, որպէսզի վերադառնային իրենց հայրենի բնակավայր: «Իքա հետ մէկտեղ, ըստ Սաֆրաստեանի «1908-ին հայ ընդամենքների թիւր իջած էր մինչև 8ի, իսկ այժմ հասած է 25ի» (նոյն, էջ 309):

<sup>66</sup> Ըստ Սաֆրաստեանի՝ Դաշտամիրանը տարիներ առաջ դատարկուած է եղել հայ բնակչութիւնից և մինչև 1908 գրաւուած՝ Խարզանից եկած քրդերի կողմից, սակայն 1910ի դրութեամբ այնտեղ կար 20–21 տուն հայ՝ վերադարձած Բաղնոցի Քէոն Հիսույն փաշայի ծառայութիւնից (Սաֆրաստեան, «Խոյք-Բռնաշէն գաւառները», էջ 308):

<sup>67</sup> Ըստ Սաֆրաստեանի. «Նախապէս զուր հայարձնակ զիւղ 15 լրունով, սակայն վերջին պարիների ընթացքին մօլոկանցիներ [մօտկանից քրդեր - Ո. Թ.] գրաւած էին և դեռ կը մնան անդ» (նոյն, էջ 308):

<sup>68</sup> Ըստ Սաֆրաստեանի. «Էրքենն 25 լրունոր զուր հայարձնակ այժմ Սահմանադրութեան երրորդ դարուան մէջ անզամ քիւրդ գրաւած են զիւղը» (նոյն, էջ 311):

<sup>69</sup> Ըստ Սաֆրաստեանի 1910ի դրութեամբ զուտ քրդաբնակ զիւղ էր (նոյն, էջ 312):

<sup>70</sup> 1907ի դրութեամբ: 1910ին հեղինակը նշում է զիւղ վերադարձած ընտանիքների մասին առանց յստակեցնելու դրանց թիւը. «Բալլագի Սէլիմ և Նաւո եղբայրներ գրաւեցին զիւղը, և մինչև այսօր էլ կը դանչն վերադարձող հայ բնիկներին» (նոյն, էջ 310):

Այսպիսով, ըստ կատարուած հաշուարկների՝ Մեծ Եղեռնի նախօրեակին Մօտկանի գաւառակի հաշուառուած 64 հայաբնակ քնակավայրերն ունեցել են 1130 տուն - 10,220 շունչ հայ քնակչութիւն, որից Մօտկանի շրջան՝ 29 հայաբնակ քնակավայր, 540 տուն - 5670 շունչ, Խոյք-Բոնաշէնի շրջան՝ 35 հայաբնակ քնակավայր, 590 տուն - 4550 շունչ<sup>71</sup>:

#### 1.4. Խիզանի գաւառակ<sup>72</sup>

Մեր կողմից առանձնացուած սկզբնադրիւրները 1878–1914ի գաւառակի հայ քնակչութեան թուաքանակի վերաբերեալ հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները.-

1. 1878–80ի Հայոց պատրիարքարանի մարդահամար՝ 10,254 շունչ<sup>73</sup>.
2. 1880. Վանի առաջնորդարանի կողմից անգլիական հիւպատոս Քլայքոնին հաղորդուած տուեալ՝ 9989 շունչ<sup>74</sup>.
3. 1899. Մաեսկի՝ 1347 տուն - 10,776 շունչ հայ քնակչութիւն (տուեալներն ըստ գիտերի տե՛ս Աղիւակներ 21–24)<sup>75</sup>.
4. 1909. Ա.-Դօ՛ 78 հայաբնակ քնակավայր, 1518 տուն (այդ բում Խիզան՝ 489, Սպարկերտ՝ 533, Մամոտանը՝ 208 եւ Ստորին Կարկան՝ 288 տուն), 10,626 շունչ (տուեալներն ըստ գիտերի տե՛ս Աղիւակներ 21–24)<sup>76</sup>.
5. 1914. Աղթամարի կարողիկոսարան (1913–14ի Հայոց պատրիարքարանի մարդահամար)՝ 77 հայաբնակ քնակավայր, 1102 տուն - 8735 շունչ, այդ բում Խիզան՝ (Ընածորը ներառեալ) 28 հայաբնակ քնակավայր, 372

<sup>71</sup> Մօտկանի գաւառակի (Խոյք-Բոնաշէնը ներառեալ) հայ քնակչութեան թուաքանակի վերաբերեալ Քինէի տուեալն է (1891)՝ 5710 շունչ (Cuinet, էջ 568): 1914ին օսմանեան տուեալներով գաւառակում (նոյնպէս Խոյք-Բոնաշէնը ներառեալ) քնակում էր 4110 հայ (Karpat, էջ 174):

<sup>72</sup> Խիզանի գաւառակը կազմուած էր Խիզան, Սպարկերտ, Մամոտանը եւ Ստորին Կարկան գիտախմբերից: Աղթիրների մեծ մասը Ստորին Կարկանի վիճակագրութիւնը տալիս է Վերին Կարկանի հետ միասին Վանի նահանգի կազմում:

<sup>73</sup> ԳԱԹ, Թ. Ազատեանի ֆ. քաժին 3, գործ 57, թ. 6:

<sup>74</sup> Սասիս, Կ. Պոլիս, 9 (21) Հոկտեմբեր 1881, № 3012, էջ 2:

<sup>75</sup> Մաևսկիй, *Военно-статистическое описание Ванского и Битлесского вилаетовъ. Отдѣльный приложениій*, էջ 95–101: Հեղինակը նշում է, որ այդ տուեալ հաւաստի է համարում, քանի որ այն ստացել է տեղացի հայ քահանայից (նոյն, էջ 95): Համեմատութեան համար՝ Մաեսկու «Վանի նահանգը» աշխատութիւնում գաւառակի համար նշում է 1109 տուն հայ քնակչութիւն, որից Խիզան՝ 479, Մամոտանը՝ 127, Սպարկերտ՝ 503 տուն հայ (Վ.Т. Մաևսկի, *Ванский вилайетъ. Военно-статистическое описание*, Типъ. канцъ. Главноначальствъ. գражд. частюю на Кавказъ, Տիֆլիսъ, 1901, էջ 394–404):

<sup>76</sup> Ա.-Դօ՛ս տուեալները (միայն տների թիվը) քաղել է Աղթամարի կարողիկոսարանի տեղեկագրից. մեկ տան վրայ հաշուել է 7 շունչ (Ա.-Դօ՛, Վասի, Պիրլիսի և Էրզրումի վիլայէթները, էջ 91–95, 157):

տուն - 3175 շունչ, Սպարկերտ՝ 28 հայաբնակ քնակավայր, 374 տուն - 3000 շունչ, Մամոտանք՝ 10 հայաբնակ քնակավայր, 93 տուն - 625 շունչ, Ստորին Կարկառ՝ 10 հայաբնակ քնակավայր, 263 տուն - 1935 շունչ (տուեալներն ըստ գիտերի տե՛ս Աղիսակներ 21-24)<sup>77</sup>:

Վերոնշեալ տուեալներից դուրս, առանձին պէտք է յիշատակել երկու վիճակագրութիւն.- ա) Օրմանեանի՝ 1902ի վիճակագրութիւնը, ըստ որի Խիզանի Եկեղեցական թեմն ուներ 25,000 շունչ հայ քնակչութիւն<sup>78</sup>, բ) Հայոց պատրիարքարան-Ապահովութեան Յանձնաժողովի 1912ի վիճակագրութիւնը, որը գաւառակի համար հաղորդում է 28,500 շունչ հայ քնակչութիւն<sup>79</sup>: Աղբիւների ներկայ վիճակը հնարաւորութիւն չի տալիս միանշանակօրէն հաւաստել Օրմանեանի և Ապահովութեան Յանձնաժողովի տուեալների արժանահաւատութիւնը, քանի որ այդ տուեալների հիմքում ընկած գիտացուցակները մեզ դեռևս յայտնի չեն:

Ինչպէս՝ Պիթիսի գաւառի այլ շրջանների պարագայում, Խիզանի գաւառակի հայ քնակչութեան քուաքանակի վերաբերեալ Մեծ Եղեռնը վերապրածների վկայութիւններում պահպանուած տեղեկութիւնները եւս փաստում են, որ 1913-14ի Հայոց պատրիարքարանի մարդահամարի ընթացքում հայ քնակչութիւնը թերհաշուառուել է: Այսպէս, սպարկերտցի Թորոս Յովհաննիսեանի վկայութեան մէջ զետեղուած գիտացուցակի տուեալներով (տե՛ս Աղիսակ 22) Սպարկերտի և Նրգարի շրջանների 27 գիտերում կար 759 տուն հայ (տե՛ս նաև Աղիսակ 22)<sup>80</sup> (իսկ ըստ 1913-14ի Հայոց պատրիարքարանի տուեալով՝ 374 տուն հայ):

Մեծ Եղեռնի նախօրեակին վերաբերող ժամանակահատուածի համար գիտացուցակներ պարունակող վիճակագրական այլ աղբիւների բացակայութեան պայմաններում, Խիզանի գաւառակի հայ քնակչութեան թիւը որոշելու հարցում հիմք ենք ընդունում Աղքամարի կարողիկոսարանի 1914ի գիտացուցակի տուեալները 1102 տուն - 8735 շունչ: Հաշուի առնելով թերհաշուառումը, արդարացուած ենք գտնում այս տուեալն աւելացնել շուրջ 20%ով: Ըստ համապատասխան հաշուարկի արդիւնքի՝ Մեծ Եղեռնի նախօրեակին Խիզանի գաւառակի՝ հաշուարկի մէջ ընդ-

<sup>77</sup> Աղքամարի կարողիկոսարանի՝ 1913-14ի վիճակագրութեան տուեալներն ըստ Գեորգեան/Փապունեանի (Kévorkian, Paboudjian, էջ 475-77): Ստորին Կարկառի գիտերի վիճակագրութիւնը տե՛ս Ա-Դօ, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 քուականներին, տպարան «Լոյ», Երևան, 1917, էջ 27:

Թէողիկի գրքում զետեղուած՝ 1914ի Աղքամարի կարողիկոսարանի տեղեկագրի քուերը որոշ չափով տարրերում են. Մամոտանք՝ 15 հայաբնակ քնակավայր, 255 տուն - 1820 շունչ, Խիզան՝ 28 հայաբնակ քնակավայր, 407 տուն - 2746 շունչ, Սպարկերտ՝ 28 հայաբնակ քնակավայր, 356 տուն - 2770 շունչ: Ընդամենը (առանց Ստորին Կարկառի հայաբնակ քնակավայրերի) 1018 տուն - 7336 շունչ հայ (գիտացուցակը բացակայում է) (Գողգորա հայ հոգեւորականութիւն, էջ 38):

<sup>78</sup> Օրմանեան, Հայոց Եկեղեցին, էջ 262:

<sup>79</sup> Թէողիկ, Ամէնուն լրաբեցոյցը, էջ 261-62:

<sup>80</sup> Հայոց Յեղասպանութիւնը օսմաննեան Թուրքիայում, էջ 103:

գրկուած 77 հայաբնակ քնակավայրերում կար 1322 տուն - 10,482 շունչ, կլորացուած թի՛ 1320 տուն - 10,480 շունչ հայ քնակչութիւն<sup>81</sup>:

### Աղիւսակ 21. Խիզանի գիւղախմբի հայ քնակչութեան քուաքանակը Մեծ Եղեռնի նախօրեակին

№	Քնակավայր <sup>82</sup>	1899 Մաեսկի	1909 Աղքամարի կարողիկոսարան - Ա-Դ-Օ	1914 Աղքամարի կարողիկոսարան	
		Տուն	Տուն	Տուն	Շունչ
<i>Խիզանի շրջան</i>					
1	Անտեանց	14		42	- 8 60
2	Դարոնց	30		38	30 250
3	Խուի	12		9	10 65
4	Կարասու Ներքին	12		18	20 200
5	Կարասու Վերին	20		25	10 110
6	Հեղին	9		21	5 30
7	Հըրիք	50		36	25 200
8	Ծէն	30		18	35 <sup>83</sup> 300
9	Պրիւնս	15		34	15 150
10	Փալաստ	21		8	- -
<b>Ընդամենը</b>		<b>213</b>		<b>249</b>	<b>158 1365</b>

<sup>81</sup> Խիզանի գաւառակի հայ քնակչութեան քուաքանակի վերաբերեալ օսմանեան և օսմանեան տուեալների վրայ հիմնուող աղբիրները տալիս են հետեւեալ տուեալները.- Կոլիբակին (1890)՝ 1012 տուն հայ (Կոլյօբակին, էջ 158), Քինէ (1891)՝ 4304 շունչ (Cuinet, էջ 527), 1914ի օսմանեան տուեալներ՝ 5023 հայ (Karpat, էջ 174):

Գարայեանը, որպէս աղբիր նշելով Ա-Դոյի և Սասունու տուեալները, Խիզանի գաւառակում հաշտում է 62 հայաբնակ քնակավայր 1230 տուն - 8610 շունչ հայ քնակչութեամբ (Karayan, Armenians in Ottoman Turkey, 1914, էջ 186. նաև՝ Karayan, “An inquiry”, էջ 11, 30):

<sup>82</sup> Տեղանունների գրութեան ձեւն ըստ Ա-Դոյի Վաճի, Պիրլիսի և Էրզրումի վիլայեթները գրքի (էջ 93):

<sup>83</sup> Վերապրած Գրիգոր Ամիրիսանի վկայութեամբ՝ գիւղն ուներ 60 տուն և 447 շունչ հայ (Հայոց Յեղասպանութիւնը օսմանեան Թուրքիայում, էջ 101):

№	Քնակավայր	1899	1909	1914	
		Մաեսկի	Աղքամարի կաթողիկոսարան - Ա-Դ-օ	Տուն	Եռունչ
		Տուն	Տուն	Տուն	Եռունչ
<i>Ընաձորի շրջան</i>					
11	Ազոր	-	-	3	29
12	Աղեան	5	5	6	60
13	Անապատ	15	15	12	130
14	Բեսոյենց	-	-	10	80
15	Լի	12	12	7	55
16	Խածուս	10	10	7	50
17	Խարխոց	40	40	25 <sup>84</sup>	200
18	Խարկեւ	30	30	20	250
19	Կասր	-	-	3	15
20	Կատինօք	-	-	10	60
21	Հիւրջուկ	-	-	5	28
22	Մահմբատենը	8	8	14	87
23	Մանտենց	10	10	8	70
24	Նամ	8	8	8	60
25	Նորշէն	20	20	12	120
26	Պախոր (Վերին և Ստորին)	22	22	12	86
27	Պոշէնց	22	22	10	80
28	Սուրբ Խաչ-զիտ	23	23	13	100
29	Տի	28	28	29	250
<b>Ընդամենը</b>		<b>253</b>	<b>253</b>	<b>214</b>	<b>1810</b>
<b>Ընդհանուր գումար</b>		<b>466</b>	<b>466</b>	<b>372</b>	<b>3175</b>

<sup>84</sup> Վերապրած Աւետիս Տէր-Ներսիսեանի վկայութեամբ զիւղն ունէր 42 տուն իայ (Հայոց Յեղասպանութիւնը օսմանիան Թուրքիայում, էջ 90): Նա նաև նշում է, որ միայն 1915ի գաղրի ճանապարհին մահացել է զիւղի մօտ 200 քնակիչ, այսինքն նոյնան մարդ, ինչքան հաշուառութել է 191-14ի Հայոց պատրիարքարանի մարդահամարի ընթացքում (նոյն, էջ 92):

**Աղյուսակ 22. Սպարկերտի և Նըզարի հայ բնակչութեան քուարանակը Մեծ Եղեռնի նախօրեակին**

№	Բնակավայր <sup>85</sup>	1895 Աղքամարի կարողիկո- սարան <sup>86</sup>	1899 Մաեւսկի	1909 Աղքամարի կարողիկոսարան - Ա-Գ-Օ	1914 Աղքամարի կարողիկոսարան		1915 Ռւմբոյեան <sup>87</sup>	1915 Յովկաննիսեան <sup>88</sup>
		Տուն	Տուն	Տուն	Տուն	Շունչ		
1	Առնջիկ	20	21	20	8	90	9	25
2	Արեգին	5	-	-	4	32	5	12
3	Բաստ	60	38	60	20	185	-	60
4	Բերդակ	-	-	5	-	-	-	18
5	Դալարս	12	12	15	12	100	12	25
6	Դաշտ	12	12	13	10	90	10	20
7	Թաղ	12	10	8	4	20	7	15
8	Լուար	13	14	12	6	45	12	15
9	Խութ	10	9	9	7	70	11	20
10	Կեղիս	13	11	9	2	11	10	20
11	Կոտենց Ներքին	30	13	9	12	80	11	20
12	Կոտենց Վերին	40	38	37	40	350	35	40
13	Կուան	10	8	5	2	9	2	-
14	Հիւսպ	18	14	20	10	80	13	30
15	Հիւրուգ Վերին	45	36	40	35	325	40 (400 շունչ)	50
16	Հիւրուգ Ներքին	12	20	19	12	85	15	35
17	Զմէն (Մատաձմէն)	16	13	20	7	73	9	12
18	Շաժվան	30	40	50	35	300	45	50

<sup>85</sup> Տեղանունների գրութեան ձեւերն ըստ Ա-Գոյի Վաճի. Պիրլիսի և Էրգրուսի վիլայէրները զոքի (էջ 94):

<sup>86</sup> «Աղքամարայ հանգուցեալ Խաչատոր Կարողիկոսի վերջին թուղթն եւ տեղեկագիրը», էջ 245–46:

<sup>87</sup> Հայոց Յեղասպանութիւնը օսմանեան Թուրքիայում, էջ 96–97:

<sup>88</sup> Նոյն, էջ 103:

№	Բնակավայր	1895 Աղքամարի կարողիկո- սարան	1899 Մաեւսկի	1909 Աղքամարի կարողիկոսարան - Ա-Գ-օ	1914 Աղքամարի կարողիկոսարան		1915 Ումրոյեան	1915 Յովհաննիսեան
		Տուն	Տուն	Տուն	Տուն	Ծունչ		
19	Մատ	20	10		20	11	80	12
20	Յարգին		5	6		5	-	12
21	Ներքան		10	9		7	4	15
22	Պաղենց		20	24		20	120	20
23	Պատրանս		14	13		14	100	15
24	Սօրի		10	15		12	215	10
25	Ստամբող		-	5		-	-	-
26	Սօզանց		18	12		20	10	15
27	Սեւ քար		20	19		16	15	18
28	Տանձէս		10	8		8	7	15
29	Sount		20	21		19	16	40
30	Տաղուս		20	31		30	10	-
31	Օղանդ		13	15		11	13	11
<b>Ընդամենը</b>		<b>538</b>	<b>497</b>		<b>533</b>	<b>374</b>	<b>3000</b>	<b>370</b>
								<b>759</b>

Տառապահության մասին 11-րդ հայոց ազգային օրենսդրություն

սահմանադրություն

Հայոց պարտիական ժողովության պարտական օրենսդրություն

սահմանադրություն

Հայոց պարտիական ժողովության պարտական օրենսդրություն

սահմանադրություն

**Աղյուսակ 23. Մամուտանքի հայ բնակչութեան թուաքանակը Մեծ Եղեռնի նախօրեակին**

№	Բնակավայր <sup>89</sup>	1899 Մաեւսկի	1909 Աղքամարի կարողիկոսարան - Ա-Դ-Օ		1914 Աղքամարի կարողիկոսարան	
			Տուն	Տուն	Տուն	Ըունչ
1	Ապարանք	-		18	9	70
2	Աւնդանց	8		-	3	20
3	Գրանց	-		4	-	-
4	Գոմեր	-		6	-	-
5	Գուգենց	8		12	6	70
6	Կառնոց	26		15	11	75
7	Կօնիս	-		10	5	35
8	Հակուկ	14		-	-	-
9	Հարամուս	-		1	-	-
10	Հաւտանց	-		6	-	-
11	Միշա	-		11	6	40
12	Մուր	7		10	6	40
13	Յարուր	10		9	10	70
14	Նախանձ	-		1	-	-
15	Շեն-աղքիս	-		25	12	85
16	Պարկանց	-		10	3	10
17	Սեղ (Ծեղ)	31		40	22	110
18	Սուրբ Խաչ	12		-	-	-
19	Վանք	5		-	-	-
20	Օվ	6		30	-	-
<b>Ընդամենը</b>		<b>127</b>		<b>208</b>	<b>93</b>	<b>625</b>

**Աղիւսակ 24. Ստորին Կարկառի հայ բնակչութեան թուաքանակը Մեծ Եղեռնի նախօրեակին**

№	Բնակավայր <sup>90</sup>	1895ի Աղքամարի կարողիկոսարան <sup>91</sup>	1899 Մաեւսկի	1909 Աղքամարի կարողիկոսարան - Ա-Դ-Օ	1914 Աղքամարի կարողիկոսարան	
		Տուն	Տուն	Տուն	Տուն	Չունչ
1	Առղու	12	9		13	8 <sup>92</sup>
2	Բերդակ	13	27		33	25
3	Եղեգիս	60	50		65	56
4	Թացու	45	45		59	64
5	Խնձորուտ	25	27		13	20
6	Հալս	8	4		8	7
7	Հովկուրձու	18	11		15	9
8	Զկոր	13	10		13	17
9	Յարբենց	32	27		36	30
10	Որիզ	22	28		33	27
<b>Ընդամենը</b>		<b>248</b>	<b>238</b>		<b>288</b>	<b>263</b>
						<b>1935</b>

**Պիթլիսի գաւառի հայ բնակչութեան թուաքանակի հաշուարկի ամփոփում**

Այսպիսով, տարբեր վիճակագրական տուեալների համադրութեան եւ վերլուծութեան հիման վրայ մեր կողմից կատարուած հաշուարկը ցոյց է տալիս, որ Հայոց Ցեղասպանութեան նախօրեակին Պիթլիսի գաւառն ունեցել է մոտ 7770 տուն - 62,610 շունչ հայ բնակչութիւն, այդ թում Պիթլիսի գաւառակում՝ 3550 տուն - 25,710 շունչ, Խլարի գաւառակում՝ 1770 տուն - 16,200 շունչ, Մօտկանի գաւառակում՝ 1130 տուն - 10,220 շունչ և Խիզանի գաւառակում՝ 1320 տուն - 10,480 շունչ:

<sup>90</sup> Տեղանունների գրութեան ձեւն ըստ Ա-Դ-Օ-ի Մեծ դԷպքերը Վասպուրականում գրքի (էջ 27):

<sup>91</sup> «Աղքամարայ հանգուցեալ Խաչատոր Կարողիկոսի վերջին թուղթն եւ տեղեկագիրը», էջ 246:

<sup>92</sup> Առղու գիտից Մեծ Եղեռնը վերապրած Գէօզալի վկայութեամբ՝ բնակավայրն ունեցել է 33 տուն հայ բնակչութիւն (Հայոց Ցեղասպանութիւնը օսմանիան թուրքայում, էջ 85):

Ըստ Մաեսկու 1899ի վիճակագրութեան՝ Պիրլիսի գաւառում կար 1387 տուն - 11,096 շունչ քուրք և 8138 տուն - 65,104 շունչ քուրք ազգաբնակչութիւն: Ուստիմնասիրողի տուեալներով՝ Պիրլիսի գաւառում հայերի մասնարաժինն ընդհանուր ազգաբնակչութեան մէջ կազմում էր 40% (ըստ գաւառակների՝ Պիրլս՝ 40%, Խլաք՝ 45%, Մօտկան՝ 30% և Խիզան՝ 43%)<sup>93</sup>:

Ըստ ԱՄՆ Տեղեկատու Փորձագիտական Խմբի վիճակագրութեամ՝ 1914ին գաւառում կային 73,000 խլամադաւան (քուրք և քուրդ), 1000 եղին, 5000 ասորի, ինչպէս նաև 1000 շունչ այլ ազգութիւնների ներկայացուցիչներ: Հայերի մասնարաժինն ընդհանուր ազգաբնակչութեան մէջ 47% էր (ոչ-խլամադաւան այլ ազգութիւնների հետ միասին 51,6%)<sup>94</sup>:

1914ի օսմանեան վիճակագրական տուեալներով՝ գաւառի խլամադաւան ազգաբնակչութեան քիլը 72,977 էր, հայերի մասնարաժինն ընդհանուր ազգաբնակչութեան մէջ շուրջ 34% էր<sup>95</sup>:

Հիմք ընդունելով խլամադաւան այլ ազգութիւնների քուաքանակի վերաբերեալ վերոնշեալ սկզբնադրիբների հաղորդած տուեալները, ինչպէս նաև հայ քնակչութեան քուաքանակի մեր հաշուարկի արդինքները, գտնում ենք, որ Հայոց Յեղասպանութեան նախօրեակին՝ Պիրլիսի գաւառի ընդհանուր ազգաբնակչութեան քիլը մոտ 142,610 էր, որից 73,000՝ խլամադաւան, 62,610՝ հայ, 5000՝ ասորի ու քաղուացի, 1000՝ եղին, և 1000 շունչ այլ ազգաբնակչութիւն: Հայերը կազմում էին Պիրլիսի գաւառի ընդհանուր ազգաբնակչութեան մոտ 44%ը, իսկ քրիստոնեան ու այլակրօն (ոչ-խլամադաւան) այլ տարրերի հետ միասին՝ մոտ 49%ը: Պիրլիսի գաւառակում հայերի մասնարաժինն ընդհանուր ազգաբնակչութեան մէջ մոտ 40% էր, Խլաքի գաւառակում՝ մոտ 61%, Մօտկանի գաւառակում՝ մոտ 45% և Խիզանի գաւառակում՝ մոտ 47%:

<sup>93</sup> Маевский, *Военно-Статистическое описание Ванского и Битлусского вилаетовъ. Статистический очеркъ*, էջ 220–21:

<sup>94</sup> Zamir, էջ 104:

<sup>95</sup> Karpat, էջ 174–75:

## 2. ՄՈՒԾԻ ԳԱԼՎԱՆ

### 2.1. Մուշի գալառակ<sup>96</sup>

Պիրլիսի նահանգի այլ շրջանների համեմատ՝ 1878–1914՝ Մշոյ գալառակի հայ բնակչութեան քուաքանակի վերաբերեալ վիճակագրութիւնները բազմաթի են: Ստորև ներկայացնենք մեր կողմից առանձնուցուած սկզբնադրիւթների սուեալները:-

1. 1878. Տելկանց՝ 100 հայաբնակ բնակավայր - 41,172 շունչ (այդ բում Մուշ քաղաք 4630 շունչ)<sup>97</sup>.
2. 1880. Մշոյ առաջնորդարան-Գրիգորիս արքեպիսկոպոս Ալեքսեան՝ 94 հայաբնակ բնակավայր, 5509 տուն - 45,731 շունչ, այդ բում Մուշ քաղաք՝ 959 տուն - 6005 շունչ<sup>98</sup>.
3. 1899. Մաեսկի՝ 6760 տուն հայ, որից Մուշ քաղաք՝ 1200 տուն, Մուշի գալառակի հայաբնակ գիւղեր՝ 5560 տուն: Մէկ տան վրայ հաշուելով Մաեսկու ընդունած թիւը՝ 8 շունչ, գալառակի համար ստանում ենք 54,080 շունչ հայ բնակչութիւն<sup>99</sup>.
4. 1909. Ա-Դօ՝ 6780 տուն - 46,060 շունչ հայ բնակչութիւն, այդ բում Մուշ քաղաք՝ 1200 տուն - 7000 շունչ, դաշտի 102 հայաբնակ գիւղեր՝ 5580 տուն - 39,060 շունչ<sup>100</sup>.
5. 1910. Մաքատ Բիւրատ՝ 62,000 հայ, որից Մուշ քաղաք 12,000<sup>101</sup>:

1913ին և 1914ին Մուշի առաջնորդարանի կողմից պատրաստուել է գալառակի հայ բնակչութեան երկու վիճակագրական ցուցակ.-

<sup>96</sup> Առանց Վերին գալառի (Առաջաւորաց Սասուն) շրջանի գիւղերի:

<sup>97</sup> Տելկանց, էջ 46–54 (գիւղացուցակներ), 90 (համագումար թիւ): Նոյն վիճակագրութիւնը տե՛ս նաև Հին Մշեցի, «Տաճկական Հայաստան», Արքազանք, գրական և քաղաքական շարարտեր (Թիֆլիս), 1882, № 1, էջ 6–7, № 2, էջ 22–23, № 3, էջ 37–38:

<sup>98</sup> Գրիգորիս արքեպիսկոպոս Տարօնոյ, էջ 2:

<sup>99</sup> Մաևսկի, *Военно-статистическое описание Ванского и Битлисского вилаетовъ. Статистический очеркъ*, էջ 220, գիւղացուցակը տե՛ս Օմելյու որոշումը, էջ 110–7:

<sup>100</sup> Ա-Դօ, Վանի, Պիրլիսի և Էրզրումի վիլայեթները, էջ 157: Հեղինակը, որի տրամադրութեան տակ եղել է երկու վիճակագրական աղիսակ՝ մէկը քաղուած Մուշի առաջնորդարանի տեղեկագրից, իսկ միւսը՝ Մարտիրոսեանի կողմից նրան տրամադրած, իր հաշուարկների հիմքում դնում է Մարտիրոսեանի վիճակագրութիւնը (6580 տուն), քանի որ այն աւելի ամբողջական էր, սակայն նուազեցնում է նրա տուեալը շուրջ 15%-ով՝ այն հիմնաւորմամբ, որ «առաջին աղբիւրը (այսինքն առաջնորդարանի տուեալը - Ռ. Թ.), որն ասելի վարահելի է բում մեզ, մօդաւորապէն 15%-ով պակաս է, քան երկրորդ աղբիւրը, թէև առաջինում բոլոր գիւղերը չեն բերուած» (նոյն, էջ 107):

<sup>101</sup> Բիւրատ, էջ 613:

1. 1913ի ցուցակի տունալներ՝ 99 բնակավայր, 8437 տուն - 70,873 շունչ հայ, որից Մուշ քաղաքում՝ 1146 տուն (7435 շունչ)<sup>102</sup>.
2. 1914ի ցուցակ՝ 106 հայաբնակ բնակավայր 10,942 տուն - 96,882 շունչ հայ, այդ թում Մուշ քաղաք՝ 1200 տուն - 12,000 շունչ<sup>103</sup>:

1914ի համար նորացուած վիճակագրութիւն է պատրաստում և Մարտիրոսեանը, ըստ որի Մուշի զաւառակում իր կողմից հաշուառուած 110 հայաբնակ բնակավայրերն ունեին 9895 տուն - 86,029 շունչ հայ բնակչութիւն, այդ թում Մուշ քաղաք՝ 1376 տուն - 12,450 շունչ<sup>104</sup>:

Մեծ Եղեռնի նախօրեակին Մշոյ զաւառակի հայ բնակչութեան թիւը հաշուարկելու համար կիրառել ենք 1913–14ին կատարուած վերոնշեալ երեք ցուցակների տունալներից (Մշոյ առաջնորդարանի երկու ցուցակ, Մարտիրոսեանի տունալներ) միջին թիւը հանելու մեթոդ (տե՛ս Աղիսակ 25)<sup>105</sup>: Հաշուարկը ցոյց է տալիս, որ Մուշի զաւառակում կար 9555 տուն - 82,915 շունչ հայ, որից 10,628ը՝ Մուշ քաղաքում, իսկ 72,287ը՝ զաւառակի շուրջ 100 հայաբնակ գիտերում. կլորացուած թիւ՝ 9550 տուն - 82,910 շունչ, մեկ տասն ընկմող շնչերի միջին թիւ 8.7<sup>106</sup>:

<sup>102</sup> Հաշուարկը մեր կողմից՝ ըստ մարդահամարի գիտացուցակների (ՀԲԸՆ ՆՄԱ, APC/BNu, DOR 3/3, ff. 55-59): Նոյն տունալների հիման վրայ Գերգեան/Փապուճեանի հաշուարկը (ներառեալ Առաջատրաց Սասունի կամ Վերին Գաւառի գիտերը Սեմալ, Շենիկ, Գելիգուզան, Ալիանը) 103 բնակավայր, 9067 տուն - 75,623 շունչ (Kévorkian, Paboudjian, էջ 477, 479):

<sup>103</sup> Բղենաններ, էջ 84–90:

<sup>104</sup> Մարտիրոսեան, «Համաեւրոպական պատերազմի ընթացքում ամայացած Արեւելեան Հայաստանի զաւառների վիճակագրութիւնը», *Վաճ-Տոսպ*, 1916, № 12, էջ 8–9:

<sup>105</sup> Ցուցակից հանուել են այն բնակավայրերի անունները, որոնք վկայուած են միայն մեկ աղբիւրում:

<sup>106</sup> Մուշի զաւառակի հայ բնակչութեան թուարանակի համար Քիննի տունալը (1891) անհերեք ցածր է՝ 19,621 շունչ, որից 6700ը՝ Մուշ քաղաքում (էջ 576): 1914ի օսմանեան վիճակագրական տունալներով՝ զաւառակում բնակում եր 36,316 հայ (Karpat, էջ 174):

Զաւառակի համար Գարայեանի հաշուարկն է (ըստ Պետոյեանի տունալների)՝ 9311 տուն - 70,808 շունչ հայ բնակչութիւն (Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914*, էջ 186–192): Ուսումնասիրողի աւելի վաղ կատարած հաշուարկով (աղբիւր՝ Սասունի)՝ Մուշ քաղաք՝ 1300 տուն - 9000 շունչ հայ, Մուշի զաւառակի 105 հայաբնակ բնակավայրեր՝ 7555 տուն հայ (Karayan, “An inquiry”, էջ 11, 30):

**Աղյուսակ 25. Մուշի գաւառակի հայ բնակչութեան թուաքանակը Մեծ Եղեռնի նախօրեակին**

№	Բնակավայր	1913 Մշյ առաջնորդարան (1913–14ի Հայոց պատրիարքարանի մարդահամար)		1914 Մարտիրոսեան		1914ի Մշյ առաջնորդարան (Ս. և Մ. Բդէեան)		Մեր հաշուարկը	
		Տուն	Ըունչ	Տուն	Ըունչ	Տուն	Ըունչ	Տուն	Ըունչ
1	Մուշ քաղաք	1146	7435	1376	12,450	1200	12,000	1241	10,628
2	Ալատին	15	111	25	253	20	150	20	171
3	Ալիզլոն	55	503	65	560	120	600	80	554
4	Ալիզոնան	33	250	40	318	50	500	41	356
5	Ալիջան	112	1213	130	1420	120	1000	121	1211
6	Ալուարինջ	156	1250	165	1380	150	1200	157	1277
7	Աղբենիս	-	-	3	27	-	-	3	27
8	Աղջան	127	1522	220	1860	150	1200	166	1527
9	Ապղլպուհար	35	286	32	278	60	500	42	355
10	Առաքելոց վանք <sup>107</sup>	1	30	9	65	-	50	-	48
11	Առաղ	104	1005	103	797	140	1100	116	967
12	Առինջ	120	610	135	1185	120	1000	125	932
13	Առինջվանք	48	400	68	540	100	700	72	547
14	Առնիստ	79	708	70	600	80	1000	76	769
15	Արագ	24	203	30	200	30	300	28	234
16	Արգավանք	67	809	110	860	130	1000	102	890
17	Աւազորին (Խանողիսի)	32	350	42	336	60	450	45	379
18	Աւազորին (Չուխուրի)	100	805	97	672	140	1000	112	826
19	Աւզուտ	75	500	77	621	40	500	64	540
20	Աւան	210	2160	320	2870	280	2500	270	2510
21	Արտխօնք	24	178	75	560	80	550	60	429
22	Արտօնք	147	1470	147	1105	200	1500	165	1358
23	Բազմ	47	500	40	290	50	400	46	397
24	Բգլից	58	503	74	520	130	1000	87	674
25	Բերդակ	130	1154	145	1170	140	1200	138	1175
26	Բլել	26	200	22	154	20	250	23	201
27	Բնտխներ	16	140	16	143	25	220	19	168
28	Բոստարենտ	105	1200	112	977	120	1200	112	1126

<sup>107</sup> Առաքելոց-վանք Մզրէն ներառեալ:

№	Բնակավայր	1913 Մշոյ առաջնորդաբան (1913–14ի Հայոց պատրիարքարանի մարդահամար)		1914 Մարտիրոսեան		1914ի Մշոյ առաջնորդաբան (Ս. և Ա. Բղէեան)		Մեր հաշուարկը	
		Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ
29	Գառնի	123	860	125	1190	130	1000	126	1017
30	Գլաղաճ	157	1325	135	1450	140	1000	144	1258
31	Գոմեր	60	600	110	910	90	1200	87	903
32	Գոմս	108	700	120	944	120	1000	116	881
33	Գուարս	60	500	75	640	120	1200	85	780
34	Դպիսեն	15	150	12	72	17	100	15	107
35	Դնիկ	56	550	60	410	80	600	65	520
36	Դրմերստ	98	1000	90	872	150	1400	113	1091
37	Երիշտէր	83	855	95	1160	120	750	99	922
38	Զիարէք	180	2000	275	2480	180	1500	212	1993
39	Խիլ	52	500	65	545	80	800	66	615
40	Խրիզակ	65	500	70	724	80	800	72	675
41	Խաշխալտաղ	54	400	90	763	130	1000	91	721
42	Խասգիտ	340	4113	423	3776	540	5000	434	4296
43	Խարդոս	49	450	45	320	50	500	48	423
44	Խարծ	145	1360	155	1150	180	1500	160	1337
45	Խելյպեան	120	1200	122	1070	120	1000	121	1090
46	Խորսլոց	-	-	5	37	15	100	10	69
47	Խորեր	41	305	37	340	50	450	43	365
48	Խորոնք	23	160	33	236	30	250	29	215
49	Խոմեր	27	200	44	352	40	400	37	317
50	Ծղակ	45	409	50	356	50	400	48	388
51	Ծոգետ	31	210	30	210	30	300	30	240
52	Կեմիկ	9	90	10	82	10	100	10	91
53	Կուրափի	132	1050	140	1260	130	1000	134	1103
54	Հասամօվա	39	350	45	425	70	500	51	425
55	Հացիկ	28	300	35	271	50	500	38	357
56	Հաւատորիկ	165	1315	165	1420	157	2000	162	1578
57	Հերկերտ	37	300	45	340	40	350	41	330
58	Ջափնա	40	200	55	396	40	400	45	332
59	Ջսափի	61	500	75	630	80	700	72	610
60	Մառնիկ	36	360	35	281	80	600	50	414
61	Մատնավաճր	1	15	1	15	-	-	1	15
62	Մեղսի	30	380	42	385	60	500	44	422
63	Մկրագոմ	80	815	78	780	120	1000	93	865

64	Մալախտրան	6	50	-	-	-	-	6	50
65	Սոգոնք	67	379	79	577	65	600	70	519
66	Յարդերք	106	920	105	865	80	800	97	862
67	Յողոնք	90	620	120	980	90	900	100	833
68	Յունան	86	602	145	1320	150	1200	127	1041
69	Յուշտամ	32	305	40	310	50	400	41	338
70	Յօրկնոց	63	700	63	560	100	800	75	687
71	Նորակն	12	106	20	135	20	150	17	130
72	Նորշէն	400	2150	400	3318	400	4000	400	3156
73	Շեխան	101	1200	130	1270	180	1500	137	1323
74	Շեխուսուֆ	45	293	65	550	50	500	53	448
75	Շեյխարիմ	20	202	30	250	30	300	27	251
76	Շմակ	46	310	42	295	60	500	49	368
77	Պաղլու	44	310	45	415	80	700	56	475
78	Ջրիկ	80	800	85	680	120	800	95	760
79	Սահակ	2	7			4	30	3	19
80	Մնձնուտ	25	200	35	290	25	250	28	247
81	Սոխզոմ	113	1017	104	832	120	1000	112	950
82	Սորտար	56	400	68	630	80	650	68	560
83	Սուլուխ	132	1025	133	1120	160	1000	142	1048
84	Սուրբ Կարապետ	-	205	1	284	-	-	-	245
85	Սուրբ Յովհաննես	1	40	1	22	-	-	1	31
86	Վարդենիս	218	2150	189	1712	300	2000	236	1954
87	Վարդիսաղ	18	133	25	200	20	200	21	178
88	Տատրագոմ	-	-	22	145	15	100	19	123
89	Տափեկ	-	-	12	88	15	166	14	127
90	Տերենամք	96	850	90	660	107	900	98	803
91	Տերիկ	51	450	40	350	45	600	45	467
92	Տոմ	41	250	45	432	30	300	39	327
93	Յրօնք	240	2512	275	2560	320	3000	278	2691
94	Ուրուղ	80	480	135	1350	140	1200	118	1010
95	Փերար	58	377	52	365	80	1200	63	647
96	Փողեկով	53	300	75	560	80	600	69	487
97	Քարձոր	60	500	65	490	90	600	72	530
98	Քօլոսիկ	34	280	35	245	20	200	30	242
99	Քէօշք	8	57	-	-	15	100	12	79
100	Քրագոմ	150	1520	161	1388	180	1500	164	1469
101	Քիւրտմէյտան	45	336	64	510	40	350	50	399
<b>Ընդամենը</b>		<b>8361</b>	<b>71,553</b>	<b>9736</b>	<b>84,261</b>	<b>10,495</b>	<b>92,066</b>	<b>9555</b>	<b>82,915</b>

## 2.2. Սասունի գաւառակ<sup>108</sup>

Սասունը՝ որպէս երկրամաս, վիճակագրական առումով առաւել թիշ ուսումնասիրուած շրջաններից էր: Բացի թերհաշուառնանուոր հիմնական պատճառի՝ գլխահարկից խուսափելու նպատակով հայ բնակչութեան հաշուառումից խուսափելուց եւ սեփական թիւը ցածր ներկայացնելուց, Սասունի համար յատուկ էին այլ գործօններ եւս, ինչպէս՝ կոտորածների եւ հալածանքների հետեւանքով բնակչութեան բարձր շարժը, առանձին շրջանների՝ կառավարութեան ամուր վարչական վերահսկողութիւնից դուրս գտնուելը, աշխարհագրական դժուարամատչելի տեղանքը, ենթակառոյցների բացակայութիւնը եւն.: Վիճակագրական շփոթին իր նպաստն էր թերում նաև այն, որ օսմանեան կառավարութիւնը վարչական առումով մասնատել էր Սասունի երկրամասը Պիթլիսի նահանգի միքանի գաւառների միջեւ եւ մինչեւ 1890ականների վերջերը շարունակաբար վերածեւում էր վարչական սահմանները:

1895ին Արարու հանդէսում տպագրուած Սասունի մասին տեղագրական ակնարկի անանուն հեղինակը ամփոփում է երկրամասում վիճակագրութեան հաւաքման ուղղութեամբ առկայ դժուարութիւնները հետեւեալ տողերում. «...ի՞նչ վիճակագրութիւն էր պահանջում մի այնպիսի երկրի համար, որպէս այսօրուայ չէն գիտը վաղը ամայանում է եւ զազանների որջ դառնում, կամ այսօրուայ քրիստոնեայ գիտում վաղը-միւս օրը տեսնում էր միմիայն իւլամի զաւակներ...: Բացի այդ, ինչպէս վիճակագրել, երբ հայ ուսումնասիրողը ապահով չէ կասկածուր կառավարութեան հելքամրութիւններից, քիւրդ ասազակների անպարհի յափշտակութիւններից, կառավարութեան հայ եւ թիւրդ արքանեակների մարմութիւններից»<sup>109</sup>:

Վերոնշեալ բոլոր գործօնները յանգեցնում են այն բանին, որ աղբիւների տուեալների միջեւ տարբերութիւնը առանձին դէպքերում կարող է հասնել խոշոր շափերի, յատկապէս երբ խօսքը գնում է շնչերի հաշուարկի մասին:

Այս իրողութիւնները ստիպում են ուսումնասիրողին Սասունի գաւառակի հայերի բուաքանակը թիշ թէ շատ մօտաւորութեամբ պարզելու համար փորձել համեմատել երկրամասի հնարաւորինս մանր վարչական շրջանների, առանձին դէպքերում՝ նոյնիսկ գիտերի վիճակագրութիւնը՝ նշելով տուեալ վիճակագրութեան մէջ ընդգրկուած բնակավայրերի թիւը, քանի որ գիտացուցակները շատ դէպքերում թերի են:

<sup>108</sup> Գաւառակի կազմի մէջ ընդգրկում ենք Շատախի, Գաւառի (Բուն Սասուն, Ծովասարի գիտեր), Վերին Գաւառի կամ Առաջաւրաց Սասունի (վարչական առումով կցուած էին Մուշի գաւառակին, սակայն հայկական աղբիւների մէծ մասի կողմից ընդգրկում են Գաւառի շրջանի կազմում), Փանքի, Վերին Խարզանի (Խարզլող) եւ Հազզոյի շրջանները, ինչը մօտաւորապէս համապատասխանում է գաւառակի օսմանեան վարչական սահմաններին (ըստ Հայկական համառուր համարակի լուսաբանի «Պիթլիսի նահանգ» բառոյուածի, էջ 534):

<sup>109</sup> «Սասուն, նրա նկարագրութիւնը, բնակչները եւ նոցա բարը ու վարքը», Արարու, գրական իւ գեղարդուանդական պատկերագր հանդէս, զիրք Ա., Ս. Պետերբուրգ, 1894–1895, եօթերորդ տարի, էջ 67:

Սաստինի գաւառակի հայ բնակչութեան թուաքանակի վերաբերեալ հայկական աղբիւրները հաղորդում են հետևեալ տուեալները<sup>110</sup>.-

1. 1880. Մշոյ առաջնորդարան-Գրիգորիս արքեպիսկոպոս Ալէաքնեան՝ 36 հայաբնակ գիտ, 518 տուն - 5957 շունչ<sup>111</sup>.
2. 1904. Դրօշակ՝ 41 հայաբնակ գիտ, 920 տուն<sup>112</sup>.
3. 1909. Ա-Դօ՛ 50 հայաբնակ բնակավայր, 1351 տուն - 10,258 շունչ (բնակչութեան բաշխումն ըստ շրջանների տե՛ս Աղիւսակ 26)<sup>113</sup>.
4. 1910. Սմբատ Բիւրատ՝ 14,000 շունչ, այդ թում Շատախ՝ 2500, բուն Սաստին եւ Խարզան՝ 9000, Փսանք՝ 2500<sup>114</sup>.
5. 1913. Մշոյ թեմի վիճակացոյց (Հայոց պատրիարքարանի 1913-14ի մարդահամար)՝ 1134 տուն - 9519 շունչ (պատրիարքարանի ցուցակում Շատախի շրջանի գիտերի վերաբերեալ տուեալներն ընդհանրապէս բացակայում են, այլ շրջանների գիտացուցակները թերի են) (բնակչութեան բաշխումն ըստ շրջանների տե՛ս Աղիւսակ 26)<sup>115</sup>.

Ըստ Սահմանկու հաշուարկի՝ 1899ին Սաստինի գաւառակում կար 1700 տուն - 13,600-14,700 շունչ հայ բնակչութիւն<sup>116</sup>:

ինքը՝ 5580 տուն

<sup>110</sup> Հաշուարկը կատարուել է մեր կողմից ըստ աղբիւրների տուեալների:

<sup>111</sup> Բնակավայրերի ցանկը չի տրում: Վիճակագրութիւնը չի ընդգրկում Փսանքի, Հազզոյի եւ Վերին Խարզանի շրջանները, որոնք նշուած ժամանակաշրջանում գտնում էին Սղերդի գաւառի Հազզոյի գաւառակի կազմում (Գրիգորիս արքեպիսկոպոս Տարօնոյ, էջ 2):

<sup>112</sup> Այդ թում Շատախ՝ 10 բնակավայր, 297 տուն, Գաւառ՝ 4 բնակավայր, 310 տուն, Ծովասար (Գաւառ)՝ 11 բնակավայր, 113 տուն, Փսանք՝ 16 բնակավայր, 200 տուն («Սաստին. վիճակագրական» յօդուածը, Դրօշակ, Հայ Յնդակունիական Դաշնակցութեան օրգան, 1904:145-6(4-5), Ապրիլ-Մայիս, էջ 60-2. նաեւ՝ «Սաստին. վիճակագրութիւն», Տարօնի արձի. օրգան լրարօնական ոգու, 1941, թի 15, էջ 44-8):

<sup>113</sup> Ա-Դօ՛, Վանի, Պիրլիսի և Էրզրումի վիլայէրները, էջ 157 (Վերին Խարզանի վիճակագրութիւնը բացակայում է, այլ շրջանների գիտացուցակները թերի են):

<sup>114</sup> Սմբատ Բիւրատ, էջ 613:

<sup>115</sup> Հաշուարկը մեր կողմից՝ ըստ մարդահամարի գիտացուցակների (ՀԲԸ ՆՄԱ, APC/BNU, DOR 3/3, ff. 45-48, 59 (Վերին Գաւառի բնակավայրերը)): Գեղրգեան/Փապունեանը, օգտագործելով մարդահամարի ցուցակները, պակասող տուեալները լրացնում են ըստ Ա-Դոյի ցուցակի (Kévorkian, Paboudjian, էջ 492-96):

<sup>116</sup> Տների թիւը տե՛ս Մաևսկի, *Военно-статистическое описание Ванского и Битлусского вилаетовъ. Статистический очеркъ*, էջ 220, շնչերի թիւ՝ *Отдѣльъ приложеній*, էջ 133: Հեղինակը, նշում է որ իր տրամադրութեան տակ շունի Սաստինի գաւառակի գիտացուցակները, եւ այդ պատճառով բնակչութեան թիւը հաշուարկելու համար օգտագործում է Քինի տուեալները՝ աւելացնելով դրանք 10%-ով:

Մեծ Եղեռնի նախօրեակին Սասունի գալառակի հայ բնակչութեան քուաքանակի վերաբերեալ համեմատաքար աւելի ամբողջական եւ լիարժեք են Մարտիրոսեանի (հաւաքել է անձամբ, հրատարակել է 1916ին), Պետոյեանի (կազմել է վերապրած սասունցիների հարցման արդինքում ստացուած տուեալների հիման վրայ) եւ Սասունու (կազմել է Պետոյեանից եւ այլ աղբիրներից քաղուած տուեալների հիման վրայ) տուեալները:

1. 1914. Մարտիրոսեան՝ 84 հայաբնակ բնակավայր, 2614 տուն - 22,340 շունչ (քաշխումն ըստ շրջանների տե՛ս Աղիսակ 26)<sup>117</sup>.
2. 1914. Պետոյեան՝ 91 հայաբնակ բնակավայր, 1946 տուն հայ (քաշխումն ըստ շրջանների տե՛ս Աղիսակ 26)<sup>118</sup>.
3. 1914. Սասունի՝ 106 հայաբնակ բնակավայր, 2548 տուն - 14,738 շունչ (քաշխումն ըստ շրջանների տե՛ս Աղիսակ 26)<sup>119</sup>:

<sup>117</sup> Մարտիրոսեան, «Համաեւրոպական պատերազմի ընթացքում ամայացած Արևելեան Հայաստանի գալառների վիճակագրութիւնը», *Վան-Տուսպ*, 1916, № 13, էջ 6–7: Հաշուարկը կատարուել է մեր կողմից ըստ Մարտիրոսեանի գիտացուցակի տուեալների:

<sup>118</sup> Պետոյեան, *Սասունյ ազգագրութիւնը*, էջ 6–12: Հաշուարկը կատարուել է մեր կողմից՝ ըստ Պետոյեանի գիտացուցակների տուեալների:

<sup>119</sup> Հաշուարկը մեր կողմից՝ ըստ Սասունի, *Պատմութիւն Տարօնի աշխարհի*, էջ 371, 372, 379–83:

**Աղյուսակ 26.** Մեծ Եղեռնի նախօրեակին Սասունի գաւառակի հայ բնակչութեան թիւն ըստ տարրեր սկզբնադրիւրնեցի տուեալների

№	Ծրջան	1909 Ա-Դ-Օ		1913 Մշոյ առաջնորդարան (1913-14ի Հայոց պատրիարքարանի մարդահամար)		1914 Մարտիրոսեան		1914 Պետոյեան		Սասունի	
		Տուն	Չունչ	Տուն	Չունչ	Տուն	Չունչ	Տուն	Չունչ	Տուն	Չունչ
1	Շատախ	170	1880	-	-	280	2415	151	550	3526 <sup>120</sup>	
2	Վերին Գաւառ (Առաջարաց գիտեր)	474	3410	366	3160	535	5010	460	207	1800 <sup>121</sup>	
3	Գաւառ (Ծովասար)	190	1349	30	225	352	2917	270	307	1314	
4	Փսանք	300	2100	303	2597	515	4536	343	532	3880	
5	Վերին Խարզան (Խարբլջոն)	-	-	186	1,521	298	2492	346	952	4,218	
6	Հազզօ	217	1,519	260	2,016	634	4970	536			
	<b>Ընդամենը</b>	<b>1351</b>	<b>10,258</b>	<b>1145</b>	<b>9519</b>	<b>2614</b>	<b>22,340</b>	<b>2106</b>	<b>2548</b>	<b>14,738</b>	

Մեծ Եղեռնի նախօրեակին Սասունի գաւառակի հայ բնակչութեան թիւը հաշուարկելու նպատակով համադրել ենք 1913-14ի Հայոց պատրիարքարանի մարդահամարի, Մարտիրոսեանի, Պետոյեանի և Սասունու գիտացուցակների տուեալները՝ կիրառելով դրանցից միջին թիւ հանելու մեթոդը։ Յուցակում ընդգրկուել են միայն այն բնակավայրերի անունները, որոնց մասին տուեալներ են պահպանուել վերոնշեալ աղբիւրներից առնուազն երկուսում։

Ըստ կատարուած հաշուարկների՝ Մեծ Եղեռնի նախօրեակին Սասունի գաւառակի 96 հայարնակ բնակավայրեաւում կար 2317 տուն - 18,402 շունչ հայ բնակչութիւն։ Կլորացուած թիւ՝ 2320 տուն - 18,400 շունչ, այդ թում՝

1. Վերին Գաւառի շրջան (տե՛ս Աղյուսակ 27)՝ 6 բնակավայր, 512 տուն - 4675 շունչ հայ։
2. Շատախի շրջան (տե՛ս Աղյուսակ 28)՝ 7 հայարնակ բնակավայր, 294 տուն - 2144 շունչ հայ։

<sup>120</sup> Ներառեալ Վերին Գաւառի Մեծալ և Ծէնիկ գիտերը, բացառութեամբ Կելիէկուզանի։

<sup>121</sup> Միայն Կելիէկուզանը։

- Գաւառի (Ծովասարի) շրջան (տե՛ս Աղիսակ 29)՝ 12 հայաբնակ բնակավայր, 290 տուն - 2112 շունչ հայ.
- Փսանքի շրջան (տե՛ս Աղիսակ 30)՝ 29 հայաբնակ բնակավայր, 431 տուն - 3873 շունչ հայ.
- Վերին Խարզանի (Խարլոզի) շրջան (տե՛ս Աղիսակ 31)՝ 29 հայաբնակ բնակավայր, 328 տուն - 2283 շունչ հայ.
- Հազզոյի շրջան (տե՛ս Աղիսակ 32)՝ 13 հայաբնակ բնակավայր, 462 տուն - 3315 շունչ հայ<sup>122</sup>.

**Աղիսակ 27.** Սասունի գաւառակի Վերին Գաւառի շրջանի հայ բնակչութեան բուաքանակը Մեծ Եղեռնի նախօրեակին

№	Բնակավայր <sup>123</sup>	1913 Մշոյ առաջնորդարան (1913-14ի Հայոց պատրիարքարանի մարդահամար)		1914 Մարտիրոսեան		1914 Պետոյեան		1914 Սասունի		Մեր հաշուարկը	
		Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ
1	Ալեանք	72	566	80	760	-	-	-	-	76	663
2	Կէլիէկէնընան	-	-	25	210	10	-	-	-	18	144
3	Կէլիէկոզան <sup>124</sup>	143	1025	180	1570	250	3,500	207	1800	195	1974
4	Կէլիէմսուր (Մորլձոր)	-	-	30	280	40	-	-	-	35	280
5	Շէնիկ	70	690	90	810	80	635	100	654	85	697
6	Սէմալ	81	889	130	1380	80	602	120	798	103	917
<b>Ընդամենը</b>		<b>366</b>	<b>3170</b>	<b>535</b>	<b>5010</b>	<b>460</b>	<b>4737</b>	<b>427</b>	<b>3252</b>	<b>512</b>	<b>4675</b>

<sup>122</sup> Ըստ 1914ի օսմանեան վիճակագրական տուեալների՝ Սասունի գաւառակն ուներ 6505 հայ բնակիչ (Kargat, էջ 174): Գարայեանը, հիմնուելով Պետոյեանի տուեալների վրայ, Սասունի գաւառակում հաշտում է 23,809 շունչ հայ բնակչութիւն, այդ բում Բողկանի շրջանակում՝ 7221, Փսանքում՝ 6363, Խոյը-Բոնաշէնում՝ 6388, Տալտրիկում՝ 2008 և Շատախում՝ 1829 շունչ հայ (Karayan, Armenians in Ottoman Turkey, 1914, էջ 199-207):

<sup>123</sup> Բնակավայրերի անունների գրութեան ծեւն ըստ Մարտիրոսեանի (Մարտիրոսեան, «Համաեւրոպական պատերազմի ընթացքում ամայացած Արեւելեան Հայաստանի գաւառների վիճակագրութիւնը», Վան-Տուսպ, 1916, № 13, էջ 6-7):

<sup>124</sup> Իր բաղերով:

**Աղիւսակ 28.** Սաստինի գաւառակի Շատախի շրջանի հայ բնակչութեան քուաքանակը Մեծ Եղեռնի նախօրեակին

№	Բնակավայր <sup>125</sup>	1914	1914		1914		1914		Մեր	
		Թէոդիկ <sup>126</sup>	Տուն	Տուն	Ծունչ	Տուն	Ծունչ	Տուն	Ծունչ	Տուն
1	Գեղաշեն	44	45	330	31	289	65	392	51	337
2	Երիցանը	17	20	180	13	95	25	134	21	136
3	Զայնորմեր	-	-	-	25	210	-	-	25	210
4	Կեարմատ	46	65	580	-	-	65	395	59	488
5	Շուշնամերկ	32	35	310	30	245	40	286	36	280
6	Տափիկ	34	35	290	25	200	35	240	35	243
7	Քոփ	52	80	725	27	196	70	429	67	450
<b>Ընդամենը</b>		<b>225</b>	<b>280</b>	<b>2415</b>	<b>151</b>	<b>1235</b>	<b>300</b>	<b>1876</b>	<b>294</b>	<b>2144</b>

<sup>125</sup> Բնակավայրերի անունների գրութեան ձեւն ըստ Մարտիրոսեանի (Մարտիրոսեան, «Համաեւրոպական պատերազմի ընթացքում աճայացած Արեւելեան Հայաստանի գաւառների վիճակագրութիւնը», *Վան-Տուսպ*, 1916, № 13, էջ 6–7):

<sup>126</sup> Թէոդիկ, Գողգորա հայ հոգիւրականութիւն, էջ 96, 540:

**Աղիսակ 29.** Սասունի գաւառակի Գաւառի (Ծովասարի) շրջանի հայ բնակչութեան թուաքանակը Մեծ Եղեռնի նախօրեակին

№	Բնակավայր <sup>127</sup>	1913 Մշոյ առաջնորդարան (1913-14ի Հայոց պատրիարքարանի մարդահամար)		1914 Մարտիրոսեան		1914 Պետոյեան		1914 Սասունի		Մեր հաշուարկը	
		Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ
1	Աղբի <sup>128</sup>	118 <sup>129</sup>	-	150	1,250	137	835	124	635	132	906
2	Աղբիկ	-	-	15	110	15	80	15	80	15	90
3	Բոզրկան	2	12	3	25	2	-	3	15	3	17
